| 3 | Շաքարաջուր | Որոտան | 28 | 2-4 | 0,3-0,5 | 1,7 | ոչ պիտանի |
| 4 | Տաթև | Որոտան | 5 | | 0,3-0,5 | 1,2 | ոչ պիտանի |

## Բաժին 2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԻԿԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

### 2.1. Անտառի կատեգորիաներ

Սյունիքի անտառտնտեսության կառավարման պլանի պատրաստման աշխատանքները իրականացվել են համաձայն սույն ծրագրի տեխնիկական առաջադրանքի՝ հիմք ընդունելով ՀՀ Անտառային օրենսգիրքը (2005) և Անտառային տնտեսությունների կառավարման պլանների պատրաստման հրահանգը, համաձայն որոնց Հայաստանի Հանրապետությունում անտառներն ըստ նպատակային նշանակության դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝

Պաշտպանական նշանակության անտառներ, որոնք են.

- ջրային օբյեկտների ջրապահպան գոտիների անտառները,
- բարձր թեքության (30°-ից ավել) վրա գտնվող անտառները,
- անտառների վերին և ստորին սահմանների 200մ լայնությամբ շերտը,
- բուսաբանական, կենդանաբանական այգիների, դենդրոպարկերի շրջակա անտառները՝ 100 մետր շառավղով,
- կիսաանապատային, տափաստանային, անտառտափաստանային գոտիներում աճող անտառները:

Հատուկ նշանակության անտառներ, որոնք են.

- Բնության հատուկ պահպանվող տարածքներում ընդգրկված անտառները,
- Քաղաքային և քաղաքամերձ անտառները,
- Ռեկրեացիոն և առողջարարական անտառները,
- Սահմանային, ռազմական նշանակության անտառները,
- Պատմական և գիտական արժեք ներկայացնող անտառները,
- Սանիտարական գոտիները պահպանող անտառները:

Արտադրական նշանակության անտառներ, որոնք են

- բնափայտի շարունակական արտադրությունն ապահովող անտառները, որոնք չեն դասվում հատուկ և պաշտպանական նշանակության անտառների շարքին:

### 2.2. Անտառների գնահատման մեթոդը

Անտառների ընդհանուր գույքագրումն իրականացվել է համաձայն Հայաստանի անտառներում անտառշինության և անտառակառավարման պլանների մշակման հրահանգի, ընտրելով աչքաչափային-չափողական մեթոդը, որը հիմնված է բնականում անտառի աչքաչափային, ընտրողական չափողական և հաշվարկային գնահատման մեթոդների համատեղման վրա, իսկ միջոցառումներ նախատեսվող հատվածներում կիրառվել է հաշվարկային մեթոդը՝ հիմնական շառավղով շրջանաձև հրապարակների տեղադրմամբ:

Անտառի գնահատման բոլոր ցուցանիշները գրանցվել են գնահատման քարտում, որը հանդիսացել է հիմնական դաշտային փաստաթուղթը, ընդ որում այն լրացվել է գնահատման յուրաքանչյուր անտառային հատվածի համար:

Լանջերի բաժանումն ըստ թեքության աստիճանի կատարվել է համաձայն լեռնային պայմաններում հատումների կատարման գործող կանոնների:

Լանջերն ըստ թեքության բաժանվում են հարթ՝ մինչև 10° թեթև զառիվայր, 11-20° զառիվայր, 21-30°, կտրուկ զառիվայր, 30°-ից բարձր խիստ կտրուկ զառիվայր:

Շարահարկերի բաժանումը կատարվել է հետևյալ պայմաններում.

1. յուրաքանչյուր շարահարկի լրիվություն պետք է լինի ոչ պակաս 0,3,
2. շարահարկների միջին բարձրության տարբերությունը պետք է կազմի ոչ պակաս 20%,
3. շարահարկի միջին բարձրությունը կազմում է վերին շարահարկի բարձրության ոչ պակաս 1/4-ը:

Պարզ ծառուտներում տեսակային կազմը կամ բարդ ծառուտներում շարահարկը որոշվում է տոկոսային հարաբերությամբ անտառկազմող տեսակի պաշարից (անտառի էլեմենտ) և գրանցվում է ֆորմուլայով, որտեղ բերվում են յուրաքանչյուր ծառատեսակի կրճատ նշանակումը և յուրաքանչյուրի մասնակցության բաժինը ծառուտի կազմում՝ արտահայտված գործակցի տեսքով (ամբողջ թվով), որում յուրաքանչյուր միավորը համապատասխանում է 10% մասնակցության չափի ընդհանուր պաշարում:

Ծառատեսակը, որի պաշարը կազմում է մինչև 2-5% ծառուտի ընդհանուր պաշարից (շարահարկ), գրվում է ֆորմուլայի կազմում «+» նշանով:

Միջին տարիքը որոշվել է անտառկազմող յուրաքանչյուր տեսակի համար և գրանցվել գնահատման քարտերում:

Բոնիտետային դասը որոշվել է միջին տարիքով և միջին բարձրությամբ անտառի հիմնական էլեմենտի համար (շարահարկ):

Լրիվությունը որոշվել է առանձին ծառուտի ամեն շարահարկի համար՝ ծառերի տրամագծերի ընդլայնական կտրվածքների ընդհանուր մակերեսների գումարով, կամ շրջանաձև հրապարակներում ծառերի հաշվառման ճանապարհով կամ էլ ժապավենային հաշվառումով:

Բնափայտի 1հա-ի պաշարը որոշվել է անտառի գնահատման ժամանակ ծառուտների առանձին շարահարկերի համար տարածաշրջանի համար ընտրված ծավալային աղյուսակներով:

Անտառի բնական վերաճի նկարագրության համար նշվել են. տեսակային կազմը՝ կենսունակ նմուշների ընդհանուր քանակի համեմատությամբ, տարիքը (միջին), միջին բարձրությունը, նմուշների քանակը՝ հազար հատ 1հա-ի հաշվով:

Ենթանտառի նկարագրության ժամանակ նշվել են թփերի հիմնական տեսակները և նրանց խտության աստիճանը: Խտության աստիճանը որոշելու համար օգտագործում են հետևյալ չափանիշները՝ խիտ (տարածքի 50%-ից ավել ծածկված), միջին խտության (10-49% ծածկված) և նոսր (10%-ից պակաս):

Ճանապարհային հասանելիությունը նշվել է յուրաքանչյուր հատվածի համար: Մատչելի համարվում է հատվածը, եթե նրանով անցնում է ճանապարհը կամ

հատվածի սահմանից մինչև ճանապարհը պակաս է 200մ-ից: Գոյություն ունեցող բոլոր ճանապարհները պատկերվել են անտառային քարտեզներում:

Հատվածները հաջորդաբար համարակալվել են արաբական թվանշաններով՝ քառակուսու հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք:

## 2.3. Անտառտնտեսության հողերի դասակարգում

Հողատեսքերի գույքագրման և գնահատման ժամանակ հիմք է ընդունվել անտառշինության և անտառակառավարման պլանների պատրաստման հրահանգով սահմանված հետևյալ դասակարգումը.

1. *Անտառային հողեր* - անտառապատ, կենդանական և բուսական աշխարհի պահպանման, բնության պահպանության, ինչպես նաև անտառով չծածկված, բայց անտառային տնտեսության կարիքների համար տրամադրված կամ նախատեսված հողեր: Անտառային հողերին պատկանում են.

- անտառածածկ հողերը,
- ոչ անտառածածկ հողերը,
- չմիակցված սաղարթով անտառամշակույթները,
- անտառային տնկարանները և պլանտացիաները:

2. *Անտառածածկ տարածքներին վերագրվում են.*

- 0,4 և բարձր լրիվությամբ երիտասարդ տարիքային խմբի ծառուտները,
- մնացած տարիքային խմբերի 0,3 և բարձր լրիվության ծառուտները,
- թփերով պատված հողատեսքերը, որոնցում առանց հատուկ անտառմելիորատիվ աշխատանքների հնարավոր չէ հիմնել անտառ:

3. *Ոչ անտառածածկ անտառային հողերին պատկանում են.*

- հատված տարածքները,
- անտառվերականգնման համատարած հատման հատատեղերը,
- բացատներ - որտեղ բացակայում կամ առկա են առանձին ծառեր,
- նոսրուտներ - 0,1-0,2 լրիվության ծառուտները (բացի երիտասարդ խումբը),
- հրդեհված - անտառի հատված մինչև աճի դադարեցման աստիճան վնասված,
- մահացած ծառուտներ - անտառամասեր ֆիտո և էնտո ներգործությունից, արտադրական արտանետումներից, ռեկրեացիոն բեռնվածության և այլ գործոնների ազդեցությունից արմատի վրա չորացած, մահացած ծառուտներ, ինչպես նաև համատարած քամատապալ և ձնետապալ անտառամասերը:

Գնահատման ժամանակ առանձնացվում են ոչ անտառային հողերի հետևյալ կատեգորիաները.

- գյուղատնտեսական հողահանդակներ և հատուկ նպատակային նշանակության հողեր, վարելահող, խոտհարքներ, արոտավայրեր, այգիներ, պտղատու տնկարաններ, անտառային ճանապարհներ, անտառուղիներ և հակահրդեհային ճեղքեր, էլեկրահաղորդակցության, հեռախոսակապի գծեր, բնակատեղեր, ավազահանքեր, մելորատիվ առուներ և այլն,

- հողեր, որոնք առանց հատուկ մելորատիվ միջոցառումների պիտանի չեն անտառաճեցման համար,
- ժայռեր, քարացրոններ, ճահճուտներ, ոչ անտառածածկ թեք լանջեր և այլն:

**Աղյուսակ 5. Գնահատման հատվածների նվազագույն մակերեսը**

| № | Հողատեսքեր | Մակերեսը, հա |
|---|---|---|
| 1 | Ստուգման ժամանակաշրջանի անտառմշակույթներ | 0,1 |
| 2 | Բնական ծառուտներ | 0,3 |
| 3 | Ոչ անտառածածկ տարածքներ | 0,3 |
| 4 | Անտառսերմնային բազաներ | 0,1 |
| 5 | Բնության և մշակութային ժառանգության արժեքավոր օբյեկտներ | 0,1 |
| 6 | Վարելահողեր, այգիներ, ավազուտներ | 0,1 |
| 7 | Խոտհարք, արոտավայր | 0,3 |

## 2.4. Գույքագրման տվյալների ծրագրային ապահովում

Անտառտնտեսության դաշտային գույքագրման արդյունքները ենթարկվել են Forest Book համակարգչային ծրագրային մշակման, որում տարածաշրջանային անտառաճման պայմաններին համապատասխանեցնելու նպատակով՝ կատարելագործված և ավելացված են նոր մակետներ, ինչպիսիք են՝ ֆլորայի բնութագիրը, մարդածին ձնախախտումը, հողի բնութագիրը, ճանապարհներով ապահովվածությունը և այլն, որից և փոփոխվել է տվյալների բազայի կառուցվածքը, և որ շատ կարևոր է, մշակվել է կապ երկրատեղեկատվական համակարգի (GIS) հետ:

Քարտեզագրական նյութերը համակարգչով մշակվել են՝ օգտագործելով ArcGIS ծրագրային ապահովումը, որը հնարավորություն է ընձեռնում դաշտային գույքագրման նյութերի վրա ստեղծելու բազմանպատակային ԵՏՀ տվյալների բազա, որից և պատրաստվել են թեմատիկ քարտեզները: Ստեղծված թվայնացված հատվածային քարտեզագրական բազան լրացվում է տեղեկատվությամբ՝ թեմատիկ քարտեզների համար հատվածների բնութագրերի հետ ինչպես EXCEL-ի աղյուսակների կցման ճանապարհով, այնպես էլ Forest Book ծրագրային ապահովման բազայից անմիջապես ArcGIS տվյալների բազա ինֆորմացիայի փոխանցմամբ: Ընդ որում, թեմատիկ քարտեզներ հնարավոր է կազմել ցանկացած ցուցանիշի համար, որը առկա է անտառային հատվածային բնութագրերի բազայում:

Հատվածների մակերեսները ներմուծվել են գնահատման քարտերի մեջ քարտեզագրական նյութերի թվայնացումից և ArcGIS բազայից համակարգչով հատվածների մակերեսների (կլորացված մինչև տասնորդական) որոշումից հետո:

Տվյալների քարտեզագրական բազան ունի հատվածային բնութագիր, որը հնարավորություն է ընձեռնել պատրաստել թեմատիկ քարտեզներ:

## 2.5. Քարտեզագրական աշխատանքներ

Սյունիքի անտառտնտեսության անտառների քարտեզագրման համար հիմք են հանդիսացել.

- Սյունիքի անտառտնտեսության 2007թ. անտառշինության քարտեզագրական նյութերը,
- 1:10000 մասշտաբի տեղագրական քարտեզները,
- ծրագրի տարածքի արբանյակային պատկերները,
- համայնքների հատակագծերն ու կադաստրային վերջին քարտեզները:

Վերը նշված նյութերը տեղափոխվել են երկրատեղեկատվական համակարգ: Կատարվել է քարտեզների և պլանշետների թվայնացում և դրանց գրանցում աշխարհագրական կոորդինատային ցանցում:

Համայնքների հատակագծերից, կադաստրային քարտեզներից և 2007թ անտառշինական պլան-քարտեզներից վերցվել են անտառային տարածքների ուրվագծերը: Տեղագրական քարտեզներց վերցվել են գետային և ճանապարհային ցանցերը, բնակավայրերը, իզոգիծերը (հորիզոնականներ) և այլ տվյալներ, որոնց միջոցով ճշտվել է անտառային տարածքների որոշ սահմաններ, օրինակ՝ քառակուսիների միջև սահմանները, որոնք անցնում են գետերով կամ ջրաբաժաններով:

Արբանյակային հանույթների օգնությամբ կատարվել է անտառային տարածքի նախնական բաժանում՝ ըստ հատվածների: Ճշտվել են նաև ճանապարհային և գետային ցանցի որոշ տվյալներ, ինչպես նաև անտառային տարածքի արտաքին և ներքին սահմանները:

Համայնքների վարչական տարածքներում անտառային հողերի գույքագրման և գնահատման արդյունքներով բացահայտվել են համայնքների կադաստրային քարտեզներում անտառային հողատեսքերի անճշտությունները, որոնք կազմակերպության կողմից քարտեզագրվել և համաձայնեցվել են համապատասխան համայնքների հետ:

## 2.6. Արբանյակային պատկերներ

Աշխատանքների իրականացման համար ձեռք են բերվել արբանյակային նկարներ: Օգտագործվել են 0,5մ լուծաչափի պանխրոմատիկ և 2մ լուծաչափի բազմասպեկտրային Jilian-1 (JL1KF01A) արբանյակային պատկերներ (ամպամածությունը 10% -ից ցածր, նկարահանման նադիրային անկյունը 30°-ից ցածր, նախնական մշակվածության 1A մակարդակում) ինչպես նաև ArcGIS Basemap WorldImagery առցանց բաց աղբյուրի արբանյակային նկարները (Աղյուսակ 6):

**Աղյուսակ 6. Արբանյակային պատկերների տեսակը և պատկերներով ապահոված մակերեսը**

| Անտառպետության անվանումը | Արբանյակային պատկերի տեսակը և որակը | Մակերեսը, հա |
|---|---|---|
| Գորիսի | Jilian-1 (JL1KF01A) 0,5մ պանխրոմատիկ<br>Jilian-1 (JL1KF01A) 2մ բազմասպեկտրային<br>Բաց աղբյուր, ArcGis Basemap DigitalGlobe 1մ | 19846 |
| Շուռնուխի | Jilian-1 (JL1KF01A) 0,5մ պանխրոմատիկ<br>Jilian-1 (JL1KF01A) 2մ բազմասպեկտրային<br>Բաց աղբյուր, ArcGis Basemap DigitalGlobe 1մ | 8951 |

## 2.7. Քառակուսիների տեղաբաշխման սխեմա

Անտառտնտեսության տարածքի բաժանումը քառակուսիների կատարվել է հաշվի առնելով տեղանքի աշխարհագրական տարրերը՝ գետեր, ճանապարհներ և այլ գործոններ: Անտառտնտեսության տարածքը բաժանվել է 103 քառակուսիների, ամենափոքր քառակուսու մակերեսը 11հա է (Շուռնուխի անտառպետություն, քառակուսի 35), իսկ ամենամեծը Գորիսի անտառպետությունում՝ 666 հա (քառակուսի 59): Միջին մակերեսը 131,2հա: Անտառի գնահատման հատվածների ընդհանուր քանակությունը 4064 է, հատվածների միջին մակերեսը՝ 3,3հա: Նախորդ կառավարման պլանի համեմատ քառակուսիների քանակը նվազել է 26-ով (անտառտնտեսության կազմից Արծվանիկի անտառպետության դուրս գալու հետևանքով), սակայն հատվածների ընդհանուր թիվն ավելացել է 1924-ով (Աղյուսակ 7, քարտեզ 5):

**Աղյուսակ 7. Անտառտնտեսության կազմակերպման հիմնական տարրերը**

| Անտառպետության անվանումը | Տարին | Մակերեսը, հա | Քառակուսիների քանակը, հատ | Քառակուսիների մակերեսը,հա | | | Հատվածների քանակը, հատ | Հատվածի միջին մակերեսը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Առավելագույն | Նվազագույն | Միջին | | |
| Գորիսի | 2007 | 6919 | 60 | 448 | 35 | 115 | 1253 | 5,5 |
| | 2023 | 8187 | 60 | 666 | 17 | 136,5 | 2625 | 3,1 |
| Շուռնուխի | 2007 | 5181 | 43 | 218 | 49 | 125 | 887 | 5,8 |
| | 2023 | 5327 | 43 | 240 | 11 | 123,9 | 1439 | 3,7 |
| **Ընդամենը** | 2007 | **12100** | **103** | **448** | **35** | **117,0** | **2140** | **5,6** |
| | 2023 | **13514** | **103** | **666** | **11** | **131,2** | **4064** | **3,3** |

## 2.8. Կոլեկտիվ ուսուցում

Համաձայն Հայաստանի անտառներում անտառշինության և անտառակառավարման պլանների պատրաստման հրահանգի, դաշտային գույքագրումից առաջ կազմակերպվել են անտառի գույքագրման և քարտեզագրման գործնական կոլեկտիվ ուսուցումներ:

Կոլեկտիվ ուսուցումներն իրականցվել են նախօրոք ընտրված ծառուտներում: Ուսուցման նպատակը գույքագրող հիմնական և տեխնիկական անձնակազմին անտառի կոնկրետ գույքագրման տարածքի պայմաններում պահանջվող ճշտությամբ գնահատում իրականացնելուն նախապատրաստելն է, ինչպես նաև յուրաքանչյուր կատարողի մասնագիտական մակարդակի և անտառի գնահատմանը նրա մասնակցության որոշումը և ճիշտ անտառտնտեսական միջոցառումներ նախագծելու հմտություն ուսուցանելը:

Կոլեկտիվ ուսուցումներին մասնակցել են ծրագրի հիմնական և տեխնիկական անձնակազմը, նույն թվում անտառտնտեսության համապատասխան մասնագետները, ինչպես նաև շրջակա համայնքից ներկայացուցիչներ:

Կոլեկտիվ ուսուցումը ներառել է.

ա) անտառգույքագրման չափումների կատարման հրահանգավորում, շրջանաձև ռելասկոպիկ և հաշվարկային հրապարակներով վարժանքներ, չափագրումների տվյալների օգտագործում՝ ինքնաստուգման համար,

բ) մասնագետների ծանոթացում համապատասխան իրավական ակտերին,

գ) ծանոթացում անտառաճման պայմանների և անտառային տիպերի հետ, նրանց փոխկապակցվածությանը ծառուտների տեսակային կազմի, բոնիտետային դասերի և ծառուտների գնահատման այլ ցուցանիշների հետ,

դ) ծանոթացում ծառուտների, առանձին ծառերի վնասատուներով և հիվանդություններով վարակվածության նշանների հետ,

ե) ծանոթացում ծառուտների և այլ հողային կատեգորիաների արբանյակային նկարների վերծանմանը, գնահատման հատվածների սահմանների ճշտման և հատվածի ընդհանուր գնահատման բնութագրի գործնական ցուցադրում,

զ) տեղեկացում դաշտային տեխնիկական փաստաթղթերի ձևակերպման և դրանց լրացման պահանջների մասին:

Ուսուցանվել է նաև մշտական փորձահրապարակների տեղադրման և հաշվարկման մեթոդիկան, և տեղադրվել են մշտական փորձահրապարակներ (Նկար 1):

## 2.9. Անտառակառավարման պլանավորման մասնակցային մոտեցում

Անտառակառավարման պլանավորման մասնակցային մոտեցման հիմնական նպատակը շահագրգիռ խմբերին հնարավորության ընձեռնումն է աջակցելու անտառակառավարման պլանավորման պրոցեսին: Անտառային պաշարների պլանավորման մեջ բազմակողմանի մասնակցային մոտեցումն անտառագիտության ռեֆորմի կարևոր նախապայմաններից է:

Մասնակցային մոտեցումն անկասկած կբարձրացնի տեղաբնակների հետաքրքրությունն անտառների պահպանության և պաշարների արդյունավետ օգտագործման գործընթացներում: Մասնակցային պլանավորման մոտեցումը և դրա կիրառումը պետք է հաշվի առնի ազգային սովորույթներն ու ավանդույթները:

Ռեսուրսների մասնակցային պլանավորման և կառավարման մեջ ընդհանուր պրոբլեմները որոշվում են համագործակցության միջոցով: Մասնակցային կառավարում նախ և առաջ նշանակում է համագործակցություն կազմակերպության ներսում և պլանավորողների, հասարակության ու հետաքրքրվող կողմերի միջև: Մասնակցային պլանավորման պրոցեսի արդյունավետությունը երաշխավորված է համապատասխան ուսուցման դեպքում:

Ծրագրի շրջանակներում հանդիպումներ են իրականացվել անտառտնտեսության աշխատակիցների և խոշորացված համայնքի բնակիչների հետ, քննարկվել են կառավարման պլանի հիմնական դրույթները, անտառային քարտեզները համադրվել են համանքների կադաստրային քարտեզների հետ, վերհանվել և ճշտվել են առկա անհամապատասխանությունները:



**Նկար 1. Կոլեկտիվ ուսուցում**

## Բաժին 3. ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

### 3.1 Անտառտնտեսության անտառային հողերի բաժանումն ըստ հիմնական նպատակային նշանակության և հողատեսքերի

Անտառտնտեսության ընդհանուր մակերեսը կազմում է 13514 հեկտար, նույն թվում Գորիսի անտառպետությունը՝ 8187հա (60,6%), Շուռնուխի անտառպետությունը՝ 5327հա (39,4%), անտառածածկ ընդհանուր մակերեսը՝ 9696,4հա, նույն թվում Գորիսի անտառպետությունը՝ 5280,1հա (54,5%), Շուռնուխի անտառպետությունը՝ 4416,3հա (45,5%), անտառմշակույթները համապատասխանաբար՝ 299,5հա և 13,8հա: Ոչ անտառածածկ մակերեսը 1608,2հա է, որից նոսրուտները՝ 766,5հա, հատված, հրդեհված և չվերականգնված մակերեսը՝ ընդհամենը 5,6հա, անտառային բացատները և պարապուտ տարածքները, ընդհանուր՝ 836,1հա, ոչ անտառային հողերը, ընդհանուր՝ 2192,4հա, նույն թվում՝ խոտհարքները 32,9հա, արոտավայրերը՝ 698,5հա, այլ հողերը՝ 1461,0հա (Աղյուսակ 8):

**Աղյուսակ 8. Սյունիքի անտառտնտեսության հողատեսքերի բաշխվածությունն ըստ անտառպետությունների**

| № | Հողատեսքը | Անտառպետություններ | | |
|---|---|---|---|---|
| | | Գորիսի | Շուռնուխի | Ընդհամենը |
| 1 | Ընդհանուր | 8187 | 5327 | 13514 |
| 2 | Անտառային հողեր, ընդամենը | 6546,1 | 4775,5 | 11321,6 |
| 2.1 | Անտառածածկ, ընդամենը | 5280,1 | 4416,3 | 9696,4 |
| 2.1.1 | Այդ թվում անտառմշակույթներ | 299,5 | 13,8 | 313,3 |
| 2.2 | Չմիակցված սաղարթով անտառմշակույթներ | 17,0 | - | 17,0 |
| 2.3 | Ոչ անտառածածկ, ընդամենն, այդ թվում | 1249,0 | 359,2 | 1608,2 |
| 2.3.1 | Նոսրուտներ | 533,4 | 233,1 | 766,5 |
| 2.3.2 | Բացատներ և պարապուտներ | 710,0 | 126,1 | 836,1 |
| 2.3.3 | Հրդեհված, մահացած և չվերականգնված | 5,6 | - | 5,6 |
| 3 | Ոչ անտառային հողեր, ընդամենը | 1640,9 | 551,5 | 2192,4 |
| 3.1 | Խոտհարք | 10,1 | 22,8 | 32,9 |
| 3.2 | Արոտավայր | 409,6 | 288,9 | 698,5 |
| 3.3 | Այլ հողեր | 1221,2 | 239,8 | 1461,0 |

Պաշտպանական նշանակության հողատեսքերի ընդհանուր մակերեսը զբաղեցնում է անտառային հողերի 43,8%-ը (4962,7հա), որից անտառածածկը՝ 3892,7հա է, նույն թվում անտառմշակույթները՝ 110,0հա: Անտառային բացատները և բաց (պարապուտ) տարածքները՝ 554,6հա, նոսրուտները՝ 497,3հա:

Հատուկ նշանակության հողատեսքերը զբաղեցնում են 3985,1հա մակերես (35,2%), որից անտառածածկ մակերեսը՝ 3429,9հա: Հրդեհված, հատված և չվերականգնված անտառային տարածքները զբաղեցնում են 4,5հա, անտառային բացատները և բաց տարածքները՝ 281,5հա, նոսրուտները՝ 269,2հա:

Արտադրական նշանակության ընդհանուր հողատեսքերը զբաղեցնում են 2373,8հա (21%), ամբողջությամբ անտառածածկ:

Անտառտնտեսության ընդհանուր հողատեսքերում անտառածածկ մակերեսը 9696,4հա է, որից ընդհանուր 313,3 հեկտարն է միակցված սաղարթով անտառմշակույթ (3,3%), հրդեհված, համատարած հատված և չվերականգնված մակերեսը՝ 5,6հա, անտառային բացատները և պարապուտները՝ 836,1հա, նոսրուտները՝ 766,5հա (Աղյուսակ 9, քարտեզ 6):

**Աղյուսակ 9. Սյունիքի անտառտնտեսության անտառային հողերի բաշխվածությունն ըստ հիմնական նպատակային նշանակության**

| № | Հողատեսք | Կատեգորիա | Մակերեսը, հա |
|---|---|---|---|
| 1 | Ընդհանուր մակերեսը | Արտադրական | 2373,8 |
| | | Պաշտպանական | 4962,7 |
| | | Հատուկ նշանակության | 3985,1 |
| | | Ընդամենը | 11321,6 |
| 2 | Անտառածածկ մակերեսը | Արտադրական | 2373,8 |
| | | Պաշտպանական | 3892,7 |
| | | Հատուկ նշանակության | 3429,9 |
| | | Ընդամենը | 9696,4 |
| 2.1 | Այդ թվում անտառմշակույթներ | Արտադրական | 38,5 |
| | | Պաշտպանական | 110,0 |
| | | Հատուկ նշանակության | 164,8 |
| | | Ընդամենը | 313,3 |
| 3 | Չմիակցված անտառմշակույթներ | Պաշտպանական | 17,0 |
| | | Ընդամենը | 17,0 |
| 4 | Ոչ անտառածածկ | Պաշտպանական | 1053,0 |
| | | Հատուկ նշանակության | 555,2 |
| | | Ընդամենը | 1608,2 |
| 4.1 | Հրդեհված, մահացած, հատված և չվերականգնված | Պաշտպանական | 1,1 |
| | | Հատուկ նշանակության | 4,5 |
| | | Ընդամենը | 5,6 |
| 4.2 | Բացատներ և պարապուտ տարածքներ | Պաշտպանական | 554,6 |
| | | Հատուկ նշանակության | 281,5 |
| | | Ընդամենը | 836,1 |
| 4.3 | Նոսրուտներ | Պաշտպանական | 497,3 |
| | | Հատուկ նշանակության | 269,2 |
| | | Ընդամենը | 766,5 |

## 3.2 Անտառտնտեսության հողատեսքերի փոփոխությունը

Անտառտնտեսության ընդհանուր հողերի մակերեսը 2007 թվականի համեմատությամբ ավելացել է 1414 հեկտարով, ընդհանուր անտառածածկը՝ 977,3 հեկտարով, անտառմշակույթների մակերեսը նվազել է 7,8 հեկտարով: Տարածքային առումով փոփոխությունները վերագրվում են հիմնականում համայնքների կադաստրային քարտեզագրական նյութերի համադրության արդյունքում ոչ անտառածածկ մակերեսների ավելացմանը, ընդհանուր 814,4 հեկտար, ինչպես նաև GIS համակարգով մակերեսների ճշտման հետ (Աղյուսակ 10):

**Աղյուսակ 10. Անտառտնտեսության հողատեսքերի փոփոխությունը**

| № | Հողատեսքը | 2007** | | 2023 | |
|---|---|---|---|---|---|
| | | Մակերեսը, հա | % | Մակերեսը, հա | % |
| 1 | Ընդհանուր մակերեսը | 12100,0 | 100 | 13514,0 | 100 |
| 2 | Անտառային հողեր | 9544,9 | 77,9 | 11321,6 | 83,8 |
| 2.1 | Անտառածածկ, ընդհամենը | 8719,1 | 71,1 | 9696,4 | 71,7 |
| 2.1.1 | Այդ թվում անտառմշակույթներ | 321,1 | | 313,3 | |
| 2.2 | Չմիակցված սաղարթով մշակույթներ | 31,0 | | 17,0 | |
| 2.3 | Անտառային տնկարան | 1 | | - | |
| 2.4 | Ոչ անտառածածկ, որից | 793,8 | | 1608,2 | |
| 2.4.1 | Հրդեհված, հատված և չվերականգնված | 19,3 | | 5,6 | |
| 2.4.2 | Նոսրուտներ | 267,5 | | 766,5 | |
| 2.4.3 | Բացատներ և պարապուտներ | 507,0 | | 836,1 | |
| 3 | Ոչ անտառային հողեր, այդ թվում | 2713,1 | 22,1 | 2192,4 | 16,2 |
| 3.1 | Վարելահող | 10,3 | | - | |
| 3.2 | Խոտհարք | 25,7 | | 32,9 | |
| 3.3 | Արոտավայր | 1055,9 | | 698,5 | |
| 3.4 | Այգի | 9,8 | | - | |
| 3.5 | Բնակավայր, կորդոն, ագարակ | 15,9 | | 8,5 | |
| 3.6 | Այլ հողատեսքեր | 1595,5 | | 1452,5 | |

**2007 թվականի տվյալները ներկայացվում է առանց Արծվանիկի անտառապետության

### 3.3 Անտառածածկ մակերեսի և պաշարի բաշխվածությունը ըստ անտառկազմող ծառաթփատեսակների

Անտառտնտեսությունում հիմնական անտառկազմող տեսակներն են խոշորառէջ կաղնին, որի գերակշռությամբ ծառուտները զբաղեցնում են 6538,4հա՝ 639701խտմ$^3$ ընդհանուր պաշարով, կամ անտառածածկ մակերեսի 67,4%-ը և ընդհանուր պաշարի 65,4%-ը, ընդ որում 2007թ. համեմատությամբ մակերեսը ավելացել է 951,2 հեկտարով, իսկ ընդհանուր պաշարը՝ 99791խտմ$^3$-ով, բոխու գերակշռությամբ ծառուտները զբաղեցնում են 2604,2հա, ընդհանուր պաշարը 297449խտմ$^3$ (անտառածածկի 26,9%-ը և պաշարի 30,4%-ը), 2007թ. համեմատությամբ զբաղեցրած մակերեսը ավելացել է 240,6 հեկտարով, ընդհանուր պաշարը 112619խտմ$^3$-ով, սոճուտները՝ 183,6հա, 30892խտմ$^3$ (անտառածածկ տարածքի 1,9%-ը և պաշարի 3,1%-ը), 2007թ. համեմատությամբ ընդհանուր մակերեսը նվազել է 8,6 հեկտարով, ընդհանուր պաշարը ավելացել է 13982խտմ$^3$-ով և մնացած տեսակները միասին կազմում են անտառածածկի 3,8%-ը և ընդհանուր պաշարի 1,1%-ը (Աղյուսակ 11, քարտեզ 7):

**Աղյուսակ 11. Անտառածածկ մակերեսի և պաշարի բաշխվածությունն ըստ անտառկազմող ծառատեսակների**

| № | Գերակշռող ծառատեսակը | 2007 | | 2023 | |
|---|---|---|---|---|---|
| | | մակերեսը, հա | պաշարը, խտմ$^3$ | մակերեսը, հա | պաշար, խտմ$^3$ |
| 1 | Սոճի | 192,2 | 16910 | 183,6 | 30892 |
| 2 | Կաղնի սերմնային | 4411,3 | 492120 | 5586,1 | 598070 |
| 3 | Կաղնի կոճղաշիվային | 1175,9 | 47790 | 952,3 | 41631 |
| 4 | Բոխի սերմնային | 1041,5 | 109140 | 1832,1 | 247925 |
| 5 | Բոխի կոճղաշիվային | 1322,1 | 75690 | 772,1 | 49524 |

| № | Գերակշռող ծառատեսակը | 2007 | | 2023 | |
|---|---|---|---|---|---|
| | | մակերեսը, հա | պաշարը, խմ³ | մակերեսը, հա | պաշար, խմ³ |
| 6 | Հացենի | 13,9 | 320 | 32,1 | 976 |
| 7 | Թխկի | 4,6 | 290 | 5,1 | 942 |
| 8 | Թեղի | 44,3 | 1460 | 31,3 | 1144 |
| 9 | Հունական ընկուզենի | 31,5 | 2050 | 28,0 | 1633 |
| 10 | Ակացիա սպիտակ | 11,3 | 140 | 12,3 | 783 |
| 11 | Խնձորենի | 6,9 | 150 | 13,9 | 310 |
| 12 | Տանձենի | 24,9 | 2150 | 14,7 | 1004 |
| 13 | Ուռենի ծառանման | 4,0 | 210 | 24,2 | 1026 |
| 14 | Կեռասենի | | | 1,4 | 11 |
| 15 | Թփեր | 434,7 | 2470 | 207,2 | 2151 |
| **Ընդամենը** | | **8719,1** | **750890** | **9696,4** | **978022** |

****2007 թվականի տվյալները ներկայացվում է առանց Արծվանիկի անտառապետության**

Անտառտնտեսությունում անտառները տեղաբաշխված են ծովի մակերևույթից 750-2500մ բարձրությունների վրա, ընդ որում մինչև 1200մ բարձրության վրա գտնվում է ընդամենը 1493,4հա մակերես, 95470խմ³ ընդհանուր պաշարով (ընդհանուր անտառածածկ տարածքի 15,4% և պաշարի 9,8%), 1201-1600մ բարձրությունների վրա՝ 3885,3հա, 404118խմ³ ընդհանուր պաշարով (40,1% և 41,3%), 1601-1800մ՝ 2854,6հա, 348632խմ³ ընդհանուր պաշարով (29,4% և 35,7%), 1801-2000մ՝ 1233,3հա, 116770խմ³, համապատասխանաբար 12,7% և 11,9% և 2000մ-ից բարձր՝ 229,8հա, 13034խմ³ պաշարով, անտառածածկի 2,4%-ը, ընդհանուր պաշարի 1,3%-ը (Աղյուսակ 12):

**Աղյուսակ 12. Անտառածածկ մակերեսի և պաշարի բաշխվածությունն ըստ ծովի մակերևույթից բարձրության**

| Անտառպետություն | Անտառածածկը, հա<br>Պաշարը, մ³ | Ծովի մակերևույթից բարձրությունը, մետր | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Մինչև 800 | 800-1200 | 1201-1400 | 1401-1600 | 1601-1800 | 1801-2000 | 2000-մետրից բարձր |
| Գորիսի | 5280,1 | 6,7 | 981,7 | 910,7 | 973,9 | 1225,3 | 952,0 | 229,8 |
| | 426500 | 99 | 57951 | 61763 | 83886 | 133047 | 76720 | 13034 |
| Շուռնուխի | 4416,3 | 12,7 | 492,3 | 661,4 | 1339,3 | 1629,3 | 281,3 | |
| | 551522 | 247 | 37171 | 80248 | 178221 | 215585 | 40050 | |
| Անտառտնտեսություն | **9696,4** | **19,4** | **1474,0** | **1572,1** | **2313,2** | **2854,6** | **1233,3** | **229,8** |
| | **978022** | **348** | **95122** | **142011** | **262107** | **348632** | **116770** | **13034** |

## 3.4 Անտառածածկ մակերեսի և պաշարի բաշխվածությունն ըստ լանջի թեքության աստիճանի

Լանջերն ըստ թեքության բաժանվում են հարթ՝ մինչև 10°, թեթև զառիվայր՝ 11-20° զառիվայր՝ 21-30°, կտրուկ զառիվայր՝ 30°-ից բարձր: Անտառածածկ տարածքի ընդամենը 1,9%-ը (185,1հա) և պաշարի 1,8%-ը (18036խմ³) գտնվում են հարթ՝ մինչև 10° թեքությունների վրա, 11-20° թեքությունների վրա՝ 2026,6հա մակերես (20,9%) և

239493խմ³ պաշար (24,5%), 30°-ից բարձր թեքություններում տեղաբաշխված են 3308,8հա անտառներ՝ 313103խմ³ ընդհանուր պաշարով (համապատասխանաբար 34,1% և 32,1%), իսկ 21-30° թեքությունների վրա՝ 4175,9հա մակերես (43,1%) և 407390խմ³ պաշար (41,6%) (աղյուսակ 13, Քարտեզ 8): Անկախ լանջերի թեքություններից, անտառտնտեսությունում գերակշռում են հյուսիսահայաց լանջերը՝ 62,8% (Քարտեզ 9):

**Աղյուսակ 13. Անտառածածկ մակերեսի և պաշարի բաշխվածությունն ըստ լանջի թեքության աստիճանի**

| Լանջի թեքության աստիճանը | անտառածածկ մակերեսը, հա | պաշարը, մ³ |
|---|---|---|
| մինչև 10° | 185,1 | 18036 |
| 11-20° | 2026,6 | 239493 |
| 21-30° | 4175,9 | 407390 |
| 30°-ից բարձր | 3308,8 | 313103 |
| **Անտառտնտեսություն** | **9696,4** | **978022** |

### 3.5 Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ տարիքային խմբերի

Անտառտնտեսությունում անտառածածկ մակերեսի և պաշարի հետևյալ բաշխվածությունն է ըստ տարիքային խմբերի: Երիտասարդ տարիքային խմբի ծառուտները (I և II հասակային դասեր) զբաղեցնում են 499,6հա, 26448խմ³ պաշարով (անտառածածկի ընդամենը 5,2% և պաշարի 2,7%-ը), միջին տարիքի ծառուտները, որոնք բացարձակ գերակշռում են, զբաղեցնում են 8238,3հա, 819385խմ³ պաշարով (համապատասխանաբար 85,0% և 83,8%):

Հասունացող ծառուտները զբաղեցնում են 555,5հա (5,7%), 75178խմ³ (7,7%), իսկ հասուն և գերհասուն ծառուտները միասին՝ 403,0հա (4,1%) և 57011խմ³ (5,8%): (Աղյուսակ 14, քարտեզ 10):

### 3.6 Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ լանջի թեքության և տարիքային խմբերի

Անտառտնտեսության երիտասարդ և միջին տարիքային խմբերի ծառուտների մակերեսների 66,1%-ը (5777,5հա) գտնվում են մինչև 30° թեքությունների վրա, որոնցում հիմնականում համապատասխան հատվածներում նախատեսվել են խնամքի հատումները: Հասուն և գերհասուն ծառուտների 68,4%-ն է գտնվում մինչև 30° թեքությունների վրա: Ամբողջ անտառածածկի 34,1%-ը գտնվում է 30°-ից բարձր թեքությունների վրա (Աղյուսակ 15):

## Աղյուսակ 14. Անտառածածկ տարածքի և պաշարի բաշխվածությունն ըստ տարիքային խմբերի

| № | Գերակշռող ծառատեսակը | Մակերեսը, հա: Անտառածածկ մակերեսը, հա | Մակերեսը, հա: երիտասարդ 1 | Մակերեսը, հա: երիտասարդ 2 | Մակերեսը, հա: միջին տարիքի | Մակերեսը, հա: հասունացող | Մակերեսը, հա: հասուն և գերհասուն, ընդամենը | Մակերեսը, հա: հասուն և գերհասուն, այդ թվում գերհասուն | Պաշարը, մ³: Ընդհանուր պաշարը, մ³ | Պաշարը, մ³: երիտասարդ 1 | Պաշարը, մ³: երիտասարդ 2 | Պաշարը, մ³: միջին տարիքի | Պաշարը, մ³: հասունացող | Պաշարը, մ³: հասուն և գերհասուն, ընդամենը | Պաշարը, մ³: հասուն և գերհասուն, այդ թվում գերհասուն | Միջին տարիքը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Սոճի | **183,6** | 9,0 | 29,4 | 145,2 | | | | **30892** | 631 | 2632 | 27629 | | | | 48 |
| 2 | Կաղնի | **5586,1** | 2,7 | 199,4 | 5341,6 | 42,4 | | | **598070** | 58 | 9937 | 581012 | 7063 | | | 101 |
| 3 | Կաղնի ցածրաբուն | **952,3** | | | 791,7 | 90,5 | 70,1 | 15,3 | **41630** | | | 30485 | 5359 | 5786 | 879 | 54 |
| 4 | Բոխի | **1832,1** | 0,9 | 176,0 | 1038,9 | 348,5 | 267,8 | 13,4 | **247925** | 21 | 11517 | 132308 | 56904 | 47175 | 2095 | 78 |
| 5 | Բոխի ցածրաբուն | **772,1** | | 2,3 | 688,5 | 53,8 | 27,5 | 0,1 | **49524** | | 34 | 40560 | 5412 | 3518 | 3 | 51 |
| 6 | Հացենի | **32,1** | 2,1 | 19,9 | 10,1 | | | | **976** | 54 | 306 | 616 | | | | 39 |
| 7 | Թխկի | **5,1** | | 1,2 | 3,9 | | | | **942** | | 35 | 907 | | | | 50 |
| 8 | Թեղի | **31,3** | | 10,8 | 20,5 | | | | **1144** | | 243 | 901 | | | | 46 |
| 9 | Ակացիա սպիտակ | **12,3** | | 3,9 | 8,4 | | | | **784** | | 206 | 578 | | | | 42 |
| 10 | Ուռենի ծառ | **24,2** | | | 18,2 | 5,3 | 0,7 | | **1026** | | | 712 | 271 | 43 | | 41 |
| 11 | Տանձենի | **14,7** | | 1,9 | 12,8 | | | | **1004** | | 80 | 924 | | | | 63 |
| 12 | Հունական ընկուզենի | **28,0** | | 5,3 | 22,7 | | | | **1633** | | 200 | 1433 | | | | 57 |
| 13 | Կեռասենի | **1,4** | 1,4 | | | | | | **11** | 11 | | | | | | 13 |
| 14 | Խնձորենի | **13,9** | 0,6 | 13,3 | | | | | **310** | 14 | 296 | | | | | 34 |
| 15 | Ակացիա դեղին | **0,8** | | | 0,8 | | | | **19** | | | 19 | | | | 25 |
| 16 | Ցաքի | **206,1** | | 19,5 | 135,0 | 14,7 | 36,9 | 6,6 | **2126** | | 173 | 1301 | 163 | 489 | 46 | 22 |
| 17 | Դրախտածառ | **0,3** | | | | 0,3 | | | **6** | | | | 6 | | | 25 |
| Անտառտնտեսություն | 2007 | 12845,1 | 79,8 | 811,9 | 9553,0 | 1304,8 | 1116,1 | 78,5 | 1354240 | 1510 | 23450 | 963390 | 195190 | 170700 | 10210 | 78 |
| | 2023 | **9696,4** | **16,7** | **482,9** | **8238,3** | **555,5** | **403,0** | **35,4** | **978022** | **789** | **25659** | **819385** | **75178** | **57011** | **3023** | **88** |
| Անտառպետություններ 2023 | | | | | | | | | | | | | | | | |
| Գորիսի | | **5280,1** | **15,0** | **404,0** | **4690,1** | **127,3** | **43,7** | **8,2** | **426500** | **748** | **18831** | **390303** | **12369** | **4249** | **476** | **74** |
| Շուռնուխի | | **4416,3** | **1,7** | **78,9** | **3548,2** | **428,2** | **359,3** | **27,2** | **551522** | **41** | **6828** | **429082** | **62809** | **52762** | **2547** | **99** |

** 2007թվականը ներկայացված է Արծվանիկի անտառպետության հետ միասին

Աղյուսակ 15. Անտառածածկ ընդհանուր մակերեսի և պաշարի բաշխվածությունն ըստ լանջի թեքության աստիճանի և տարիքային խմբերի

| Լանջի թեքության աստիճանը | անտառածածկ տարածքները, հա | պաշարը, ,մ$^3$ | Տարիքային խումբ | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | երիտասարդ | | միջին տարիքային | | հասունացող | | հասուն | | գերհասուն | |
| | | | անտառածածկ տարածքները, հա | պաշարը, մ$^3$ | անտառածածկ տարածքները, հա | պաշարը մ$^3$ | անտառածածկ տարածքները, հա | պաշարը, մ$^3$ | անտառածածկ տարածքները, հա | պաշարը, մ$^3$ | անտառածածկ տարածքները, հա | պաշարը, մ$^3$ |
| **մինչև 5°** | 21,8 | 1247 | 5,5 | 102 | 15,6 | 1102 | | | 0,7 | 43 | | |
| **6-10°** | 163,3 | 16789 | 12,4 | 317 | 131,6 | 14409 | 19,3 | 2063 | | | | |
| **11-15°** | 589,9 | 67699 | 25,7 | 929 | 518,8 | 61168 | 18,7 | 1791 | 23,6 | 3436 | 3,1 | 375 |
| **16-20°** | 1436,7 | 171794 | 49,1 | 2727 | 1200,2 | 141282 | 100,6 | 14336 | 75,6 | 11691 | 11,2 | 1758 |
| **21-25°** | 1936,7 | 203063 | 143,5 | 8611 | 1648,5 | 174066 | 86,6 | 11818 | 51,4 | 8186 | 6,7 | 382 |
| **26-30°** | 2239,2 | 204327 | 168,1 | 9350 | 1858,5 | 165504 | 109,2 | 12002 | 103,3 | 17468 | 0,1 | 3 |
| **31-35°** | 1805,3 | 166151 | 69,5 | 3259 | 1532,3 | 131964 | 142,5 | 22820 | 53,9 | 8014 | 7,1 | 94 |
| **36-40°** | 1104,5 | 107322 | 18,1 | 961 | 968,0 | 92042 | 65,8 | 9182 | 52 | 5093 | 0,6 | 44 |
| **41°-ից բարձր** | 399 | 39630 | 7,7 | 192 | 364,8 | 37848 | 12,8 | 1166 | 7,1 | 57 | 6,6 | 367 |
| **Անտառտնտեսություն** | **9696,4** | **978022** | **499,6** | **26448** | **8238,3** | **819385** | **555,5** | **75178** | **367,6** | **53988** | **35,4** | **3023** |
| Գորիս | **5280,1** | **426500** | **419,0** | **19580** | **4690,1** | **390303** | **127,3** | **12369** | **35,5** | **3772** | **8,2** | **476** |
| Շուռնուխ | **4416,3** | **551522** | **80,6** | **6868** | **3548,2** | **429082** | **428,2** | **62809** | **332,1** | **50216** | **27,2** | **2547** |

### 3.7 Անտառածածկ տարածքի բաշխվածությունն ըստ բոնիտետային դասերի

Բոնիտետային դասը որոշվել է միջին տարիքով և միջին բարձրությամբ՝ անտառի հիմնական էլեմենտի համար (շարահարկ): Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ անտառտնտեսությունում անտառածածկ մակերեսի ընդհամենը 13,6%-ն է 1-3 բոնիտետային դասերի, բացարձակ գերակշռում է 4-րդ բոնիտետային դասի ծառուտները՝ 4946,1հա (51,0%), իսկ անտառաճման տեսանկյունից խիստ անբարենպաստ 5-5ա բոնիտետային դասերը միասին՝ 3431,1հա (35,4%): Անտառտնտեսության ծառուտների միջին բոնիտետային դասը գնահատվել է 4,3 (Աղյուսակ 16, քարտեզ 11):

**Աղյուսակ 16. Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ բոնիտետային դասերի**

| № | Գերակշռող ծառատեսակը | Բոնիտետային դասեր | | | | | | | Միջին բոնիտետ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 5ա | Ընդ, հա | |
| 1 | Սոճի | 81,8 | 56,8 | 36,5 | 7,1 | 1,4 | | 183,6 | 1,8 |
| 2 | Կաղնի | | 47,8 | 327,8 | 3776,2 | 1382,2 | 52,1 | 5586,1 | 4,2 |
| 3 | Կաղնի ցածրաբուն | | | | 12,9 | 442,3 | 497,1 | 952,3 | 5,6 |
| 4 | Բոխի | | 81,9 | 591,3 | 1031,3 | 120,4 | 7,2 | 1832,1 | 3,7 |
| 5 | Բոխի ցածրաբուն | | | 22,1 | 62,5 | 486,4 | 201,1 | 772,1 | 5,1 |
| 6 | Հացենի | | 8,3 | 15 | 6,7 | 2,1 | | 32,1 | 3,1 |
| 7 | Թխկի | | 3,9 | 0,5 | 0,7 | | | 5,1 | 1,2 |
| 8 | Թեղի | | 1,2 | 1,8 | 12,8 | 14,7 | 0,8 | 31,3 | 4,4 |
| 9 | Ակացիա սպիտակ | | | 5,4 | 4,5 | 2,1 | 0,3 | 12,3 | 3,8 |
| 10 | Ուռենի ծառ | | | 10 | 0,5 | 13,7 | | 24,2 | 4,2 |
| 11 | Տանձենի | | 1,8 | 2,4 | 7,4 | 3,1 | | 14,7 | 3,7 |
| 12 | Հունական ընկուզենի | 0,4 | 3,6 | 13,6 | 10,4 | | | 28 | 3,2 |
| 13 | Կեռասենի | | 1,4 | | | | | 1,4 | 2 |
| 14 | Խնձորենի | | 0,6 | 3,3 | 10 | | | 13,9 | 3,7 |
| 15 | Ակացիա դեղին | | | | | | 0,8 | 0,8 | 6 |
| 16 | Ցաքի | | | | 3,1 | 44,4 | 158,6 | 206,1 | 5,9 |
| 17 | Դրախտածառ | | | | | 0,3 | | 0,3 | 5 |
| **Ընդհանուր** | | **82,2** | **207,3** | **1029,7** | **4946,1** | **2513,1** | **918,0** | **9696,4** | **4,3** |

### 3.8 Անտառածածկ տարածքի և պաշարի բաշխվածությունն ըստ ծառուտի լրիվության

Անտառտնտեսության անտառածածկի 20,3%-ը ցածր լրիվության (0,3-0,4) ծառուտներ են՝ 1964,2հա, ընդհանուր պաշարը՝ 99106խմ$^3$ (10,1%), բարձր լրիվության ծառուտների ընդհանուր մակերեսը՝ 1018,2հա (10,5%), ընդհանուր պաշարը՝ 145270խմ$^3$ (14,7%), իսկ բացարձակ գերակշռող միջին լրիվության ծառուտները՝ 6714,0հա (69,2%), ընդհանուր պաշարը՝ 733650խմ$^3$ (75,2%) (Աղյուսակ 17, քարտեզ 12):

**Աղյուսակ 17. Անտառածածկ մակերեսի և պաշարի բաշխվածությունն ըստ ծառուտի լրիվության և պաշարի**

| № | Գերակշռող ծառատեսակը | Լրիվությունը | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | **0,3** | **0,4** | **0,5** | **0,6** | **0,7** | **0,8** | **0,9** | **1,0** | **Ընդ.** | **Միջին** |
| 1. | Սոճի | 3,6 | 26,8 | 30,4 | 23,3 | 39,4 | 33,8 | 16 | 10,3 | 183,6 | 0,66 |
| | | 244 | 2825 | 3705 | 3483 | 8301 | 6514 | 3306 | 2514 | 30892 | |
| 2. | Կաղնի սերմնային | 349,3 | 704,7 | 2027,1 | 2169,3 | 255,6 | 79 | 1,1 | | 5586,1 | 0,53 |
| | | 21031 | 45215 | 193629 | 289970 | 36793 | 11162 | 270 | | 598070 | |
| 3. | Կաղնի կոճղաշիվային | 103,9 | 187,9 | 328,8 | 226,2 | 63,8 | 41,7 | | | 952,3 | 0,51 |
| | | 2556 | 6180 | 12814 | 13291 | 4202 | 2587 | | | 41630 | |
| 4. | Բոխի սերմնային | 59,2 | 140,2 | 454,3 | 833,1 | 260 | 85,3 | | | 1832,1 | 0,57 |
| | | 2242 | 8585 | 48525 | 130494 | 45337 | 12742 | | | 247925 | |
| 5. | Բոխի կոճղաշիվային | 26,8 | 139 | 243,7 | 248 | 76,4 | 36,1 | 2,1 | | 772,1 | 0,54 |
| | | 695 | 5353 | 13547 | 19530 | 6428 | 3799 | 172 | | 49524 | |
| 6. | Հացենի | 3 | 2,7 | 15,5 | 6,5 | 2,5 | 1,9 | | | 32,1 | 0,53 |
| | | 50 | 76 | 260 | 533 | 8 | 49 | | | 976 | |
| 7. | Թխկի | | | 1,2 | 1,6 | 1,3 | 1 | | | 5,1 | 0,64 |
| | | | | 35 | 358 | 295 | 254 | | | 942 | |
| 8. | Թեղի | 12,6 | 8 | 4,9 | 3,6 | 2,2 | | | | 31,3 | 0,42 |
| | | 288 | 217 | 255 | 278 | 106 | | | | 1144 | |
| 9. | Ակացիա սպիտակ | 0,8 | 4,7 | 2,3 | 4,4 | | 0,1 | | | 12,3 | 0,49 |
| | | 23 | 283 | 138 | 334 | | 6 | | | 784 | |
| 10. | Ուռենի ծառ | 9,8 | 7,9 | 6,5 | | | | | | 24,2 | 0,39 |
| | | 505 | 378 | 143 | | | | | | 1026 | |
| 11. | Տանձենի | 3,3 | 4,5 | 3,7 | 0,7 | 1,4 | | 1,1 | | 14,7 | 0,48 |
| | | 67 | 226 | 400 | 37 | 205 | | 69 | | 1004 | |
| 12. | Ընկուզենի հունական | | 8,4 | 12,1 | 7,5 | | | | | 28 | 0,5 |
| | | | 521 | 556 | 556 | | | | | 1633 | |
| 13. | Կեռասենի | | 0,7 | | 0,7 | | | | | 1,4 | 0,5 |
| | | | 6 | | 5 | | | | | 11 | |
| 14. | Խնձորենի | 3,3 | 5,4 | 1,9 | 0,5 | 2 | 0,6 | 0,2 | | 13,9 | 0,46 |
| | | 72 | 124 | 19 | 15 | 62 | 14 | 4 | | 310 | |
| 15. | Ակացիա դեղին | | | | | 0,8 | | | | 0,8 | 0,7 |
| | | | | | | 19 | | | | 19 | |
| 16. | Ցաքի | 63,7 | 84 | 54,6 | 1,6 | 2,2 | | | | 206,1 | 0,4 |
| | | 469 | 878 | 710 | 23 | 46 | | | | 2126 | |
| 17. | Դրախտածառ | | | | | | | 0,3 | | 0,3 | 0,9 |
| | | | | | | | | 6 | | 6 | |
| Գորիսի անտառպետություն | | **386,2** | **928,9** | **1995,7** | **1337,3** | **420,2** | **180,7** | **20,8** | **10,3** | **5280,1** | **0,52** |
| | | **17944** | **43689** | **141460** | **142164** | **54250** | **20652** | **3827** | **2514** | **426500** | |
| Շուռնուխի անտառպետություն | | **253,1** | **396** | **1191,3** | **2189,7** | **287,4** | **98,8** | | | **4416,3** | **0,55** |
| | | **10295** | **27178** | **133277** | **316745** | **47551** | **16476** | | | **551522** | |
| Անտառտնտեսությունում | 2023 | **639,3** | **1324,9** | **3187,0** | **3527,0** | **707,6** | **279,5** | **20,8** | **10,3** | **9696,4** | **0,53** |
| | | **28239** | **70867** | **274737** | **458909** | **101801** | **37128** | **3827** | **2514** | **978022** | |
| | 2007 հա | **499,9** | **1882** | **4587,3** | **4361,8** | **1056,4** | **376,3** | **74,2** | **72** | **12845,1** | **0,54** |
| | 2007 % | **3,9** | **14,7** | **35,7** | **34,0** | **8,2** | **2,9** | **0,6** | **0,1** | **100** | |

**** 2007թվականը ներկայացված է Արծվանիկի անտառպետության հետ միասին**

## 3.9 Անտառածածկ տարածքի և պաշարի բաշխվածությունն ըստ անտառի տիպի

Անտառի տիպի բնութագրման համար հիմք են ընդունվել Լ. Բ. Մախատաձեի և Պոպովի, ինչպես նաև Պ. Ա. Խուրշուդյանի կողմից Կովկասի և Հայաստանի համար մշակված տիպոլոգիական սխեմաները:

Անտառտնտեսությունում գերակշռում են տարախոտային տիպի անտառները՝ 6470,2հա (66,7%), շյուղախոտային տիպը՝ 1465,8 (15,1%), բոշխային տիպը՝ 813,1հա (8,4%) (Աղյուսակ 18):

**Աղյուսակ 18. Անտառածածկ տարածքի բաշխվածությունը ըստ անտառի տիպերի**

| Ծառատեսակ | Պտերային | Գետնատառային | Մեռյալ ծածկույթ | Դաշտավլուկային | Տարախոտային | Շյուղախոտային | Բոշխային | Մերձալպյան | Հացախոտային | Բարձրախոտային | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Սոճի | 0,2 | 0,3 | 64,9 | | 113,9 | 0,8 | | 1,0 | 2,5 | | 183,6 |
| Կաղնի սերմնային | 17,5 | 34,6 | 69,7 | | 3874,5 | 889,2 | 437,1 | 236,2 | | 27,3 | 5586,1 |
| Կաղնի կոճղաշիվային | | | 42,7 | | 384,9 | 270,3 | 122,2 | 127,9 | 4,3 | | 952,3 |
| Բոխի սերմնային | 25 | 9,2 | 47,2 | 1,9 | 1477,1 | 156,5 | 58,3 | 46,6 | | 10,3 | 1832,1 |
| Բոխի կոճղաշիվային | | | 43,2 | 8,9 | 432,6 | 137,5 | 105,0 | 37,8 | | 7,1 | 772,1 |
| Հացենի | | 0,9 | | | 28,7 | 2,5 | | | | | 32,1 |
| Թխկի | | | 1,2 | | 2,8 | | | | | 1,1 | 5,1 |
| Թեղի | | | | | 15,1 | 1,6 | 11,1 | | 3,5 | | 31,3 |
| Ակացիա սպիտակ | | | | | 10,5 | | 0,7 | | 1,1 | | 12,3 |
| Ուռենի ծառ | | | | | 6,0 | | | | | 18,2 | 24,2 |
| Տանձենի | | | | | 13,0 | | 1,0 | | 0,7 | | 14,7 |
| Հունական ընկուզենի | | | | | 28,0 | | | | | | 28 |
| Կեռասենի | | | | | 1,4 | | | | | | 1,4 |
| Խնձորենի | | | | | 6,7 | | 7,2 | | | | 13,9 |
| Ակացիա դեղին | | | | | | | 0,8 | | | | 0,8 |
| Ցաքի | | | | 54,0 | 75,0 | 7,4 | 69,7 | | | | 206,1 |
| Դրախտածառ | | | 0,3 | | | | | | | | 0,3 |
| **Ընդհանուր** | **42,7** | **45,0** | **269,2** | **64,8** | **6470,2** | **1465,8** | **813,1** | **449,5** | **12,1** | **64,0** | **9696,4** |

## 3.10 Անտառածածկ տարածքի և պաշարի բաշխվածությունն ըստ անտառաճման պայմանների տիպերի

Անտառտնտեսությունների սահմաններում անտառաճման պայմանների տիպը բնութագրվել է համաձայն պրոֆ. Ե. Վ. Ալեքսեևի և Պ. Ս. Պոգրեբնյակի կողմից մշակված էդաֆիկ ցանցի, ըստ որի անտառաճման պայմանները հիմնականում որոշվում են երկու էդաֆիկ գործոններով՝ հողերի բերրիությամբ և խոնավացման պայմաններով և այդ գործոնները դիտվում են իրարից անկախ:

Հողերի բերրիությունը առաջացնում է հետևյալ տիպերի հաջորդականությունը.
A- բնութագրում է աղքատ աճման տարածքով, B- համեմատաբար աղքատ աճման տարածքով, C- համեմատաբար բերրի աճման տարածքով, D- բերրի աճման տարածքով: Խոնավապահովվածությունից ելնելով անտառի տիպերը բաժանվում են

0-չափազանց չոր, 1- չոր, 2- թարմ (չափավոր խոնավ), 3- խոնավ, 4- թաց, 5- ճահիճ:

Անտառգնահատման տվյալների վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ անտառտնտեսությունում գերակշռում են անտառաճման պիտանելիության տեսանկյունից ոչ այնքան բարենպաստ A - B ենթատիպերը զբաղեցնում են ընդհանուր 5125,4հա, կամ ընդհանուր անտառածածկի 52,9%-ը, իսկ համեմատաբար հարուստ աճման պայմաններով տարածքները՝ (C1, C2, C3) 47,1% (Աղյուսակ 19):

Անտառտնտեսության անտառաճման պայմանների տարբերությունները անհրաժեշտ է հաշվի առնել անտառվերականգնման համալիր միջոցառումների նախագծման ժամանակ՝ համապատասխան տեսականու ընտրության համար:

**Աղյուսակ 19. Անտառածածկ տարածքի բաշխվածությունը ըստ անտառաճման պայմանների տիպերի**

| Ծառատեսակ | A1 | A2 | A3 | B1 | B2 | B3 | B4 | C1 | C2 | C3 | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Սոճի | | | | | 1,1 | 2,8 | | 0,6 | 163,8 | 15,3 | 183,6 |
| Կաղնի | 16,2 | 17,1 | | 989,8 | 2012,5 | 33,3 | 3,8 | 942,8 | 1560,1 | 10,5 | 5586,1 |
| Կաղնի ցածրաբուն | 17,7 | 72,9 | 5,7 | 296,4 | 380,4 | 42,3 | | 73,8 | 63,1 | | 952,3 |
| Բոխի | 1,9 | 5,1 | | 59,9 | 288,6 | 42,1 | | 179,5 | 1239,9 | 15,1 | 1832,1 |
| Բոխի ցածրաբուն | | 2,3 | | 185,7 | 367,6 | 34,1 | | 87,6 | 92 | 2,8 | 772,1 |
| Հացենի | | | | | 1,1 | | | | 24,3 | 6,7 | 32,1 |
| Թխկի | | | | | | | | | 2,8 | 2,3 | 5,1 |
| Թեղի | | | | 1 | 13,1 | | | | 16,9 | 0,3 | 31,3 |
| Ակացիա սպիտակ | | | | 0,3 | 0,4 | | | | 11,6 | | 12,3 |
| Ուռենի ծառ | | | | | 7,4 | 1,7 | 7,2 | | 6 | 1,9 | 24,2 |
| Տանձենի | | | | | 1,7 | 3,7 | | | 9,3 | | 14,7 |
| Հունական ընկուզենի | | | | | | 4 | | | 24 | | 28 |
| Կեռասենի | | | | | | | | | 1,4 | | 1,4 |
| Խնձորենի | | | | 1,8 | 5,4 | | | | 6,7 | | 13,9 |
| Ակացիա դեղին | | | | | 0,8 | | | | | | 0,8 |
| Ցաքի | 77,8 | 65,1 | | 53,6 | | | | 9,6 | | | 206,1 |
| Դրախտածառ | | | | | | | | | 0,3 | | 0,3 |
| **Ընդամենը** | **113,6** | **162,5** | **5,7** | **1588,5** | **3080,1** | **164,0** | **11,0** | **1293,9** | **3222,2** | **54,9** | **9696,4** |

## 3.11 Անտառածածկ մակերեսի և պաշարի բաշխվածությունն ըստ հասակային դասերի

Անտառածածկ մակերեսի 5,2%-ը (499,6հա) երիտասարդ տարիքային խնբի (1-ին և 2-րդ հասակային դաս) ծառուտներ են, ընդհանուր պաշարը 26448խտմ³ (2,7%), 8 և բարձր հասակային դասերի ծառուտների ընդհանուր մակերեսը 280,5հա (2,9%), պաշարը՝ 38266խտմ³ (3,9%), իսկ մակերեսի ու պաշարի գերակշիռ մասը տեղաբաշխված է 3-6-րդ դասերում, համապատասխանաբար՝ 91,9% և 93,2%: (Աղյուսակ 20, քարտեզ 13):

**Աղյուսակ 20. Անտառածածկ մակերեսը և պաշարը ըստ գերակշռող ծառատեսակների ու հասակային դասերի**

| Գերակշռող ծառատեսակը | Հասակային դասեր | | | | | | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Համարիչ- մակերեսը (հա), Հայտարար- պաշարը ($մ^3$) | | | | | | | | | |
| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX և բարձր | |
| Սոճի | 9,0 | 29,4 | 131,5 | 13,7 | | | | | | **183,6** |
| | 631 | 2632 | 24734 | 2895 | | | | | | **30892** |
| Կաղնի | 2,7 | 199,4 | 630 | 1008,7 | 1475,6 | 1177,9 | 916,1 | 172,5 | 3,2 | **5586,1** |
| | 58 | 9937 | 33637 | 82998 | 163071 | 151826 | 128180 | 28007 | 356 | **598070** |
| Կաղնի ցածրաբուն | | | 33,9 | 412,5 | 223,8 | 138,5 | 73,5 | 13,6 | 56,5 | **952,3** |
| | | | 957 | 14010 | 8338 | 8143 | 4395 | 1190 | 4597 | **41630** |
| Բոխի | 0,9 | 176 | 420,3 | 571,1 | 527,7 | 113,6 | 22,5 | | | **1832,1** |
| | 21 | 11517 | 36897 | 81052 | 93891 | 20993 | 3554 | | | **247925** |
| Բոխի ցածրաբուն | | 2,3 | 79,5 | 290 | 199,1 | 142,4 | 24,1 | 7,2 | 27,5 | **772,1** |
| | | 34 | 2503 | 15140 | 12716 | 12293 | 2722 | 598 | 3518 | **49524** |
| Հացենի | 2,1 | 19,9 | 10,1 | | | | | | | **32,1** |
| | 54 | 306 | 616 | | | | | | | **976** |
| Թխկի | | 1,2 | 3,9 | | | | | | | **5,1** |
| | | 35 | 907 | | | | | | | **942** |
| Թեղի | | 10,8 | 20,5 | | | | | | | **31,3** |
| | | 243 | 901 | | | | | | | **1144** |
| Ակացիա սպիտակ | | 3,9 | 8,4 | | | | | | | **12,3** |
| | | 206 | 578 | | | | | | | **784** |
| Ուռենի ծառ | | | 6,5 | 11,7 | 4,8 | | 1,2 | | | **24,2** |
| | | | 143 | 569 | 226 | | 88 | | | **1026** |
| Տանձենի | | 1,9 | 9,1 | | 3,7 | | | | | **14,7** |
| | | 80 | 524 | | 400 | | | | | **1004** |
| Ընկուզենի հունական | | 5,3 | 18,3 | 0,4 | | 4,0 | | | | **28** |
| | | 200 | 1123 | 34 | | 276 | | | | **1633** |
| Կեռասենի | 1,4 | | | | | | | | | **1,4** |
| | 11 | | | | | | | | | **11** |
| Խնձորենի | 0,6 | 13,3 | | | | | | | | **13,9** |
| | 14 | 296 | | | | | | | | **310** |
| Ակացիա դեղին | | | | | 0,8 | | | | | **0,8** |
| | | | | | 19 | | | | | **19** |
| Ցաքի | | 19,5 | 36,6 | 76,9 | 51,2 | | 21,9 | | | **206,1** |
| | | 173 | 359 | 765 | 475 | | 354 | | | **2126** |
| Դրախտածառ | | | | | 0,3 | | | | | **0,3** |
| | | | | | 6 | | | | | **6** |
| Անտառտնտեսություն | **16,7** | **482,9** | **1408,6** | **2385,0** | **2487,0** | **1576,4** | **1059,3** | **193,3** | **87,2** | **9696,4** |
| | **789** | **25659** | **103879** | **197463** | **279142** | **193531** | **139293** | **29795** | **8471** | **978022** |
| Անտառպետություն 2023 | | | | | | | | | | |
| Գորիսի | **15** | **404** | **1299,3** | **1632,7** | **978,5** | **567,3** | **288,2** | **63,9** | **31,2** | **5280,1** |
| | **748** | **18831** | **95630** | **108610** | **92286** | **62360** | **35497** | **9404** | **3134** | **426500** |
| Շուռնուխի | **1,7** | **78,9** | **109,3** | **752,3** | **1508,5** | **1009,1** | **771,1** | **129,4** | **56** | **4416,3** |
| | **41** | **6828** | **8249** | **88853** | **186856** | **131171** | **103796** | **20391** | **5337** | **551522** |

### 3.10 Անտառգնահատման միջին ցուցանիշները ըստ գերակշռող ծառատեսակների

Ծառուտների միջին տարիքը 88 է, միջին բոնիտետային դասը 4,3, միջին լրիվությունը 0,53, 1 հեկտարի միջին պաշարը 101խմ$^3$, 1 հեկտարի միջին աճը՝ 1,32մ$^3$, ծառուտի միջին կազմը՝ 4,8բոխի 4,4կաղնի 0,3թխկի 0,2հացենի 0,3սոճի։ 2007 թվականի համեմատությամբ որոշակի փոփոխություններ է կատարվել ծառուտի կազմում, մասնավորապես 0,2 միավորով ավելացել է բոխու մասնակցությունը, մյուս կողմից 0,3 միավորով նվազել է արժեքավոր թխկի տեսակի մասնաբաժինը ծառուտի կազմում (Աղյուսակ 21)։

**Աղյուսակ 21. Անտառգնահատման միջին ցուցանիշների ըստ գերակշռող ծառատեսակների**

| Գերակշռող ծառատեսակը | Տարին | Գնահատման միջին ցուցանիշներ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Տարիքը | Բոնիտետի դաս | Լրիվությունը | Անտառածածկի մակերեսի 1 հեկտարի միջին պաշարը, խմ$^3$ | Պաշարի 1 հա անտառածածկի միջին աճը | Ծառուտի միջին կազմը |
| Սոճի | 2023 | 45 | 1,8 | 0,66 | 168 | 3,73 | 9.8Ս 0.1Կ 0.1Բ |
| Կաղնի | 2023 | 93 | 4,2 | 0,53 | 107 | 1,16 | 6.2Կ 3.2Բ 0.3Թխ 0.2Հց 0.1Բց |
| Կաղնի ցածրաբուն | 2023 | 49 | 5,6 | 0,51 | 44 | 0,9 | 6.1Կց 3.0Բց 0.5Թխ 0.3Բ 0.1Հց |
| Բոխի | 2023 | 72 | 3,7 | 0,57 | 135 | 1,88 | 7.3Բ 2.1Կ 0.3Հց 0.2Թխ |
| Բոխի ցածրաբուն | 2023 | 46 | 5,1 | 0,54 | 64 | 1,38 | 6.9Բց 1.6Կց 0.8Կ 0.5Թխ 0.2Հց |
| Հացենի | 2023 | 34 | 3,1 | 0,53 | 50 | 1,47 | 5.7Հց 1.9Բ 0.7Թխ 0.5Կ 0.3Թղ 0.4Տձ 0.2Խձ 0.2Սզ 0.1Սլ 0.1Կռս |
| Թխկի | 2023 | 46 | 1,2 | 0,64 | 185 | 3,73 | 8.2Թխ 0.1Բ 1.6Տձ 0.1Խձ |
| Թեղի | 2023 | 43 | 4,4 | 0,42 | 36 | 0,83 | 7.1Թղ 0.8Ակ 0.8Կ 0.2Թխ 0.1Հց 0.6Ս 0.2Կռս 0.1Տձ 0.1Խձ 0.1Հը |
| Ակացիա սպիտակ | 2023 | 42 | 3,8 | 0,49 | 64 | 1,53 | 7.2Ակ 1.4Թղ 0.4Բ 0.3Թխ 0.2Կ 0.2Տձ 0.2Հը 0.1Խձ 0.1Սլ |
| Ուռենի ծառ | 2023 | 38 | 4,2 | 0,39 | 42 | 1,1 | 5.9Ուռծ 2.0Բ 1.8Կ 0.1Բց 0.1Կց 0.1Ակ |
| Տանձենի | 2023 | 56 | 3,7 | 0,48 | 68 | 1,22 | 6.8Տձ 0.2Խձ 1.2Կ 1.1Թխ 0.5Բ 0.2Հց |
| Հունական ընկուզենի | 2023 | 54 | 3,2 | 0,5 | 58 | 1,21 | 5.2Հը 0.9Տձ 0.5Խձ 1.0Հց 0.9Թղ 0.6Կ 0.5Բ 0.3Ակ 0.1Ս |
| Կեռասենի | 2023 | 13 | 2 | 0,5 | 8 | 0,65 | 8.4Կռս 1.1Ակ 0.5Ս |
| Խնձորենի | 2023 | 33 | 3,7 | 0,46 | 22 | 0,68 | 6.2Խձ 1.6Տձ 0.6Բլ 1.3Թղ 0.2Հց 0.1Կ |
| Ակացիա դեղին | 2023 | 25 | 6 | 0,7 | 24 | 0,96 | 10.0Ակդ |
| Ցաքի | 2023 | 21 | 5,9 | 0,4 | 10 | 0,53 | 8.5Ցք 0.7Սզ 0.2Մա 0.3Կ 0.3Բ |
| Դրախտածառ | 2023 | 25 | 5 | 0,9 | 20 | 0,8 | 10.0Դխծ |
| Անտառտնտեսությունում | **2023** | **88** | **4,3** | **0,53** | **101** | **1,32** | **4.8ք 4,4կ 0.3Թխ 0.2Հց 0.3Ս** |
| | **2007** | **78** | **4,3** | **0,54** | **105** | **1,35** | **4,6ք4,5կ0,6թխ0,2,հց,0,1սկ** |

### 3.12 Անտառի ներկա իրավիճակի վերլուծություն

Անտառի վիճակի պատկերման նպատակով նախորդ անտառշինությունից հետո վեր է լուծվել անտառածածկ մակերեսի և պաշարի փոփոխությունը գերակշռող ծառատեսակների և հասակային դասերի սահմաններում, անտառգնահատման ցուցանիշների փոփոխությունները, ինչպես նաև անտառգնահատման և անտառտնտեսության կառավարման վերաբերյալ առկա համապատասխան նյութերը:

Ծառուտների միջին տարիքը 88 է, նախորդի համեմատ ավելացել է 10 տարով: Միջին լրիվությունը 2007թ. համեմատությամբ նվազել է 0,01 միավորով, 1 հեկտարի միջին պաշարը նվազել է 4խտմ$^{3}$-ով, իսկ միջին աճը՝ 0,03խտմ$^{3}$-ով: Որոշակի փոփոխություններ է կատարվել ծառուտի միջին կազմում՝ 2007թ. 4,5 կաղնի 4,6 բոխու փոխարեն, 2023 թվականին 4,4 կաղնի 4,8 բոխի: Նշված ցուցանիշները վկայում են, որ անցած 16 տարիներին անտառտնտեսության առանձին տարածքներում իրականացվել են չհամակարգված հատումներ:

Անտառտնտեսության անտառածածկի 20,3%-ը և ընդհանուր պաշարի 10,1%-ը ցածր լրիվության (0,3-0,4) ծառուտներ են, համապատասխանաբար՝ 69,8% և 75,1%-ը միջին լրիվության ծառուտներ, իսկ 10,5% և 14,8%-ը բարձր լրիվության ծառուտներ:

Մտահոգիչ է անտառածածկ մակերեսի՝ ըստ տարիքային խմբերի խիստ անհավասարաչափ բաշխվածությունը. երիտասարդ տարիքային խումբը ընդամենը 5,2%, հասունացող և հասուն ու գերհասուն ծառուտները միասին 9,8%, ինչը նախկին տասնամյակներում ոչ ճիշտ անտառակառավարման արդյունք է: Խնդիրը լուծում կստանա առաջիկա տասնամյակներում իրականացվելիք հիմնավորված խնամքի և անտառվերականգնման հատումների արդյունքում:

Հիմնական անտառկազմող՝ կաղնու և բոխու գերակշռությամբ ծառուտների մակերեսների ավելացումը բացատրվում է նախորդ անտառշինությունից դուրս մնացած, հատկապես ձորակներում և ժայռերի վրա ոչ մեծ զանգվածներով շերտերի ընդգրկման, ինչպես նաև սահմանների ճշտման հանգամանքով, իսկ սոճու գերակշռությամբ ծառուտների մակերեսը 8,6 հեկտարով նվազումը գույքագրման և գնահատման արդյունք է:

## Բաժին 4. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը գտնվում է Կովկասի էկոտարածաշրջանում: Այն բարձր լեռնային երկիր է, որտեղ առանձնացվում են 5 լանդշաֆտային տիպեր՝ կիսաանապատային, տափաստանային, անտառային, ենթալպյան և ալպյան մարգագետնային:

Հայաստանի տարածքում աճում են շուրջ 3800 տեսակ անոթավոր բույսեր, 428 հողային և ջրային ջրիմուռներ, 399 մամուռներ, շուրջ 4500 սնկեր, 464 քարաքոսեր, բնակվում են 549 ողնաշարավոր և շուրջ 17200 տեսակ անողնաշար կենդանիներ: Հայաստանի բույսերի Կարմիր գրքում ընդգրկված են 452 տեսակ, որը կազմում է ամբողջ ֆլորայի 11,89%-ը:

Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում ընդգրկված են 308 տեսակ՝ 155 անողնաշար և 153 ողնաշարավոր:

Բարձրակարգ բույսերի խտությամբ Հայաստանն աշխարհում գրավում է առաջնակարգ տեղերից մեկը՝ յուրաքանչյուր 1000կմ$^2$ տարածքում աճում է մոտ 107 տեսակ: Բույսերի մոտ 2000 տեսակ օժտված է սննդային, կերային, դեղատու, ներկատու, եթերայուղատու, մեղրատու, խեժատու հատկանիշներով, մի շարք կենդանիներ՝ մորթատու, մսատու և այլ հատկանիշներով:

Հանդիսանալով մարդու կենսագործունեության համար անհրաժեշտ էկոլոգիական միջավայր, Հայաստանի կենսաբազմազանությունն ունի բնապահպանական կարևոր նշանակություն: Այդ տեսակետից Հայաստանի հարուստ կենսաբազմազանությունը, ունենալով էկոհամակարգերի կայունությունն ապահովող բարձր հատկանիշներ, միաժամանակ հանդիսանում է երկրի տնտեսական զարգացման կարևոր նախապայմաններից մեկը:

Գորիսի տարածաշրջանը առանձնանում է կենսաբազմազանության բարձր պոտենցիալով:

### 4.1 Ֆլորա

### Անոթավոր բույսեր

***Նկարագրություն***

Սյունիքի անտառտնտեսության տարածքում հանդիպում են անոթավոր բույսերի 91 ընտանիքի և 303 ցեղի պատկանող 488 տեսակ: Անտառտնտեսության տարածքում աճող բույսերից 13 տեսակ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում (աղյուսակ 22, քարտեզ 14):

**Աղյուսակ 22. Սյունիքի անտառտնտեսության տարածքում աճող ՀՀ Բույսերի Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ բուսատեսակները**

| № | Տեսակի լատիներեն անվանումը | Տեսակի հայերեն անվանումը | Կատեգորիան ըստ ՀՀ Կարմիր գրքի |
|---|---|---|---|
| 1. | Galanthus artjuschenkoae Gabrielian | Ձնծաղիկ Արտյուշենկոյի | VU |
| 2. | Amygdalus nairica Fed. et Takht. | Նշենի նաիրյան | EN |
| 3. | Lathyrus setifolius L. | Տափոլոռ խոզանատերև | VU |
| 4. | Onobrychis meschetica Grossh. | Կորնգան մեսխետական | CR |
| 5. | Iris lineolata (Trautv.) Grossh. | Հիրիկ նեղգծային | EN |
| 6. | Botrychium lunaria (L.) Sw. | Ողկուզապտեր կիսալուսնաձև | VU |

| № | Տեսակի լատիներեն անվանումը | Տեսակի հայերեն անվանումը | Կատեգորիան ըստ ՀՀ Կարմիր գրքի |
|---|---|---|---|
| 7. | Orchis punctulata Steven ex Lindl. | Խոլորձ կետավոր | VU |
| 8. | Crataegus tournefortii Griseb. | Սզնի Տուրնեֆորի | VU |
| 9. | Crataegus ulotricha Pojark. | Սզնի գանգրամազիկավոր | CR |
| 10. | Psephellus zangezuri | Պսեֆելյուս Զանգեզուրի | EN |
| 11. | Crataegus tournefortii | Ալոճ Տուրնեֆորի | VU |
| 12. | Astragalus agasii | Գազ Աղասու | CR |
| 13. | Onobrychis meschetica | Կորնգան մսխեթական | CR |

Սյունիքի անտառտնտեսության տարածքը հարուստ է բազմաթիվ օգտակար բուսատեսակներով, որոնցից շատերը լայնորեն և վաղուց կիրառվում են մարդու կողմից: Ըստ նախնական տվյալների տարածքում լայն տարածում ունեն ուտելի և համեմունքային (98 տեսակ), մեղրատու (110), դեղատու (202), կերային (110) նշանակության տեսակները:

Դեռևս անբավարար են ուսումնասիրված օգտակար տեսակների պաշարները, որոնց մասին առայժմ գրառումները կարելի է սահմանափակել «առատ» կամ «հաճախ հանդիպող» գնահատականներով:

***Հիմնական վտանգներ***

Հիմնական վտանգներ շարունակում են մնալ ապօրինի հատումները, արածեցումը՝ հատկապես համայնքամերձ անտառներում անասունների անարգել մուտքը, բույսերի չհամակարգված հավաքը և արոտավայրերի ոչ ճիշտ կառավարումը: Վերջին ժամանակնորում մեծ վտանգ է ներկայացնում սահմանին ընթացող ռազմական գործողությունններ:

Անտառային էկոհամակարգերի և կենսաբազմազանության վրա ազդեցություն կարող է ունենալ կլիմայի փոփոխությունը՝ ջերմաստիճանի բարձրացման և խոնավության նվազման միտումները:

Էկոհամակարգերի համար սպառնալիք կարող է հանդիսանալ նաև ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների տարածումը, օրինակ՝ Ailanthus altissima (այլանթ բարձրաբուն), Robinia pseudacacia (ակացիա սպիտակ), Silybum marianum (տատասկափուշ) և այլն:

## 4.2 Ֆաունա

Սյունիքի մարզը, որտեղ գտնվում է Գորիսի անտառտնտեսության տարածքը, ունի բնության հատուկ պահպանվող տարածքների բավականաչափ զարգացած և խիտ ցանց: Սյունիքի անտառտնտեսության տարածքը ընդգրկված է Որոտան գետի և նրա Վարարակ, Քաշունի, Ջրաղացիձոր, Քարահանուտ, Աղանձուգետ վտակների անտառային տարածաշրջանի մեջ և աչքի է ընկնում խիստ արտահայտված ուղղաձիգ գոտիականությամբ ու ռելիեֆի խայտաբղետությամբ, որն էլ բնորոշում է նրա բուսական և կենդանական աշխարհի հարուստ կենսաբազմազանությունը:

ՀՀ Կառավարության 19 դեկտեմբերի 2013 թվականի N 1465-Ն որոշմամբ ստեղծվել է «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ը, որը իրականացնում է

պահպանության աշխատանքներ 79038,8հա բնության հատուկ պահպանվող տարածքներում: Հարկ է նշվել, որ այդ տարածքներում կենսաբազմազանության վերաբերյալ տեղեկատվությունը շատ կարևոր է անտառտնտեսության կենդանական աշխարհի պահպանության խնդիրները վերլուծելու և համապատասխան միջոցառումների մշակելու ժամանակ:

Տարածաշրջանում հայտնի է ընդհանուր առմամբ 351 անողնաշար կենդանիների տեսակնոր, այդ թվում 41 տեսակի փափակամարմիններ և 310 տեսակի միջատներ, ընդ որում հանդիպում են ՀՀ Կարմիր գրքում գրանցված 1 տեսակի խխունջ և 10 տեսակի միջատներ, ինչպես նաև 4 տեսակի էնդեմիկ փափկամարմիններ ու միջատների 14 էնդեմիկ տեսակ և ենթատեսակ (3-ը ընդգրկված են ՀՀ Կարմիր գրքում):

Ձկնաշխարհը ներկայացված է 4 ձկնատեսակով, որոնք են կարմրախայտը (Salmo trutta fario), կուրի բեղաձուկը (Barbus lacerta cyri), արևելյան տառեխիկը (Alburnoides eichwaldii), Սևանի կողակը (Capoeta sevangi)(VU):

Համեմատաբար հարուստ է սողունների ֆաունան, որը ներկայացված է 23 տեսակներով: Մողեսներից սովորական են դեղնափորիկը (Pseudopus apodus), իլիկամողեսը (Anguis fragilis), Ռադդեի ժայռային մողեսը (Darevskia raddei), միջին մողեսը (Lacerta media), բարեկազմ օձագլուխը (Ophisops elegans): Օձերից հանդիպում են որդանման կույր օձը (Typhlops vermicularis), արևմտյան վիշապիկը- (Eryx jaculus), կարմրափոր սահնօձը (Hierophis schmidti), քառաշերտ սահնօձը- (Elaphe sauromates), գյուրզան (Macrovipera lebetina):

Հայաստանում գրանցված թռչունների 345 տեսակներից 134-ին կարելի է հանդիպել, որոնցից 59-ն այստեղ են բնակվում միայն ամռանը, մոտ 67–ը՝ մշտապես, 10-ը՝ չվող են կամ այստեղ են գալիս ձմռանը, ընդ որում թռչուններից 23 տեսակ ընդգրկված են ՀՀ Կարմիր գրքում իսկ 6 – ԲՊՄՄ Կարմիր ցուցակում:

Առավել հարուստ են ժայռոտ և քարքարոտ տեղանքները:Այստեղ, առավել քան Հայաստանի այլ տարածքներում, ներկայացված են վայրի հնդկահավը (Tetraogallus caspius) (VU), ալպիական ճայը (Pyrrhocorax graculus) (EN) և կարմրաթև մագլցողը (Tichodroma muraria) (DD), ինչպես նաև մորուքավոր անգղը (Gypaetus barbatus) (VU), քարարծիվը (Aquila chrysaetos) (VU), սապսանը (Falco peregrinus) (VU), բվեճը (Bubo bubo) (VU), ալպիական նրբագեղիկը (Prunella collaris), խայտաբղետ քարակեռնեխը (Monticola saxatilis) և ձյան ճնճղուկը (Montifringilla nivalis):

Կաթնասուններից հանդիպում են՝ Եվրոպական նապաստակը (Lepus europaeus), ձնային դաշտամուկը (Chionomys nivalis), սովորական դաշտամուկը (Microtus arvalis), մակեդոնական մուկը (Mus macedonicus), աղվեսը (Vulpes vulpes), տափաստանային կատուն (Felis silvestris ornata), անտառային կատուն (Felis silvestris silvestris), քարակզաքիսը (Martes foina), գորշուկը (Meles canescens) և աքիսը (Mustela nivalis): Բավականին հաճախ գրանցվում է գայլը (Canis lupus):

Սպառնացող հիմնական վտանգը չհամակարգված հատումներն են, պատահում են նաև որսագողության դեպքեր:

**Գորիսի անտառտնտեսության և շրջակա տարածքներում հանդիպող ՀՀ Կարմիր գրքի կենդանիների ցանկ՝** Սեղմված խխունջ - Musculium strictum, Վան Բրինկի նետիկ - Coenagrion vanbrinkae Lohmann, Ֆիտոդրիմադուզա հայկական – Phytodrymadusa armeniaca Ramme, Ֆալետիի կողնջակեր ցայտագնայուկ - Procerus scabrosus fallettianus Cavazzutti, Երկգիծ երկարաբեղիկ - Dorcadion bistriatum Pic, Գորբունովի երկարաբեղիկ - Dorcadion gorbunovi Danilevsky, Պրոզերպինա իլիկաթիթեռ - Proserpinus proserpina, Ավետյանի երկրաչափ թիթեռ - Cidaria avetianae Wardikian, Միջերկրածովային կրիա - Testudo graeca, Linnaeus, Անդրկովկասյան սահնօձ - Zamenis hohenackeri, Strauch, Կովկասյան կատվաօձ - Telescopus fallax, Fleschmann, Հայկական իժ կամ Ռադդեի իժ - Vipera (Montivipera) raddei, Գառնանգղ (մորուքավոր անգղ) - Gypaetus barbatus, Linnaeus, Գիշանգղ - Neophron percnopterus,Linnaeus, Սպիտակագլուխ անգղ - Gyps fulvus, Օձակեր արծիվ - Circaetus gallicus, Եվրոպական ճնճղաճուռակ - Accipiter brevipes,Ցախաքլորավորս - Accipiter gentilis, Linnaeus, Տափաստանային արծիվ - Aquila nipalensis, Քարարծիվ - Aquila chrysaetos, Գաճաճ արծիվ - Hieraaetus pennatus, Կովկասյան մարեհավ - Tetrao mlokosiewiczi, Վայրի հնդկահավ (Ուլար) - Tetraogallus caspius, Կիսասպիտակավիզ ճանճորս - Ficedula semitorquata, Ներկարար - Coracias garrulus, Լայնականջ ոզնի Շելկովնիկովի Կուտորա - Neomys schelkovnikovi Sat., Հարավային պայտաքիթ - Rhinolophus euryale, Մեհելիի պայտաքիթ չղջիկ - Rhinolophus mehelyi, Սովորական երկարաթև չղջիկ - Miniopterus schreibersi, Բեխշտեյնի գիշերաչղջիկ - Myotis bechsteinii, Ասիական լայնականջ չղջիկ - Barbastella leucomelas, Հնդկական վայրենակերպ կամ մացառախոզ - Histrix indica Kerr, Հայկական մկնիկ - Sicista armenica Sokolov et Baskevich, Անդրկովկասյան գորշ արջ - U. a. Syriacus, Ջրասամույր - Lutra lutra Linnaeus, Անտառակատու - Felis silvestris Schreber, կովկասյան ընձառյուծ Panthera pardus ciscaucasica, Բեզոարյան այծ - Capra aegagrus,

Հայկական մուֆլոն – Ovis, Կովկասյան ազնվացեղ եղջերու, մարալ, Cervus elaphus maral Gra (Քարտեզ 15):

## 4.3 «Գորիսի» պետական արգելավայր

Արգելավայրը ստեղծվել է 1972 թվականին Որոտան գետի հովտում՝ ծովի մակարդակից 700-2800 մետր բարձրությունների վրա, ընդհանուր մակերեսը 1850 հա: Ստեղծվել է անտառային լանդշաֆտների և կենդանական աշխարհի՝ հիմնականում այծյամ, բծավոր եղջերու, գորշ արջ պահպանության նպատակով:

Արգելավայրում սահմանված է պահպանման ռեժիմ՝ համաձայն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենքի» դրույթների:

Գույքագրման և գնահատման արդյունքներով արգելավայրի տարածքի տարածման բնական սահմանների ճշտման հիմնավորմամբ դարձել է 1930հա՝

ներառելով Գորիսի անտառպետության 30-48 քառակուսիները: Ստորև ներկայացվում է արգելավայրի վիճակը բնութագրող աղյուսակներ (Աղյուսակ 23-26):

**Աղյուսակ 23. Արգելավայրի հողատեսքերը**

| № | Հողատեսքը | մակերես | % |
|---|---|---|---|
| 1. | Ընդհանուր | 1930 | |
| 2. | Անտառածածկ, ընդամենը | 1497,5 | 77,6 |
| 2.1 | Այդ թվում անտառմշակույթներ | 1,9 | |
| 3. | Չմիակցված սաղարթով անտառմշակույթներ | | |
| 4. | Ոչ անտառածածկ, ընդամենն, այդ թվում | 110,8 | 5,7 |
| 4.1 | Նոսրուտներ | 62,3 | |
| 4.2 | Բացատներ և պարապուտ տարածքներ | 48,5 | |
| 4.3 | Մահացած տնկարք | | |
| 5. | Ոչ անտառային հողեր | 321,7 | 16,7 |
| 5.1 | Պտղատու այգի | | |
| 5.2 | Արոտավայր | 7,6 | |
| 5.3 | Խոտհարք | 1,4 | |
| 5.4 | Այլ հողեր | 312,7 | |

Արգելավայրի անտառածածկի միջին կազմը հետևյալն է՝ 4,9կաղնի, 4,1բոխի, 0,4թխկի, 0,3բոխի ցածրաբուն, 0,2հացենի, 0,1կաղնի ցածրաբուն: Միջին տարիքը 90 է, միջին լրիվությունը՝ 0,52, բոնիտետը՝ 4,3, 1հա անտառածածկ մակերեսի միջին պաշարը՝ 110մ$^3$, իսկ 1 հա անտառածածկի միջին աճը՝ 1,28մ$^3$:

**Աղյուսակ 24. Տեղեկագիր արգելավայրի անտառգնահատման միջին ցուցանիշների՝ ըստ գերակշռող ծառատեսակների**

| № | Գերակշռող ծառատեսակը | Գնահատման միջին ցուցանիշներ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Տարիքը | Բոնիտետի դասը | Լրիվությունը | 1 հա անտառածածկ մակերեսի միջին պաշարը, մ$^3$ | Պաշարի 1 հա անտառածածկի միջին աճը | Ծառուտի միջին կազմը |
| 1. | Սոճի | 42 | 3,7 | 0,67 | 121 | 2,74 | 10.0Ս +Հց,Կ,Գ |
| 2. | Կաղնի | 102 | 4,4 | 0,51 | 111 | 1,11 | 6.2Կ 3.2Բ 0.5Թխ 0.1Հց +Թղ,Լ,Խծ,Ար,Գ,Տծ,Կռս,Սզ,Ուռծ |
| 3. | Կաղնի ցածրաբուն | 65 | 5,4 | 0,47 | 55 | 0,90 | 6.0Կց 3.3Բց 0.4Թխ 0.1Հց 0.1Բ 0.1Ուռծ |
| 4. | Բոխի | 69 | 3,8 | 0,57 | 122 | 1,75 | 7.1Բ 2.5Կ 0.3Թխ 0.1Հց +Տծ,Թղ,Կռս,Ար,Գ,Շլ,Խծ,Սզ,Ուռծ |
| 5. | Բոխի ցածրաբուն | 57 | 5,1 | 0,53 | 77 | 1,34 | 7.0Բց 1.6Կց 1.2Կ 0.2Թխ +Հց |
| 6. | Հացենի | 45 | 2 | 0,6 | 88 | 1,96 | 6.0Հց 3.0Բ 1.0Թխ +Կ |
| 7. | Ուռենի ծառ | 39 | 5 | 0,33 | 33 | 0,88 | 5.6Ուռծ 2.4Բ 2.0Կ +Թխ,Հր |
| 8. | Տանձենի | 90 | 4 | 0,5 | 108 | 1,2 | 5.0Տծ 3.0Կ 1.0Թխ 1.0Բ +Հց |
| 9. | Ցաքի | 19 | 5,6 | 0,54 | 16 | 0,82 | 10.0Ցք +Սզ |
| Ընդամենը | | 90 | 4,3 | 0,52 | 110 | 1,28 | 4.9Կ 4.1Բ 0.4Թխ 0.3Բց 0.2Հց 0.1Կց +Տծ,Ուռծ,Ս,Ցք,Սզ,Կռս,Գ,Թղ,Լ,Խծ,Ար,Շլ,Հ |

**Աղյուսակ 25. Անտառածածկ մակերեսի և պաշարի բաշխվածությունն ըստ անտառկազմող ծառատեսակների**

| № | Գերակշռող ծառատեսակը | 2023 | |
|---|---|---|---|
| | | մակերեսը, հա | պաշար, խմ³ |
| 1 | Սոճի | 0,9 | 109 |
| 2 | Կաղնի | 1006,7 | 111839 |
| 3 | Կաղնի ցածրաբուն | 46,7 | 2566 |
| 4 | Բոխի | 362 | 44607 |
| 5 | Բոխի ցածրաբուն | 65,6 | 5043 |
| 6 | Հացենի | 5,8 | 510 |
| 7 | Ուռենի ծառ | 2,4 | 80 |
| 8 | Տանձենի | 3,7 | 400 |
| 9 | Ցաքի | 3,7 | 58 |
| | **Ընդամենը** | **1497,5** | **165212** |

Բոնիտետային դասը որոշվել է միջին տարիքով և միջին բարձրությամբ անտառի հիմնական էլեմենտի համար (շարահարկ)։ Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ արգելավայրում անտառածածկ մակերեսի ընդհամենը 10,4%-ն է 2-3 բոնիտետային դասերի, 4-րդ բոնիտետային դասի ծառուտները կազմում են 700,6հա (46,8%), իսկ 5-5ա բոնիտետային դասերը միասին՝ 641,5հա (42,8%)։ Արգելավայրի ծառուտների միջին բոնիտսային դասը գնահատվել է 4,3։

**Աղյուսակ 26. Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ բոնիտետային դասերի**

| № | Գերակշռող ծառատեսակը | Բոնիտետային դասեր | | | | | | Միջին բոնիտետ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2 | 3 | 4 | 5 | 5ա | Ընդ, հա | |
| 1 | Սոճի | | 0,6 | | 0,3 | | 0,9 | 3,7 |
| 2 | Կաղնի | 4,8 | 55,2 | 458,2 | 479,3 | 9,2 | 1006,7 | 4,4 |
| 3 | Կաղնի ցածրաբուն | | | 1,7 | 25,5 | 19,5 | 46,7 | 5,4 |
| 4 | Բոխի | 14,9 | 74,1 | 237 | 36 | | 362 | 3,8 |
| 5 | Բոխի ցածրաբուն | | | | 58,8 | 6,8 | 65,6 | 5,1 |
| 6 | Հացենի | 5,8 | | | | | 5,8 | 2 |
| 7 | Ուռենի ծառ | | | | 2,4 | | 2,4 | 5 |
| 8 | Տանձենի | | | 3,7 | | | 3,7 | 4 |
| 9 | Ցաքի | | | | 1,5 | 2,2 | 3,7 | 5,6 |
| **Ընդհանուր** | | **25,5** | **129,9** | **700,6** | **603,8** | **37,7** | **1497,5** | **4,3** |

## Բաժին 5. ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

### 5.1 Ընդհանուր տեղեկություններ

Անտառտնտեսությանը որպես հարակից բնակավայրեր ընդունվել են անտառների 5կմ-ոց գոտում ընկած բնակավայրերը, որոնք ներառված են Գորիս խոշորացված համայնքի 13, Տաթև խոշորացված համայնքի 8 և Տեղ խոշորացված համայնքի 7 բնակավայրեր (աղյուսակ 27, Քարտեզ 16):

**Աղյուսակ 27. Ընդհանուր տվյալներ բնակավայրերի վերաբերյալ**

| № | Բնակավայրի անվանումը | Հեռավորությունը մարզկենտրոնից, կմ | Հեռավորությունը Գորիսից, կմ | Բարձրությունը ծովի մակարդակից, մ | Բնակչության թվաքանակը | Հողային ֆոնդը,հա | | Գազաֆիկացում |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Ընդհանուր | Որից գյուղատնտեսական | |
| | Գորիս խոշորացված համայնք | | | | | | | |
| 1 | Գորիս քաղաք | 67 | | 1250-1520 | 20937 | 5039 | 4035 | + |
| 2 | Ակներ գյուղ | 69 | 4 | 1700 | 1118 | 3952 | 3733 | + |
| 3 | Աղբուլաղ գյուղ | Նախկինում ընդգրկված է եղել Շուռնուխ գյուղի կազմում | | | | | | |
| 4 | Շուռնուխ գյուղ | 37 | 28 | 1450 | 154 | 2344 | 720 | - |
| 5 | Բարձրավան գյուղ | 48 | 33 | 1520 | 112 | 2975 | 995 | + |
| 6 | Խնձորեսկ գյուղ | 78 | 13 | 1580 | 2005 | 6991 | 6223 | + |
| 7 | Հարթաշեն գյուղ | 79 | 14 | 1350 | 677 | 3167 | 2902 | + |
| 8 | Ձորակ գյուղ | Նախկինում ընդգրկված է եղել Շուռնուխ գյուղի կազմում | | | | | | |
| 9 | Ներքին Խնձորեսկ գյուղ | 86 | 21 | 1540 | 249 | 624 | 577 | + |
| 10 | Որոտան գյուղ | 50 | 15 | 1600 | 295 | 326 | 75 | - |
| 11 | Վանանդ գյուղ | Նախկինում ընդգրկված է եղել Շուռնուխ գյուղի կազմում | | | | | | |
| 12 | Վերիշեն գյուղ | 68 | 3 | 1600 | 2096 | 4762 | 4396 | + |
| 13 | Քարահունջ գյուղ | 61 | 4 | 1250 | 1376 | 1969 | 1735 | + |
| | Տաթև խոշորացված համայնք | | | | | | | |
| 1 | Շինուհայր գյուղ | 79 | 17 | 1480 | 2598 | 5245 | 5055 | + |
| 2 | Տաթև գյուղ | 60 | 36 | 1610 | 1042 | 7637 | 5216 | - |
| 3 | Հալիձոր գյուղ | 74 | 23 | 1250 | 602 | 2777 | 1456 | - |
| 4 | Հարժիս գյուղ | 90 | 24 | 1700 | 831 | 5630 | 5337 | - |
| 5 | Սվարանց գյուղ | 62 | 40 | 1700 | 283 | 1621 | 1563 | - |
| 6 | Խոտ գյուղ | 83 | 12 | 1350 | 890 | 1795 | 1592 | + |
| 7 | Տանձատափ գյուղ | 58 | 43 | 1400 | 103 | 809 | 294 | - |
| 8 | Քաշունի գյուղ | 48 | 55 | 1500 | 15 | 858 | 808 | - |
| | Տեղ խոշորացված համայնք | | | | | | | |
| 1 | Տեղ գյուղ | 85 | 20 | 1360 | 2234 | 3867 | 3594 | + |
| 2 | Արավուս գյուղ | 87 | 22 | 2390 | 168 | 443 | 410 | + |
| 3 | Խնածախ գյուղ | 96 | 31 | 1380 | 823 | 3237 | 3130 | + |
| 4 | Խոզնավար գյուղ | 112 | 45 | 1592 | 366 | 2121 | 1917 | + |
| 5 | Կոռնիձոր գյուղ | 90 | 25 | 1125 | 1071 | 2417 | 2277 | + |
| 6 | Վաղատուր գյուղ | 102 | 37 | 1550 | 400 | 2275 | 2057 | + |
| 7 | Քարաշեն գյուղ | 81 | 16 | 1540 | 528 | 1370 | 1323 | + |

Բնակավայրերը տարբեր հեռավորությունների վրա են գտնվում մարզկենտրոնից՝ 37-112կմ, մարզային քաղաքներից կամ Երևանից, որոնք էլ հանդիսանում են գյուղատնտեսական արտադրանքի իրացման հիմնական շուկաները: Բնակավայրերը տարբերվում են նաև ծովի մակարդակից ունեցած բարձրությամբ՝ 1125-2390մ, ինչն իր հետքն է թողնում գյուղատնտեսության մասնագիտացման վրա: Համեմատաբար ցածրադիր շրջաններում ավելի զարգացած է մանր եղջերավոր անասնապահությունն ու պտղաբուծությունը, վերին շրջաններում՝ խոշոր եղջերավոր անասնապահությունն ու հողագործությունը: Սեփական բնակելի տներին կից այգիներում մշակում են խնձորենի, տանձենի, բալենի, ընկուզենի, հաղարջենի և այլ պտղատու ծառեր ու թփեր: ՀՀ կառավարության 26.06.2009թ ««Տաթև» զբոսաշրջային կենտրոն հայտարարելու մասին» N848-Ն որոշմամբ «Տաթև» վանական համալիրը և հարակից՝ ՀՀ Սյունիքի մարզի Խոտի, Շինուհայրի, Հալիձորի, Տաթևի, Սվարանցի, Տանձատափի, Աղվանիի և Բարձրավանի գյուղական բնակավայրերը հայտարարվել է զբոսաշրջային կենտրոն: Նույն որոշմամբ հաստատվել են «Տաթև» զբոսաշրջային կենտրոնի զարգացման ծրագրի հայեցակարգային նպատակները և գերակա խնդիրները:

2010թ բացվել է աշխարհում ամենաերկար «Տաթևի թևեր» ճոպանուղին, որի երկարությունը կազմում է 5,7կմ և ձգվում է Սյունիքի մարզի Հալիձոր գյուղից մինչ Տաթև վանական համալիրը:

**5.2 Բնակչության սեռատարիքային բաշխվածքը**

Անտառտնտեսությանը հարակից բնակավայրերի մշտական բնակչության ընդհանուր թիվը 40973 մարդ, որից քաղաքային բնակչությունը՝ 20937 մարդ, իսկ գյուղականը 20036 մարդ:

Բնակավայրերի բնակչության որոշակի մասը ժամանակավոր կամ երկարաժամկետ բացակայողներ են: Բացակայողների մեծ մասը տղամարդիկ են, որոնց գերակշռող մասը ավելի շատ հակված կլինի վերադառնալ իրենց համայնքներ՝ սոցիալ-տնտեսական իրավիճակի փոփոխության պարագայում:

**5.3 Աշխատանքային միգրացիա**

Երիտասարդ ընտանիքների շրջանում նկատվում է իրենց գյուղական բնակավայրերը լքելու միտում՝ պայմանավորված ավելի լավ ապրելակերպի ապահովման ձգտումով: Վերջին տարիներին աճել է նաև աշխատանքային միգրացիայի ցուցանիշը, ինչն անհանգստացնող է, և պայմանավորված է 44-օրյա պատերազմի հետևանքով, մշտական եկամուտների թուլացմամբ՝ վառելիքի, պարարտանյութերի թանկացմամբ, ընդհանուր տնտեսական ակտիվացման թուլացմամբ, վատ ապրելակերպով և այլն: Ժամանակավոր կամ երկարաժամկետ բացակայողները հիմնականում տղամարդիկ են, որոնց գերակշռող մասը ավելի շատ

հակված կլինի վերադառնալ իրենց համայնքներ՝ սոցիալ-տնտեսական իրավիճակի փոփոխության պարագայում:

Մարդկային ռեսուրսների զարգացման առումով մասնավորապես անհրաժեշտ է իրականացնել տեղեկացվածության և վստահության բարձրացման, կրթական և վերապատրաստման, լրացուցիչ շահագրգռվածության ստեղծման լայնածավալ միջոցառումներ:

## 5.4 Սոցիալական ենթակառուցվածքների և ծառայությունների առկայությունը

Հետազոտված բնակավայրերի մեծ մասում գործում են մանկապարտեզներ և նախակրթարաններ: Հետազոտված բնակավայրերում գործում են տարրական, հիմնական, ավագ կամ միջնակարգ դպրոցներ: Իրավիճակը դպրոցների մեծամասնությունում գոհացուցիչ չէ: Վերանորոգման կարիք ունեն ոչ քիչ դպրոցներ, նաև կահույքի, սպորտային և ուսուցողական նյութերի: Սպորտային ակումբներ և ենթակառուցվածքներ գյուղական բնակավայրերում դրեթե չկան՝ բացառությամբ դպրոցների մի մասի սպորտային դահլիճների: Համեմատաբար լավ է պատկերը քաղաքային բնակավայրում:

Առողջապահական ենթակառուցվածքների վիճակը բնակավայրերում վատ չէ. բնակավայրերում առկա են բուժկետեր և ամբուլատորիաներ, որտեղ վերապատրաստված բուժաշխատողները առաջին օգնության ծառայություններ են մատուցում բնակչությանը: Բարձրակարգ ու կլինիկական բժշկական ծառայություններն հասանելի են միայն քաղաքներում:

Գյուղական բնակավայրերի մշակութային կյանքը բարելավման լուրջ կարիք ունի: Մշակույթի և կամ կենցաղի տների շենքային պայմանները գրեթե ամենուր վատ վիճակում են, մշակութային իրադարձությունները եզակի են: Համեմատաբար այլ է վիճակը տուրիստական կենտրոններում, որտեղ մյուս բնակավայրերի համեմատ դիտվում է մշակութային աշխուժություն:

## 5.5 Այլ ենթակառուցվածքներ

Հետազոտված բոլոր բնակավայրերն ամբողջությամբ էլեկտրիֆիկացված են: Հետազոտված բոլոր բնակավայրերը այս կամ այն չափով ապահոված են խմելու ջրի կանոնավոր մատակարարմամբ. որոշ տեղերում առկա են ջրամատակարարման խնդիրներ: Ջրի որակն ընդհանուր առմամբ բավարար է: Անտառտնտեսությանը հարակից բնակավայրերից գազաֆիկացված են 18-ը: Հետազոտված բնակավայրերի մեծ մասում թեև ոչ բավարար հաճախ, իրականացվում է աղբահեռացում: Միաժամանակ մտահոգիչ է աղբավայրերի առկայության և որպես աղբավայր օգտագործվող տարածքների վիճակը:

## 5.6 Գյուղատնտեսություն

Անտառտնտեսության հարակից համայքներում գյուղատնտեսության վիճակը բավարար չէ՝ ոռոգվող հողատարածքների սակավություն, ֆիզիկապես և բարոյապես մաշված գյուղատնտեսական մեքենասարքավորումներ, հողագործության մեջ ներդրումներ անելու համար սկզբնական կապիտալի բացակայություն, գյուղմթերքի պահպանման ենթակառուցվածքների անբավարարություն և այլն: Բնակավայրերի մեծամասնությունում բանջար-բոստանային կուլտուրաների արտադրությունը հիմնականում ուղղված է տնտեսությունների սեփական կարիքների բավարարմանը և հիմնականում աճեցվում են ոռոգվող տնամերձ հողամասերում:

Համայնքներն ունեն անասնապահության զարգացման պոտենցիալ, որն առաջին հերթին պայմնավորված է բնակավայրերի մեծ մասում արոտավայրերի սգալի տարածքների առկայությամբ: Սակայն ոլորտում առկա են որոշակի խնդիրներ, իմչպիսին են կենդանական ծագման արտադրանքի իրացման ոչ կայուն շուկան, հեռագնա արոտավայրերի ճանապարհների վատ վիճակը, դրանց մեծ մասի ոչ ջրարբիացված լինելը, բնակավայրերի մոտակա արոտավայրերի գերարածեցումը, պարբերաբար կրկնվող համաճարակները, որոշ արոտավայրեր սահմանամերձ լինելու հանգամանքը և այլն: Համայնքներում գյուղատնտեսության ոլորտում առկա խնդիրների մեծ մասը պայմանավորված է գյուղատնտեսական ենթակառուցվածքների վատ վիճակով, դրանց մեծ մասը մնացել են դեռևս խորհրդային ժամանակներից: Դրանք ֆիզիկապես և բարոյապես մաշված են և չեն կարող նպաստավոր լինել արդյունավետ գյուղատնտեսության վարման տեսանկյունից: Գյուղատնտեսական մեքենասարաքավորումները բնակավայրերում հիմնականում նորացման, արդիականացման կարիք ունեն:

## 5.7 Անտառտնտեսության հարակից տարածքներում սոցիալ-տնտեսական հետազոտությունների իրականացում

Հետազոտությունների իրականացման նպատակն էր գնահատել անտառային պաշարների ազդեցությունը և եկամուտների ստացման հնարավորությունները) և նշանակությունը տեղական կարիքների բավարարման տեսանկյունից:

Հետազոտությունները իրականացվել են 2010թ. «Անտառային օրենսդրության կիրարկման բարելավում եվրոպական հարևանության քաղաքականության արևելյան երկրներում և Ռուսաստանում» տարածաշրջանային ծրագրի (ENPI-FLEG) շրջանակում մշակված հարցաշարով՝ կատարված որոշակի փոփոխություններով:

**Հարցումներն** իրականացվել են ծրարված հարցաթերթիկները տնային տնտեսություններում բաժանելու, ինչպես նաև պատահական վայրերում հանդիպած մարդկանց հետ հարցաթերթիկը տեղում լրացնելու ճանապարհով: Հարցումներն իրականացվել են Գորիս քաղաքում(բազմաբնակարան շենքերում և մասնավոր տներում), ինչպես նաև 12 գյուղական բնակավայրերում: Սույն հաշվետվությունում

ներկայացվում է հարցաշարի հիմնական կետերի հարցման արդյունքների վերլուծությունը (Տե՛ս հավելված 2):

### 5.8 Անտառամերձ բնակավայրերի բնափայտի կարիքների գնահատում

Անտառտնտեսությանը հարակից Գորիս քաղաքը և 27 բնակավայրերը տեղաբաշխված են անտառտնտեսության անտառների 5կմ-ոց գոտում, ընդհանուր հաշվով քաղաքի բնակչության թիվը մոտ 20937, գյուղական բնակավայրերում 20036: Բնակավայրերից 8-ը դեռևս գազաֆիկացված չեն կամ գտնվում են շինարարական փուլում: Ջեռուցման փայտի նվազագույն պահանջարկը ընդհանուր հաշվով կազմում է մոտ 35000մ$^3$: Նախատեսվող հատումներից հնարավոր է բավարարել տարեկան ընդհամենը 900խտմ$^3$:

Դաշտային գույքագրման ընթացքում հաշվարկվել է նաև անտառտնտեսության անտառներում առկա բնական թափուկ բնափայտի պաշարը, (շուրջ 30000 մ$^3$) ընդ որում թափուկ բնափայտի քանակական և որակական գնահատման նկարագիրը հետևյալն է.

- 19500մ$^3$ (65%) - 5 և ավել տարիների վաղեմությամբ, բնակավայրերից ու ճանապարհներից մեծ հեռավորությունների վրա և հիմնականում դժվարամատչելի տեղանքներում, մեծ մասը գտնվում են քայքայման փուլում, հիմնականում կորցրել են անհրաժեշտ որակական հատկանիշները, արտահանման համար էլ կպահանջվի տեխնիկական և նյութական մեծ ներդրումներ:
- 10500մ$^3$ (35%) - տեխնիկական հատկությունները դեռևս պահպանած բնափայտն է, ցրված անտառտնտեսության ողջ տարածքում, 1հեկտարում միջին 3-5մ$^3$, իրացման տեսանկյունից համեմատաբար մատչելի տեղանքներում, հիմնականում մանր և միջին (4-25 սմ տրամագիծ) բնափայտի տեսքով, որից և օգտվում է ազգաբնակչությունը:

Յուրաքանչյուր տարում անտառտնտեսության անտառներում առաջացած բնական թափուկը կազմում է մոտ 4000մ$^3$ (ընթացիկ աճի մոտ 30%-ը կամ անտառածածկի 1հա-ի հաշվով մոտ 0,4մ$^3$), որից համայնքների մոտակա տարածքների բնափայտը գրեթե ամբողջությամբ իրացվում է ազգաբնակչության կողմից ջեռուցման նպատակներով, իսկ հեռավոր տարածքների և դժվարամատչելի տարածքների թափուկ բնափայտի մեծ մասը չի իրացվում:

## Բաժին 6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ԱՆՏԱՌՆԵՐ

Բարձր բնապահպանական արժեք ունեցող անտառների հայեցակարգը առաջարկվել է Անտառի հոգաբարձուների խորհրդի կողմից 1999 թվին: Ներկայումս այս հասկացությունն ունի ավելի լայն օգտագործման շրջանակներ՝ կիրառվելով տարածքների գործառնական գոտիավորման կամ բնության պահպանության գերակա օբեկտների ընտրության համար: Համաձայն այդ հայեցակարգի ԲԲԱԱ-ների խմբին դասվում են այն անտառները, որոնք անհրաժեշտ են մարդկանց գոյության, ինչպես նաև Երկիր մոլորակի կենսոլորտի պահպանության համար: ԲԲԱԱ-ի առանցքային դերը կապված է դրանց բարձր էկոլոգիական, սոցիալ-տնտեսական, ինչպես նաև կենսաբազմազանության պահպանությունն ապահովող արժեքների հետ:

Ներկայումս հիմնականում օգտագործվում է անգլիական ProForest կազմակերպության կողմից առաջարկված ԲԲԱԱ-ի դասակարգումը (2004), որի համաձայն ԲԲԱԱ-ը բաժանվել են վեց տիպերի՝ որոնց որոշումը, առանձնացումը և արդյունավետ կառավարումը սերտորեն կապված է տվյալ երկրի առանձնահատկությունների հետ՝ անտառային զանգվածների վիճակի, կենսաբազմազանության հարստության և դրա պահպանության համար տարվող քաղաքականության, անտառների կառավարման կառույցների, անձնակազմի պատրաստակամության և այլն:

Սյունիքի անտառտնտեսության տարածքում բնապահպանական բարձրարժեք անտառները առանձնացվել են ըստ Ազգային ուղեցույցում (2016) բերված մեթոդաբանության:

### 6.1. ԲԲԱԱ 1. Անտառային տարածքներ, որտեղ ներկայացված է միջազգային, տարածաշրջանային կամ ազգային նշանակություն ունեցող կենսաբազմազանություն

**Ենթատիպ ԲԲԱԱ 1.1. ԲՀՊՏ-ներ**

Ելնելով երկրի առանձնահատկություններից, ԲՀՊՏ-ի կատեգորիայից, դրանում առկա անտառների և կենսաբազմազանության վիճակից, որպես ԲԲԱԱ 1.1 կարող է սահմանվել պահպանվող տարածքը ամբողջությամբ կամ դրա անտառային զանգվածի որոշակի մասը: Սյունիքի անտառտնտեսության կազմում է ընդգրկված Գորիսի պետական արգելավայրը (1930հա): Ողջ արգելավայրը կարող է առանձնացվել որպես 1.1 ենթատիպի ԲԲԱԱ:

**Ենթատիպ ԲԲԱԱ 1.2. Հազվագյուտ և անհետացող տեսակների կուտակման վայրեր**

Անտառտնտեսության տարածքում հայտնաբերվել են հետևյալ հազվագյուտ և անհետացող հետևյալ բուսատեսակները.

| | | |
|---|---|---|
| 1. | Galanthus artjuschenkoae Gabrielian | Ձնծաղիկ Արտյուշենկոյի |
| 2. | Amygdalus nairica Fed. et Takht. | Նշենի նաիրյան |
| 3. | Lathyrus setifolius L. | Տափոլոռ խոզանատերև |
| 4. | Onobrychis meschetica Grossh. | Կորնգան մեսխետական |
| 5. | Iris lineolata (Trautv.) Grossh. | Հիրիկ նեղգծային |
| 6. | Botrychium lunaria (L.) Sw. | Ողկուզապտեր կիսալուսնաձև |
| 7. | Orchis punctulata Steven ex Lindl. | Խոլորձ կետավոր |
| 8. | Crataegus tournefortii Griseb. | Ազնի Տուրնեֆորի |
| 9. | Crataegus ulotricha Pojark. | Ազնի գանգրամազիկավոր |
| 10. | Astragalus agasii Manden | Գազ Աղասու |
| 11. | Sclerochloa woronowii | Կարծրախոտ Վորոնովի |
| 12. | Lycium anatolicum | Հազազ անատոլիական |
| 13. | Psephellus zangezuri | Պսեֆելլուս զանգեզուրի |
| 14. | Verpa helvelloides Krombh | Վերպա կոնաձև |

Հազվագյուտ և անհետացող տեսակների կուտակման վայրերի ընդհանուր մակերեսը հաշվարկվել է 172,9հա:

**Ենթատիպ ԲԲԱԱ 1.3. Էնդեմիկ տեսակների կուտակման վայրեր**

Սյունիքի անտառտնտեսության տարածքում Հայաստանի էնդեմիկ տեսակներ գրանցված չեն:

**Ենթատիպ ԲԲԱԱ 1.4. կենդանիների առանցքային սեզոնային ապրելավայրեր**

Ենթատիպին վերաբերվող տարածքները հիմնականում համընկնում են Գորիսի պետական արգելավայրի տարածքներին:

## 6.2. ԲԲԱԱ 2. Միջազգային, տարածաշրջանային կամ ազգային նշանակություն ունեցող խոշոր անտառային լանդշաֆտներ

Խոշոր անտառային լանդշաֆտներ, որտեղ գոյություն ունեն բնականում հանդիպող տեսակների կենսունակ պոպուլյացիաները՝ իրենց բնորոշ տարածվածությամբ և առատությամբ: ԲԲԱԱ-ի տիպը Սյունիքի անտառտնտեսության տարածքում բացակայում է:

## 6.3. ԲԲԱԱ 3. Անտառային տարածքներ, որոնք ներառում են հազվագյուտ կամ անհետացման վտանգի տակ գտնվող էկոհամակարգեր

Սյունիքի անտառտնտեսության տարածքում հանդիպում է հազվագյուտ էկոհամակարգը՝ F5.3421 - Նշենի նայիրյանի (Amygdalus nairica) նոսրանտառները, որն ամբողջությամբ ներառված է ԲԲԱԱ 1.2 -ում:

## 6.4. ԲԲԱԱ 4. Անտառային տարածքներ, որոնք իրականացնում են պաշտպանական հատուկ գործառույթներ

Անտառային տարածքների կողմից տրամադրվող էկոհամակարգային ծառայությունների շարքում առանձնահատուկ նշանակություն ունեն անտառների **ջրապաշտպան և հակաէռոզիոն** գործառույթները, որոնք էական նշանակություն ունեն տարբեր էկոհամակարգերի հավասարակշռության պահպանման և մարդկանց կենսամակարդակի ու բարեկեցության ապահովման համար: ԲԲԱԱ 4 տիպի առանձնացումը և կառավարման բարելավումն ուղղված է այդպիսի անտառների խոցելիության նվազեցմանը և դրանց էկոհամակարգային ծառայություններին սպառնացող ռիսկերի կանխարգելմանը:

**Ենթատիպ ԲԲԱԱ 4.1. Ջրապաշտպան հատուկ նշանակություն ունեցող անտառներ:**

ԲԲԱԱ 4.1 ենթատիպը սահմանված է ջրային օբյեկտների՝ գետեր, լճեր, լճակներ, ջրա-ճահճային տարածքներ, բնական ջրային գոյացումներ առափնյա անտառների համար, որոնց պահպանությունը կարող է կանխարգելել անտառտնտեսական գործողությունների բացասական ազդեցությունը բնական հուների կայունության, ջրի որակի ու քանակի, ջրային էկոհամակարգերի բարվոք վիճակի վրա, ինչպես նաև պահպանել ափամերձ տարածքների տեսակային բազմազանությունը: Նման անտառներն ապահովում են մաքուր ջրի շարունակական մատակարարում՝ կենցաղային, արդյունաբերական ու գյուղատնտեսական նպատակներով աճող ջրապահանջարկի պայմաններում:

Ըստ Ազգային ուղեցույցի, ԲԲԱԱ 4.1 ենթատիպի չափանիշներին համապատասխանող անտառների համար սահմանվում են հետևյալ շեմերը՝

- 5կմ-ից ավելի երկարությամբ գետերի և գետակների երկայնքով ձգվող 200մ լայնությամբ անտառաշերտերը,
- 3-5կմ երկարությամբ գետերի և գետակների երկայնքով ձգվող 100մ լայնությամբ անտառաշերտերը,
- բնակավայրի խմելու ջրի գոյացման հիմնական աղբյուրի շուրջ 300մ շառավիղով անտառաշերտերը,
- ջրամբարների շուրջ 200մ շառավիղով անտառաշերտերը,
- աղբյուրների շուրջ 100մ շառավիղով անտառաշերտերը:

Հաշվի առնելով այս շեմերը, առանձնացվել են ԲԲԱԱ 4.1 ենթատիպի տարածքները, որոնք զբաղեցնում են 1250,0հա:

ԲԲԱԱ 4.3 ենթատիպի անտառները (հակահրդեհային հատուկ նշանակություն ունեցող անտառներ) անտառտնտեսությունում բացակայում են:

## 6.5. ԲԲԱԱ 4.2 ԵՎ ԲԲԱԱ 5

ԲԲԱԱ 4.2 ենթատիպը (հակաէռոզիոն հատուկ նշանակություն ունեցող անտառներ) միացրել ենք ԲԲԱԱ 5-ին (անտառային տարածքներ, որոնք անհրաժեշտ

են տեղական բնակչության կենսապահովման համար), քանի որ վերջինս զբաղեցնում է Սյունիքի անտառտնտեսության գրեթե կեսը, և ԲԲԱԱ 4.2-ի զբաղեցրած տարածքները համընկնում են ԲԲԱԱ 5-ի հետ:

Ազգային ուղեցույցում ԲԲԱԱ 4.2 ենթատիպի համար սահմանվել են հետևյալ չափանիշները և շեմերը՝

- 30°-ից ավել թեքության լանջերում տեղաբաշխված անտառներ,
- Բնակավայրերի շրջակա սելավավտանգ լանջերին աճող 200մ լայնությամբ անտառաշերտեր, 0,6 և ավելի լրիվությամբ և 10 հա նվազագույն մակերեսով:

ԲԲԱԱ 5 տիպը ներառում է տեղաբնակների համար մեծ կարևորություն ունեցող անտառային տեղամասեր, որոնք ծառայում են որպես սննդի, ջրի, վառելիքի, դեղամիջոցների, խոտհնձի և գոյության այլ կենսապահանջներն ապահովող անփոխարինելի տարածքներ: Անտառների կողմից տրամադրվող այդ բարիքները համարվում են բնակչության համար անփոխարինելի, եթե չկան դրանք ձեռք բերելու այլընտրանքային տարբերակները կամ դրանք հասանելի չեն գոնե տարվա որոշակի ժամանակահատվածում:

Ըստ Ազգային ուղեցույցի, անտառային տարածքը կարող է ստանալ ԲԲԱԱ 5 տիպի կարգավիճակ, եթե այն համապատասխանում է հետևյալ չափանիշներից որևէ մեկին՝

- անտառը հարակից է համայնքին, որը գազաֆիկացված չէ կամ գազաֆիկացված է, սակայն բնակչության մեծ մասն անվճարունակ է,
- անտառը հարակից է համայնքին, որը մագիստրալային ճանապահներով կապված չէ խոշոր բնակավայրերի հետ, իսկ տարվա որոշ սեզոններին բնական անբարենպաստ պայմանների պատճառով ժամանակավորապես լրիվ մեկուսացված և կտրված է այլ վայրերից,
- անտառը հարակից է համայնքին, որի բնակչների նվազագույն զամբյուղի առնվազն 40% ապահովվում է անտառային ռեսուրսների օգտագործման հաշվին:

Հաշվի առնելով այս չափանիշները և շեմերը, առանձնացվել են ԲԲԱԱ 4.2 տիպի տարածքները՝ 5612,4հա:

Համաձայն ներկայացված հաշվարկների Սյունիքի անտառտնտեսության ընդհանուր տարածքի 63,5%-ը կամ անտառածածկի 92,4%-ը (8965,3հա) համարվում են բնապահպանական բարձրարժեք անտառներ (Քարտեզ 17):

## Բաժին 7. ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Անտառային էկոհամակարգերի զարգացման բնականոն հաշվեկշիռն ապահովելու նպատակով՝ հաշվի առնելով անտառկազմող ծառատեսակների կենսաբանական առանձնահատկությունները, ներկա անտառշինությունը իրականացվել է հիմք ընդունելով հատման հասակների հետևյալ դասակարգումն՝ ըստ 2005թ. ընդունված անտառային օրենսգրքի (Աղյուսակ 28):

**Աղյուսակ 28. Անտառի ըստ նպատակային նշանակության և ըստ գերակշռող ծառատեսակների հատման տարիքները**

| Ծառատեսակի անվանումը | Հասակային դասի տևողությունը | Անտառի կատեգորիան ըստ նշանակության | | |
|---|---|---|---|---|
| | | Արտադրական | Պաշտպանական | Հատուկ |
| 1. Սոճի | 20 | 121 | 141 | 161 |
| 2. Կաղնի սերմնային | 20 | 161 | 181 | 201 |
| 3. Հացենի, թեղի, թխկի | 20 | 121 | 141 | 161 |
| 4. Ընկուզենի հունական | 20 | 141 | 161 | 181 |
| 5. Կաղնի շիվային | 10 | 61 | 71 | 81 |
| 6. Բոխի սերմնային | 20 | 81 | 101 | 121 |
| 7. Լորենի | 10 | 91 | 101 | 111 |
| 8. Կեչի | 10 | 61 | 71 | 81 |
| 9. Կաղամախի, ուռենի, բարդի | 10 | 41 | 51 | 71 |
| 10. Բոխի շիվային և այլ ցածրաբուն տեսակներ | 10 | 61 | 71 | 81 |
| 11. Ղաժի | 10 | 41 | 51 | 61 |
| 12. Տանձենի, Խնձորենի | 20 | 101 | 121 | 141 |

### 7.1 Անտառշահագործման և փայտամշակման բնութագիրը

Բնափայտի պատրաստումը կատարվում է՝

- հատման նշանակված կանգուն ծառերի հատում բենզասղոցով,
- շինափայտի, վերամշակման ենթակա փայտի և վառելափայտի առանձնացում և կուտակում անտառում,
- անտառից տեղափոխում մեքենայի բարձման հարթակ տրակտորով կամ հատուկ տեխնիկայով,
- բարձումը և բեռնաթափումը կատարվում է ձեռքով:

Անտառտնտեսությունում անտառանյութի մթերումը կատարվում է պայմանագրային և ինքնապատրասման եղանակով՝ գնորդների կողմից:

Անտառտնտեսությունում հատուկ անտառպատրաստման արտադրություն և անտառհումքային բազաներ չկան:

### 7.2Բնափայտային անտառօգտագործում

Անտառտնտեսությունում բնափայտը մթերվում է անտառի խնամքի և սանիտարական հատումներից, մասամբ նաև այլ հատումներից:

Անտառտնտեսությունում 2000 – 2007 թվականներին բնափայտային անտառօգտագործման ընդհանուր ծավալը կազմել է 43406խտմ³, նույն թվում կանգունից 36313խտմ³, թափուկից՝ 7094խտմ³: Հաջորդող 2008 – 2022 թվականներին ընդհանուր ծավալը կազմել է 63060,7խտմ³, թափուկից՝ 3940խտմ³:

### 7.2.1 Անտառվերականգնման հատումներ

Համաձայն անտառվերականգնման հատումների իրականացման կարգի, անտառվերականգնման հատումներ նշանակվում են բացառապես արտադրական նշանակության հասուն և գերհասուն անտառներում, որի նպատակն է անտառային պաշարների կայուն և արդյունավետ օգտագործման, անտառի ջրապահպան, ջրակարգավորիչ և պաշտպանական հատկանիշների ամրապնդման, անտառվերականգնման, տնտեսապես արժեքավոր ծառատեսակների վերարտադրության, անտառի արտադրողականության բարձրացման, բնական միջավայրի բարելավման ու պահպանման բարելավումը, ինչպես նաև հասուն և գերհասուն տարիքի ծառերի փոխարինումը երիտասարդ, բարձրարժեք ծառատեսակներով:

Հիմք ընդունելով Հայաստանի անտառներում անտառվերականգնման հատումների իրականացման կարգը (ՀՀ կառավարության 07 սեպտեմբերի 2006թ. N:1412-Ն որոշում), դաշտային գույքագրման և գնահատման արդյունքներով անտառվերականգնման հատումներ նշանակվել են միայն Շուռնուխի անտառպետության արտադրական նշանակության անտառներում, առանձնացվել են անտառվերականգնման հատումներ իրականացման ենթակա տարածքները՝ ընդհանուր 73,4հա մակերեսով, հատվածներում ընդհանուր պաշարը 14514խտմ³, հատման նախատեսած պաշարը՝ 1442խտմ³, որից շինափայտի պաշարը՝ 74մ³ (Աղյուսակ 29): Անտառվերականգնման հատումներն ամբողջությամբ նախատեսվում է բոխու գերակշռությամբ ծառուտներում և ամբողջ ծավալը պատկանում է 3-րդ ապրանքային դասին:

**Աղյուսակ 29. Ամփոփագիր անտառվերականգնման հատումների հաշվարկային ծավալների**

| Անտառտնտեսություն | Քառակուսու № | Հատվածի № | Մակերեսը, հա | Լանջի կողմնադրություն, թեքություն, ° | ԾՄԲ | Ծառուտի կազմը | Բոնիտետը | Լրիվությունը | Տարիքը | Հատվածի պաշարը,*խտ մ³ | Հատման համար նախատեսվող պաշարը, խտմ³ | Իրացվող | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | Ընդամենը | Շինափայտ | Վառելափայտ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| Շուռնուխի | 3 | 15 | 2,5 | Հս-30 | 1310 | 7բ3կ+թխ,hg | 3 | 0,6 | 90 | 488 | 50 | 42 | 15 | 16 |
| | 9 | 15 | 2,5 | Հս-ամ20 | 1330 | 8բ1կ1hg+թխ | 4 | 0,6 | 85 | 400 | 40 | 34 | 2 | 40 |
| | 11 | 40 | 4,8 | Աւ-30 | 1480 | 7բ3կ+hg,թխ | 3 | 0,6 | 90 | 1030 | 100 | 85 | 2 | 32 |
| | 12 | 20 | 6,7 | Ամ-30 | 1450 | 7բ3կ+hg,թխ | 3 | 0,6 | 90 | 1307 | 130 | 110 | 5 | 80 |
| | 12 | 21 | 5,6 | Հս-ամ25 | 1500 | 9բ1hg+կ,թխ | 3 | 0,6 | 90 | 1047 | 100 | 85 | 8 | 102 |
| | 17 | 22 | 12,2 | Հս-աւ15 | 1620 | 10բ+թխ,կ,hg<br>Առ ծառ 8կ2բ | 3 | 0,7 | 85<br>130 | 2245<br>61 | 226 | 192 | 5 | 80 |
| | 17 | 24 | 1,6 | Հս-30 | 1710 | 8բ2կ+թխ | 3 | 0,7 | 90 | 365 | 36 | 29 | 12 | 180 |
| | 18 | 14 | 4,4 | Աւ-20 | 1840 | 6բ4կ+hg,թխ | 3 | 0,7 | 90 | 1025 | 102 | 85 | 1 | 28 |

| Անտառտնտեսություն | Քառակուսու № | Հատվածի № | Մակերեսը, հա | Լանջի կողմնադրություն, թեքություն, ° | ԾՄԲ | Ծառուտի կազմը | Բոնիտետը | Լրիվությունը | Տարիքը | Հատվածի պաշարը,*խտ մ³ | Հատման համար նախատեսվող պաշարը, խտմ³ | Իրացվող | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | Ընդամենը | Շինափայտ | Վառելափայտ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| | | | | | | Առ ծառ 8կ2բ | | | 150 | 44 | | | | |
| | 18 | 28 | 2,9 | Ալ-25 | 1850 | 7բ3կ+hg,թխ | 4 | 0,6 | 90 | 542 | 60 | 51 | 5 | 80 |
| | 18 | 29 | 1,7 | Հվ-ալ20 | 1790 | 8բ2կ+թխ,hg | 4 | 0,6 | 90 | 296 | 30 | 25 | 3 | 48 |
| | 24 | 2 | 10,2 | Հս-20 | 1780 | 8բ2կ+թխ,hg | 3 | 0,6 | 90 | 2040 | 200 | 185 | 1 | 24 |
| | 24 | 40 | 7,7 | Ալ-30 | 1580 | 8բ2կ+թխ,hg | 4 | 0,7 | 90 | 1378 | 138 | 117 | 10 | 175 |
| | 25 | 15 | 6,5 | Ալ 25 | 1690 | 7բ3կ+hg,թխ | 3 | 0,7 | 90 | 1515 | 150 | 128 | 8 | 109 |
| | 28 | 8 | 4,2 | Ալ-25 | 1630 | 7բ3կ+թխ | 4 | 0,6 | 90 | 731 | 80 | 70 | 8 | 120 |
| **Ընդմենը** | | | **73,4** | | | | | | | **14514** | **1442** | **1238** | **74** | **1164** |

### 7.2.2 Խնամքի հատումներ

Համաձայն անտառակառավարման պլանների մշակման հրահանգի՝ խնամքի հատումները նշանակվում են այն բոլոր ծառուտների համար, որոնք անտառագիտական հասկացողությամբ խնամք են պահանջում:

2007թ. կառավարման պլանով նախատեսված է եղել իրականացնել խնամքի հատումներ, ընդհանուր՝ 917 հեկտարի վրա, հատման նախատեսած ընդհանուր պաշարը 18870խտմ³, նույն թվում լուսավորման և մաքրման հատում 17,3 հեկտարի վրա, նոսրացման հատումներ՝ 86,7 հեկտարի վրա, հատման նախատեսած ընդհանուր պաշարը 1507խտմ³ և անցումային հատումներ՝ 817,3 հեկտարի վրա, հատման նախատեսած ընդհանուր պաշարը 17312խտմ³:

| «Սատանի կամուրջ» բնական կամուրջ | Տաթև գյուղից մոտ 2.5 կմ հս-Ալ Հալիձորի վարչական սահմանագծին հարակից, Որոտան գետի կիրճի ամենից խոր մասում Բարձրությունը ծովի մակարդակից 1000 մ: | Երկրաբանական հուշարձան |
| «Բնական թունել» | Քարահունջ գյուղի մոտ, Գորիս-Կապան խճուղու վրա | Երկրաբանական հուշարձան |
| «Որոտան» աղբյուր | Որոտան գյուղի հս. ծայրամասում | Ջրաերկրաբանական հուշարձան |
| «Շռան» աղբյուր | Քաշունի գյուղից 1.2 կմ հվ-Ալ., ծ.մ-ից 1930 մ բարձրության վրա | Ջրաերկրաբանական հուշարձան |
| «Սպիտակջուր» աղբյուր | Տանձատափ գյուղից 1.4 կմ հվ, անանուն գետակի ձախ ափին, ծ.մ-ից 1480 մ բարձրության վրա | Ջրաերկրաբանական հուշարձան |
| «Որոտան» բնապատմական համալիր | Որոտան գյուղի հվ-արմ. եզրին աջ ու ձախ ափերին | Բնապատմական հուշարձան |
| Հին Գորիսի («Կյորես») հրաբխային ապարներ | Գորիս քաղաքի Ալ. մասում, Վարարակ գետի ձախ ափին | Բնապատմական հուշարձան |

Հարկ է նշել, որ հաստատված ցանկում ներառված բնության հուշարձանները չունեն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքով նախատեսված անձնագրեր, քարտեզագրված և ճշգրտված չեն դրանց պահպանման գոտիները, սահմանազատված չեն հողամասերը, ինչը նախատեսված չէ անտառշինական աշխատանքների տեխառաջադրանքում: Նշվածը հնարավոր է իրականացնել միջազգային կամ բյուջետային ֆինանսավորման ծրագրերով, ինչպես ՀՀ 2012 թ. պետական բյուջեի շրջանակներում իրականացվել է «ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի տարածքներում գտնվող բնության հուշարձանների հաստատված ցանկի համալրման, պահպանման գոտիների տարածքների ճշգրտման, հողամասերի սահմանազատման և քարտեզագրման աշխատանքներ» ծրագիրը:

## 9.2 Պատմամշակութային հուշարձաններ

Սյունիքի ենթաշրջանի բնակավայրերում և շրջակա տարածքներում առկա են ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին հաստատված ցանկում ներառված պատմամշակութային շուրջ 500 հուշարձաններ՝ խաչքարեր, բնակելի քարայրեր, 19-րդ դարի և 20-րդ դարի սկզբների կառուցված տներ և այլ կառույցներ, միայն Գորիս քաղաքում 278 հուշարձան, որոնցից որոշները կներառվեն Սյունիքի անտառտնտեության համար մշակվող զբոսաշրջության ծրագրում:

Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկից առանձնացվել է Սյունիքի անտառտնտեսության տարածքի և հարակից տարածքների պատմական հուշարձանների վերաբերյալ տվյալները: Դրանք քարտեզագրվել են ըստ հուշարձանների խմբերի:

Տուրիստական ծառայությունների զարգացումը (ուղիներ, ձիարշավներ, քայլարշավներ, տեսարժան վայրեր, հյուրանոցային և հյուրատնային ծառայություններ և այլ) լրացուցիչ լուրջ ներդրում կարող է ունենալ համայնքային զարգացման մեջ: Ներկայումս նման ծառայություններ հիմնականում հասանելի չեն: Բոլոր համայնքներում կան տուրիստական գրավչության վայրեր, այն է՝ բնական և պատմամշակութային բազմաթիվ հուշարձաններ, ավերակներ, ձիարշավի և քայլարշավի հնարավորություններ, եկեղեցիներ և այլ տեսարժան վայրեր, սակայն այս հնարավորությունները նպատակային չեն օգտագործվում:

Էկոզբոսաշրջության զարգացման հարցում կարևոր է էկոզբոսաշրջության այնպիսի կառավարումը, որը կկանխարգելի այցելությունների հնարավոր բացասական ազդեցությունները բնական էկոհամակարգերի և տեսակների վրա: Ընդհանուր առմամբ էկոզբոսաշրջությունը կարող է ներդրում ունենալ անտառների կայուն կառավարմանը (Քարտեզ 20):



**Նկար 2. Այցելուների կենտրոնի համար առաջարկվող տնակ, նպատակահարմար է տեղադրել Երևան-Գորիս մայրուղուց անտառտնտեսության գրասենյակ անտառտնտեսության գրասենյակի թեքվող հատվածում**

## Բաժին 10. ԱՆՏԱՌՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

### 10.1 Ընդհանուր տեղեկատվություն

2007թ. գույքագրմամբ անտառմշակույթների ընդհանուր մակերեսը կազմել է 361,1հա, չմիակցված սաղարթով՝ 33,7հա (ներառյալ Արծվանիկի անտառպետությունը):

2023թ. գույքագրմամբ անտառմշակույթների ճշտված մակերեսը կազմել է 313,3հա, չմիակցված սաղարթով՝ 17,0հա:

Անտառմշակույթների ընդհանուր մակերեսի 37,8%-ը գնահատվել է լավ՝ (118,3հա), 108,8հա բավարար (34,7%) և անբավարար՝ 27,5% (Աղյուսակ 45):

**Աղյուսակ 45 .Անտառմշակույթների վիճակի գնահատականը**

| № | Անտառպետության անվանումը | Անտառմշակույթի վիճակը, հա | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Լավ | Բավարար | Անբավարար | Մակերեսը, հա |
| 1 | Գորիսի | 113,7 | 106,5 | 79,6 | 299,8 |
| 2 | Շուռնուխի | 4,6 | 2,3 | 6,6 | 13,5 |
| **Ընդամենը** | | **118,3** | **108,8** | **86,2** | **313,3** |

Անտառտնտեսությունում մինչև 25° թեքության անտառային բացատներն ու պարապուտ տարածքները, որտեղ հիմնականում իրականացվում են անտառմշակութային աշխատանքները, զբաղեցնում են 614,5հա: 30° և բարձր թեքությունների վրա տարածքները թողնվել են բնական վերականգնման տակ (Աղյուսակ 46):

**Աղյուսակ 46. Ոչ անտառածածկ մակերեսների տեղաբաշխումն ըստ լանջի թեքության աստիճանի**

| Լանջի թեքությունը | Հրդեհված, մահացած տնկարք | Նոսրուտներ | Բացատներ և պարապուտներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Մինչև 5° | | 0,9 | 24,1 | 25 |
| 6-10° | | 17,4 | 35,7 | 53,1 |
| 11-15° | | 27,2 | 86,5 | 113,7 |
| 16-20° | | 127,7 | 179,5 | 307,2 |
| 21-25° | | 272,9 | 288,7 | 561,6 |
| 26-30° | 4,8 | 139,3 | 126,4 | 270,5 |
| 31-35° | | 113,7 | 52,1 | 165,8 |
| 36°-ից բարձր | 0,8 | 67,4 | 43,1 | 111,3 |
| **Ամբողջը** | **5,6** | **766,5** | **836,1** | **1608,2** |

2024-33 թվականների համար նախնական գնահատմամբ նախատեսվում են անտառհիմնման և վերականգնման միջոցառումներ՝ ընդհանուր 506,7 հեկտարի վրա, նույն թվում անտառային բացատներում, պարապուտ տարածքներում և հրդեհված ու չվերականգնված տարածքներում՝ 470,5հա, ցածր լրիվության ծառուտների լրիվության և արտադրողականության բարձրացման միջոցառումներ նախատեսվում է վերականգնման միջոցառումներ 36,2 հեկտարի վրա, նոսրուտներում բնական վերականգնման միջոցառումներ՝ հարթակների պատրաստման եղանակով՝ լրացուցիչ սերմերի ցանքսով 101,2 հեկտարի վրա (Աղյուսակ 47):

**Աղյուսակ 47. 2024-33 թվականների համար նախատեսվող անտառվերականգնման աշխատանքների մակերեսներն ըստ անտառպետությունների**

| Անտառպետություն | Անտառմշակույթի հիմնում | Անտառմշակույթի լրացում | Բնական վերականգնման օժանդակում | Ընդհանուր |
|---|---|---|---|---|
| **Գորիսի** | 365,6 | 1,0 | 137,1 | **503,7** |
| **Շուռնուխի** | 1,7 | | 1,3 | **3,0** |
| **Ամբողջը** | **367,3** | **1,0** | **138,4** | **506,7** |

Բնական վերականգնման օժանդակման նպատակով նախատեսվում է նաև 25000գծմ ցանկապատում, որի արդյունքում շուրջ 3000 հեկտար անտառներում կկանխվի անասունների մուտքը, ինչն էլ կնպաստի բնական վերականգնմանը:

## 10.2 Անտառաճեցման պիտանելիության դասակարգում

Անտառվերականգնման միջոցառումների նախագծման ժամանակ հաշվի է առնվել տարբեր անտառային տիպերում և հողային կատեգորիաներում բնական վերաճի ընթացքը և անտառաճման պայմանները: Անտառհիմնման, ինչպես նաև ագրոտեխնիկական միջոցառումների նախագծման համար հիմք են ընդունում հողային բերրիության և անտառաճեցման պիտանելիության դասակարգումը՝

- Անտառաճեցման պիտանելիության առաջին խմբի մեջ են մտնում մինչև 20° թեքության լանջերը, հողերը հզոր կամ միջին հզորության են, մայրական ապարների ելքը մինչև 20%: Այս պայմաններում կարող են աճել արժեքավոր, արագաճ, երկարակյաց անտառային, ինչպես նաև պտղատու տեսակներ:
- Երկրորդ խմբի մեջ են ներառվում ավելի փոքր հզորություն ունեցող հողերը, համեմատաբար վատ անտառաճեցման պայմաններով, այն է միջին աստիճանի քարքարոտ, մայրական ապարների ելքը 20-40%, միջին հզորության, մինչև 35° թեքության լանջերի վրա գտնվող տարածքները: Նշված պայմաններում բարձրարժեք տեսակները աճի և արտադրողականության տեսանկյունից զիջում են I-ին խմբին:
- Երրորդ խմբի մեջ մտնող հողային պայմաններում անտառաճեցման հնարավորությունները սահմանափակ են, որտեղ աճում են սահմանափակ տեսակների ծառաթփատեսակներ, որոնք պահանջկոտ չեն հողակլիմայական պայմանների նկատմամբ:
- Չորրորդ խմբի մեջ են մտնում հողային պայմանների այն տարբերակները, որոնք բավարար չեն անտառաճեցման համար, այսինքն շատ ուժեղ քարքարոտ են, իսկ մայր ապարի ելքը կազմում է 60% և ավելի:

## 10.3 Անտառապատման և անտառվերականգնման եղանակներ

Կախված անտառհիմնվող տարածքի տեղադրությունից, վիճակից, աճեցվող ծառատեսակների կենսաբանական առանձնահատկություններից, անտառապատման նպատակից նախատեսվում են սերմերի ցանքի կամ տունկի եղանակով:

Ցանքի եղանակով հիմնված տնկարկը սովորաբար ավելի երկարակյաց և կենսաբանորեն ավելի կայուն է, սակայն առաջին տարիներին մեծ է կախվածությունը բնական պայմաններից և սերմերի ծլունակությունից, բուսակները ենթակա են ոչնչացման կլիմայական պայմանների տատանումների հետևանքով, ինչպես նաև մոլախոտերի հետ միաժամանակ աճման պայմաններում ցածր է մրցակցությունը: Տնկման առավելությունը կայանում է նրանում, որ տնկիները առաջին տարիներին ավելի արագ են աճում, քանի որ իրենց դանդաղ աճման շրջանը անցել են տնկարանում, ավելի քիչ են տուժում մոլախոտերի հետ պայքարում, ինչպես նաև քիչ են վնասվում կրծողների և թռչունների կողմից:

Դաշտային ուսումնասիրության արդյունքներով, հաշվի առնելով անտառաճման պայմանները և ծառատեսակի կենսաբանական առանձնահատկությունները, ընտրվել են համապատասխան անտառվերականգնման եղանակները, հիմնման սխեմաները և հաշվարկվել են տնկանյութի ու սերմերի պահանջը:

Անտառհիմնումը հիմնականում նախատեսվում է հատկապես խրամատային եղանակով՝ կիրառելով սերմնաբուսակների տնկման և սերմերով ցանքսի եղանակը, իսկ խոշոր տնկանյութով համեմատաբար հարթ տարածքներում հիմնելու դեպքում՝ փոսային եղանակով: Խրամատների երկարությունը, կախված հողատեսքից և մայր ապարների ելքի աստիճանից, նախատեսվում է 1500-4000 գծմ/հա:

Անտառվերականգնում նախատեսվում է ցածր լրիվության ծառուտների լրիվության և արտադրողականության բարձրացման նպատակներով և իրականացվում են մայր սաղարթի տակ ցանքսի կամ տնկման եղանակներով: Որոշ հատվածներում, որտեղ բնական պատուհանները համեմատաբար մեծ են և ընդգրկում են մակերեսի ոչ պակաս 40%-ը, անտառաճեցման նպաստավոր պայմանների առկայության դեպքում, նախատեսվում է տնկման եղանակով:

Բնական վերականգնման օժանդակում իրականացվում է ցանկապատման և հանքայնացման եղանակով, նախատեսվում է հարթակներով (1x1մ) լրացուցիչ սերմերի ցանքսով, որոնց քանակությունը կախված ծառուտի լրիվությունից, մայր ապարների ելքից և առկա բնական վերաճի քանակությունից, նախատեսվում է 500-1000 հատ 1 հեկտարում:

## 10.4 Անտառմշակույթների հիմնման ժամանակ նախատեսվող սխեմաները

ա) Կաղնի խոշորառէջ

• Կաղնու սերմերի ցանքսով (հիմնական տեսակ) և հացենի սովորական, թխկի սրատերև, կեչի, թխկի դաշտային և բարձր լեռնային, թեղի խորդուբորդ, լորենի՝ տնկիներով (ուղեկցող տեսակներ): Հողի նախապատրաստումը հատկապես 15° –ից բարձր թեքությունների վրա խրամատներով (0,5x0,35 մետր), երկարությունը սովորաբար վերցվում է 10 մետր, հորիզոնական ուղղությամբ 2 մետր ընդհատումով: Խրամատների ընդհանուր երկարությունը 1 հեկտարում, կախված մայր ապարների

ելքի տոկոսից, նախատեսվել է 1500-4000 գծմ: Մեկ ցանքսատեղում առաջարկվում է 3-5 սերմ:

- Սոճու անտառմշակույթների հիմնում, առաջարկվում է հիմնել սոճու 2 և ոչ ավել 3 տարեկան սերմնաբուսակներով, որի դեպքում հողի նախապատրաստման, տնկման և խնամքի ագրոտեխնիկական պահանջների բավարարման դեպքում ապահովվում է բարձր կպչողունակություն և ընթացիկ աճ: Հաշվի առնելով սոճուտներում, հատկապես սաղարթային հրդեհների առաջացման դեպքում հրդեհաշիջման աշխատանքների մեծ դժվարությունները և հնարավոր կորուստները, հրդեհների տարածումը կանխելու նպատակով, նախատեսվում է խրամատային եղանակով հիմնել 2 շարք սոճի, յուրաքանչյուր 3-րդը լայնատերևավոր ծառատեսակների տնկիներով:

գ) Փոսերով հողի նախապատրաստումը (0,5x0,5x0,5 մետր) նախատեսվում է լանջերի մինչև 15° թեքություններում, համեմատաբար խոշոր տնկանյութով հիմնադրման համար 3x3մ սխեմայով՝ անտառային տանձենու և խնձորենու կամ անտառային կեռասենու համար:

- Անտառային տանձենին և խնձորենին փոսային եղանակով 3x3մ սխեմայով:

դ) Անտառվերականգնումը նախատեսվում է նաև ցածր լրիվության ծառուտների լրիվության և արդյունավետության բարձրացման նպատակով: 0,3-0,4 լրիվության անտառներում մայր սաղարթի տակ համեմատաբար բարձր թեքությունների վրա խրամատներով, սերմերի ցանքսով, ինչպես նաև բնական վերականգնման օժանդակման միջոցառումներ հանքայնացման եղանակով, որի դեպքում պատրաստում են հարթակներ (1x1 մետր), վերցվում է խաշամը, կատարվում է փխրեցում և հարթակների 4 անկյուններում ցանվում սերմերը:

Խրամատների ընդհանուր երկարությունը և հարթակների քանակությունը որոշվում է հաշվի առնելով ծառուտի լրիվությունը, առկա բնական վերաճի քանակությունը և մայր ապարների ելքի տոկոսը: Այս տեսանկյուններով նախատեսվող հարթակների թիվը կազմում է 500-1000 հատ, որը ապահովում է համապատասխանաբար 2000-4000 ցանքատեղ, ընդ որում անմիջական մայր սաղարթի տակ սերմերի ցանքս չի կատարվում, այլ կատարվում է սերմերի տարածման գոտուց դուրս:

Ցանկապատի պատրաստում նախատեսվում է ինչպես անտառմշակույթների հիմնում նախատեսած տարածքներում, այնպես էլ բնական վերականգնման օժանդակման միջոցառումներ նշանակած տարածքներում՝ անասունների մուտքը կանխելու նպատակով և նախատեսվում է մետաղյա փշալարով, իսկ սյուները փայտից, որոնց հիմքային մասը մշակվում է ձութով:

Ագրոտեխնիկական միջոցառումներից կարևորվում են անտառմշակույթիների խնամքի աշխատանքները:

Անտառագիտական հասկացողությամբ անտառմշակույթիները բավարար կպչողականություն, աճ և արտադրողականություն ապահովում են հիմնման տարում և հաջորդող 4-5 տարիներին 15 անգամ կատարված խնամքի դեպքում, ընդ որում

հիմնան տարում (գարուն) կատարվում է քաղհան փխրեցում 5 անգամ, 2-րդ տարում՝ 4 անգամ, 3-րդ – 3, 4-րդ – 2 և 5-րդ տարում – 1 անգամ:

Անտառվերականգնման միջոցառումների և տնկարանի ստեղծման նպատակով անտառտնտեսության անտառածածկ տարածքներում առանձնացվել են ընդհանուր 142,1հա մշտական անտառսերմնային տեղամասեր, նույն թվում 40,9հա Գորիսի, 101,2հա Շուռնուխի անտառպետություններում: Ընդ որում, սոճու, թխկու, հունական ընկուզենու և կաղնու սերմերի հավաքը նախատեսվում է իրականացնել դրանց գերակշռությամբ ծառուտներից, իսկ հացենի, թեղի, տանձենի և խնձորենի տեսակներինը՝ նաև որպես ուղեկցող տեսակ հանդիպող ծառուտներից (Աղյուսակ 48):

**Աղյուսակ 48. Տեղեկագիր անտառսերմնային մշտական տեղամասերի**

| № | Անտառպետության անվանումը | Գլխավոր ծառատեսակը | Քառակուսու N | Հատվածի N | Մակերեսը, հեկտար | Լանջի թեքությունը | Ծառուտի կազմը | ԾՄԲ | Բոնիտետը | Լրիվությունը | Տարիքը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գորիսի | Կաղնի | 11 | 59 | 2,3 | 25 | 7կ2բ1թխ | 1600 | 4 | 0,4 | 90 |
| | | | 11 | 73 | 1,2 | 15 | 7կ2հը1թխ | 1410 | | 0,6 | 110 |
| | | | 11 | 75 | 1,9 | 30 | 5կ3թխ2hg | 1370 | 3 | 0,6 | 110 |
| | | | 40 | 2 | 6,6 | 10 | 7կ3բ+թխ | 1580 | 4 | 0,6 | 110 |
| | | | 40 | 4 | 3,9 | 25 | 8կ2բ+թխ | 1690 | 4 | 0,6 | 90 |
| | | | 40 | 5 | 1,7 | 25 | 8կ2բ+hg | 1680 | 3 | 0,6 | 90 |
| | | **Ընդամենը** | | | **17,6** | | | | | | |
| | | Սոճի | 6 | 99 | 1,1 | 25 | 10սոճի | 1690 | 1 | 0,7 | 55 |
| | | | 6 | 100 | 0,7 | 25 | 10սոճի | 1670 | 1 | 0,7 | 55 |
| | | | 12 | 11 | 4,1 | 20 | 10սոճի | 1890 | 2 | 0,7 | 45 |
| | | | 12 | 27 | 5,4 | 20 | 10սոճի | 1780 | 1 | 1 | 45 |
| | | Ընդհամենը | | | **11,3** | | | | | | |
| | | **Հացենի** | 40 | 11 | 5,8 | 20 | 6hg3բ1թխ+կ | 1720 | 2 | 0,6 | 45 |
| | | **Ընդամենը** | | | **5,8** | | | | | | |
| | | **Թխկի** | 6 | 56 | 1,1 | 30 | 10Թխ+Թղ+Տձ | 1670 | 2 | 0,6 | 55 |
| | | | 6 | 58 | 1,1 | 20 | 5Թխ5Տձ+Բլ | 1690 | 1 | 0,7 | 55 |
| | | **Ընդամենը** | | | **2,2** | | | | | | |
| | | **Ընկուզենի հունական** | 10 | 17 | 4,0 | 30 | 8Հը1Բ1Հg+Թխ+Տձ+Ուռծ | 1270 | 4 | 4,0 | 110 |
| | | **Ընդամենը** | | | **4,0** | | | | | | |
| **Ընդամենը անտառպետությունում** | | | | | **40,9** | | | | | | |
| 2 | Շուռնուխի | Կաղնի | 6 | 24 | 1,7 | 10 | 9կ1բ+թխ,hg | 1170 | 4 | 0,6 | 110 |
| | | | 7 | 37 | 0,7 | 25 | 10կ+թխ,hg,թղ | 1040 | 4 | 0,5 | 90 |
| | | | 11 | 2 | 6 | 20 | 8կ2բ+թխ,hg | 1690 | 4 | 0,6 | 85 |
| | | | 13 | 21 | 7,3 | 15 | 7կ2բ1թխ+լր | 1780 | 4 | 0,5 | 130 |
| | | | 15 | 13 | 3,2 | 20 | 7կ2բ1թխ+hg | 1520 | 4 | 0,6 | 90 |
| | | | 16 | 3 | 3,5 | 25 | 7կ3բ+թխ,hg | 1610 | 4 | 0,5 | 110 |
| | | | 16 | 32 | 8,5 | 20 | 7կ3բ+թխ,hg | 1700 | 4 | 0,5 | 110 |
| | | | 17 | 26 | 0,7 | 20 | 7կ2բ1թխ+hg | 1960 | 4 | 0,5 | 140 |
| | | | 18 | 2 | 6,2 | 15 | 10կ+թխ,բ | 1820 | 3 | 0,6 | 130 |

| № | Անտառպետության անտառտեղամասը | Գլխավոր ծառատեսակը | Քառակուսու N | Հատվածի N | Մակերեսը, հեկտար | Լանջի թեքությունը | Ծառուտի կազմը | ԾՄԲ | Բոնիտետը | Լրիվությունը | Տարիքը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 18 | 32 | 6 | 15 | 5կ5բ+թխ,hg | 1700 | 3 | 0,6 | 140 |
| | | | 19 | 12 | 5,3 | 20 | 7կ3բ+թխ | 1790 | 3 | 0,6 | 130 |
| | | | 23 | 12 | 12,1 | 15 | 7կ2բ1թխ+hg,տծ | 1750 | 4 | 0,5 | 90 |
| | | | 28 | 25 | 6,3 | 20 | 5կ3թխ1տծ1խծ | 1560 | 4 | 0,6 | 90 |
| | | | 32 | 4 | 3,1 | 20 | 6կ3բ1թխ | 1410 | 4 | 0,5 | 130 |
| | | | 32 | 18 | 0,8 | 20 | 7կ2բ1թխ+hg | 1390 | 4 | 0,4 | 110 |
| | | | 41 | 2 | 7,4 | 20 | 7կ3բ+թխ,hg | 1620 | 4 | 0,5 | 130 |
| | | | 41 | 26 | 1,9 | 20 | 8կ2բ+թխ,տծ | 1670 | 4 | 0,4 | 130 |
| | | | 41 | 51 | 3 | 25 | 8կ2բ+տծ | 1410 | 4 | 0,4 | 90 |
| | | | 42 | 31 | 11,9 | 15 | 7կ2բ1hg+թխ | 1390 | 4 | 0,5 | 110 |
| | | | 43 | 22 | 2,7 | 25 | 6կ3բ1hg+տծ+թխ | 1710 | 4 | 0,5 | 90 |
| | | **Ընդամենը** | | | **98,3** | | | | | | |
| | | Հացենի | 18 | 4 | 0,4 | 10 | 10hg+տծ | 1770 | 2 | 0,4 | 35 |
| | | | 32 | 22 | 2,5 | 15 | 10hg | 1360 | 4 | 0,7 | 35 |
| | | **Ընդամենը** | | | **2,9** | | | | | | |
| | | **Անտառպետությունում** | | | **101,2** | | | | | | |
| | | **Ամբողջը** | | | **142,1** | | | | | | |

## Աղյուսակ 49. Սյունիքի անտառտնտեսության անտառապատման և անտառվերականգնման միջոցառումներ

| Անտառտնտեսության տեղամասը | Թաղամասի N | Հատված N | Մակերեսը, հա | Դիրքադրությունը | ԾՄԲ, մ | Բոնիտետ | Անտառի տիպ | Հողատեսք | Հողի նախապատրաստման եղանակ | Անտառվերականգնման եղանակ | Վերականգնվող տեսակը | Սերմերի քանակը, կգ | Սերմնաբուսակների քանակը, հատ | Տնկանյութի քանակը, հատ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Գորիսի | 2 | 1 | 1,5 | Ալ 15 | 1610 | 4 | Բոշխային B2 | Պարապուտ | փոսերով | Անտառմշակույթի հիմնում | Տանձենի | | | 500 |
| | | | | | | | | | 3X3մ | | Խնձորենի | | | 500 |
| | | | | | | | | | | | Ընկուզենի | | | 500 |
| | 2 | 2 | 2,6 | Հս-ամ 25 | 1620 | 4 | Բոշխային B2 | Պարապուտ | խրամատներով | Անտառմշակույթի հիմնում | Կաղնի | 94 | | |
| | | | | | | | | | 3000գծմ/հա | | Թխկի,Հացենի | | | 2600 |
| | 2 | 3 | 3,1 | Հս 30 | 1620 | 4 | Բոշխային B2 | Պարապուտ, Առ ծառ Կ,Թխ,Հց | խրամատներով | Անտառմշակույթի հիմնում | Կաղնի | 110 | | |
| | | | | | | | | | 3000գծմ/հա | | Թխկի,Հացենի | | | 3100 |
| | 2 | 4 | 6,7 | Հս-ալ 20 | 1650 | 4 | Բոշխային B2 | Պարապուտ | խրամատներով | Անտառմշակույթի հիմնում | Կաղնի | 220 | | |
| | | | | | | | | | 3000գծմ/հա | | Թխկի,Հացենի | | | 6700 |
| | 2 | 5 | 8,0 | Հս-ամ 25 | 1660 | 5 | Բոշխային B2 | Պարապուտ | խրամատներով | Անտառմշակույթի հիմնում | Կաղնի | 290 | | |
| | | | | | | | | | 3000գծմ/հա | | Թխկի,Հացենի | | | 8000 |
| | 2 | 6 | 4,5 | Հս-ալ 25 | 1620 | 5 | Բոշխային B1 | Պարապուտ | խրամատներով | Անտառմշակույթի հիմնում | Կաղնի | 160 | | |
| | | | | | | | | | 3000գծմ/հա | | Թխկի,Հացենի | | | 4500 |
| | 2 | 7 | 10,7 | Հս-ալ 30 | 1640 | 5 | Բոշխային B2 | Պարապուտ, Կ,Բ,Թխ | խրամատներով | Անտառմշակույթի հիմնում | Կաղնի | 385 | | |
| | | | | | | | | | 3000գծմ/հա | | Թխկի,Հացենի | | | 10700 |
| | 2 | 9 | 4,1 | Հս 30 | 1590 | 5 | Բոշխային B2 | Նոսրուտ 0,2Կ,Բ | հարթակներով | Բնական վերականգնման օժանդակում | Կաղնի | 170 | | |
| | | | | | | | | | 700հատ/հա | | | | | |
| | 2 | 14 | 5,2 | Ալ 30 | 1570 | 5 | Բոշխային B2 | Պարապուտ | խրամատներով | Անտառմշակույթի հիմնում | Կաղնի | 180 | | |
| | | | | | | | | | 3000գծմ/հա | | Թխկի,Հացենի | | | 5200 |
| | 2 | 15 | 0,7 | Ամ 30 | 1540 | 5 | Բոշխային B2 | Պարապուտ | խրամատներով | Անտառմշակույթի հիմնում | Կաղնի | 25 | | |
| | | | | | | | | | 3000գծմ/հա | | Թխկի,Հացենի | | | 700 |
| | 2 | 16 | 1,3 | Հս-ալ 30 | 1550 | 4 | Բոշխային B2 | Պարապուտ | խրամատներով | Անտառմշակույթի հիմնում | Կաղնի | 50 | | |
| | | | | | | | | | 3000գծմ/հա | | Թխկի,Հացենի | | | 1300 |
| | 2 | 18 | 9,2 | Հս-Ամ 30 | 1560 | 5 | Բոշխային B2 | Նոսրուտ 0,2Կ,Թխ,Հց | հարթակներով | Բնական վերականգնման օժանդակում | Կաղնի | 380 | | |
| | | | | | | | | | 700հատ/հա | | | | | |
| | 2 | 19 | 1,4 | Հս 25 | 1590 | 4 | Բոշխային B2 | Պարապուտ | խրամատներով | Անտառմշակույթի հիմնում | Կաղնի | 50 | | |
| | | | | | | | | | 3000գծմ/հա | | Թխկի,Հացենի | | | 1400 |
| | 4 | 63 | 2,6 | Հս-Ալ 30 | 1510 | 4 | Տարախոտային C2 | Անտառմշակույթ 0,4 | հարթակներով | Բնական վերականգնման օժանդակում | Կաղնի | 80 | | |
| | | | | | | | | | 500հատ/հա | | | | | |
| | 4 | 82 | 1,3 | Ալ 30 | 1550 | 4 | Տարախոտային C2 | Ցածր լրիվության 0,3 | հարթակներով | Բնական վերականգնման օժանդակում | Կաղնի | 56 | | |
| | | | | | | | | | 700հատ/հա | | | | | |
| | 4 | 84 | 0,6 | Հս-Ալ 25 | 1490 | 3 | Տարախոտային C2 | Ցածր լրիվության 0,3 | հարթակներով | Բնական վերականգնման օժանդակում | Կաղնի | 26 | | |
| | | | | | | | | | 700հատ/հա | | | | | |
| | 4 | 85 | 6,3 | Հվ-Ալ 30 | 1520 | 5 | Բոշխային B1 | Բացատ, Առ | խրամատներով | Անտառմշակույթի հիմնում | Կաղնի | 225 | | |

| Անտառտնտեսության անվանումը | Թաղամասի N | Հատված N | Մակերեսը, հա | Դիրքադրություն | ԾՄԲ, մ | Բոնիտետ | Անտառի տիպ | Հողատեսք | Հողի նախապատրաստման եղանակ | Անտառվերականգնման եղանակ | Վերականգնվող տեսակը | Սերմերի քանակը, կգ | Սերմնաբուսակների քանակը, հազ. հատ | Տնկիների քանակը, հազ. հատ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | ծառ, Բ | 3000գծմ/հա | | Թխկի,Հացենի | | | 6300 |
| | 4 | 86 | 0,9 | Հվ 30 | 1580 | 5 | Բոշխային B1 | Նոսրուտ 0,2Կ,Բ,Հց | հարթակներով | Բնական վերականգնման օժանդակում | Կաղնի | 38 | | |
| | | | | | | | | | 700հատ/հա | | | | | |
| | 5 | 24 | 4,5 | Հս-Ամ 25 | 1720 | 4 | Բոշխային B2 | Պարապուտ, Առ ծառ Կ | խրամատներով | Անտառամշակույթի հիմնում | Կաղնի | 160 | | |
| | | | | | | | | | 3000գծմ/հա | | Թխկի,Հացենի | | | 4500 |
| | 5 | 35 | 23,6 | Հվ-ալ 25 | 1640 | 5 | Բոշխային B2 | Պարապուտ, Կց,Բց | խրամատներով | Անտառամշակույթի հիմնում | Սոճի | | 14750 | |
| | | | | | | | | | 2500գծմ/հա | | Հացենի,Թխկի | | | 29500 |
| | 5 | 37 | 0,5 | Հվ-Ամ 30 | 1680 | 4 | Տարախոտային C2 | Ցածր լրիվության 0,4 | հարթակներով | Բնական վերականգնման օժանդակում | Կաղնի | 15 | | |
| | | | | | | | | | 500հատ/հա | | | | | |
| | 6 | 20 | 2,0 | Հս-Ամ 10 | 1730 | 3 | Տարախոտային C2 | Պարապուտ | փոսերով | Անտառամշակույթի հիմնում | Տանձենի | | | 650 |
| | | | | | | | | | 3X3մ | | Խնձորենի | | | 650 |
| | | | | | | | | | | | Ընկուզենի | | | 650 |
| | 6 | 79 | 0,7 | Հս-Ամ 25 | 1760 | 2 | Տարախոտային C2 | Ցածր լրիվության 0,4 | հարթակներով | Բնական վերականգնման օժանդակում | Կաղնի | 22 | | |
| | | | | | | | | | 500հատ/հա | | | | | |
| | 6 | 80 | 0,7 | Հվ-Ալ 20 | 1780 | 2 | Տարախոտային C2 | Բացատ | փոսերով | Անտառամշակույթի հիմնում | Տանձենի | | | 230 |
| | | | | | | | | | 3X3մ | | Խնձորենի | | | 230 |
| | | | | | | | | | | | Ընկուզենի | | | 230 |
| | 6 | 93 | 0,6 | Ալ 15 | 1770 | 4 | Տարախոտային C2 | Պարապուտ | խրամատներով | Անտառամշակույթի հիմնում | Կաղնի | 22 | | |
| | | | | | | | | | 3000գծմ/հա | | Թխկի,Հացենի | | | 600 |
| | 6 | 94 | 1,4 | Ալ 30 | 1780 | 4 | Տարախոտային C2 | Պարապուտ | խրամատներով | Անտառամշակույթի հիմնում | Սոճի | | 1870 | |
| | | | | | | | | | 3000գծմ/հա | | Թխկի,Հացենի | | 3740 | |
| | 6 | 95 | 2,5 | Հս-Ամ 25 | 1790 | 4 | Տարախոտային C2 | Պարապուտ | խրամատներով | Անտառամշակույթի հիմնում | Կաղնի, | 90 | | |
| | | | | | | | | | 3000գծմ/հա | | Թխկի,Հացենի | | | 2500 |
| | 6 | 102 | 2,3 | Հս-Ամ 25 | 1620 | 5 | Բոշխային B2 | Ցածր լրիվության 0,3 | հարթակներով | Բնական վերականգնման օժանդակում | Կաղնի | 99 | | |
| | | | | | | | | | 700հատ/հա | | | | | |
| | 6 | 103 | 2,7 | Ամ 30 | 1650 | 3 | Տարախոտային C2 | Ցածր լրիվության 0,4 | հարթակներով | Բնական վերականգնման օժանդակում | Կաղնի | 86 | | |
| | | | | | | | | | 500հատ/հա | | | | | |
| | 6 | 104 | 3,1 | Հվ 30 | 1660 | 3 | Տարախոտային C2 | Բացատ, առ ծառ, կ,ս,տծ | խրամատներով | Անտառամշակույթի հիմնում | Կաղնի, | 93 | | |
| | | | | | | | | | 2500գծմ/հա | | Հացենի,Թխկի | | | 2640 |
| | 6 | 112 | 3,9 | Հվ-Ամ 30 | 1700 | 4 | Տարախոտային C2 | Պարապուտ | խրամատներով | Անտառամշակույթի հիմնում | Կաղնի, | 140 | | |
| | | | | | | | | | 3000գծմ/հա | | Հացենի,Թխկի | | | 3900 |
| | 6 | 113 | 3,0 | Հվ 20 | 1720 | 4 | Տարախոտային C2 | Պարապուտ | խրամատներով | Անտառամշակույթի հիմնում | Սոճի | | 3990 | |
| | | | | | | | | | 3000գծմ/հա | | Հացենի,Թխկի | | 7980 | |
| | 6 | 114 | 1,2 | Հվ 25 | 1790 | 4 | Տարախոտային C2 | Պարապուտ | խրամատներով | Անտառամշակույթի հիմնում | Սոճի | | 1600 | |
| | | | | | | | | | 3000գծմ/հա | | Հացենի,Թխկի | | 3200 | |

| Անտառտնտեսության անվանումը | Թաղամասի N | Հատված N | Մակերեսը, հա | Դիրքադրությունը | ԾՄԲ, մ | Բոնիտետ | Անտառի տիպ | Հողատեսք | Հողի նախապատրաստման եղանակ | Անտառվերականգնման եղանակ | Վերականգնվող տեսակը | Սերմերի քանակը, կգ | Սերմնաբուսակների քանակը, հազ հատ | Տնկանյութի քանակը, հազ հատ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 7 | 56 | 2,8 | Հվ-Ամ 15 | 1630 | 3 | Տարախոտային C2 | Պարապուտ | փոսերով | Անտառմշակույթի հիմնում | Տանձենի | | | 900 |
| | | | | | | | | | 3X3մ | | Խնձորենի | | | 900 |
| | | | | | | | | | | | Ընկուզենի | | | 900 |
| | 9 | 2 | 6,0 | Հս-Ալ 25 | 1560 | 3 | Տարախոտային C2 | Ցածր լրիվության 0,4 | հարթակներով | Բնական վերականգնման օժանդակում | Կաղնի | 190 | | |
| | | | | | | | | | 500հատ/հա | | | | | |
| | 9 | 4 | 2,7 | Հվ-Ամ 5 | 1590 | 4 | Տարախոտային C2 | Պարապուտ | փոսերով | Անտառմշակույթի հիմնում | Տանձենի | | | 900 |
| | | | | | | | | | 3X3մ | | Խնձորենի | | | 900 |
| | | | | | | | | | | | Ընկուզենի | | | 900 |
| | 9 | 5 | 1,1 | Հվ 5 | 1580 | 4 | Տարախոտային C2 | Պարապուտ, առ. ծառ Խձ | փոսերով | Անտառմշակույթի հիմնում | Տանձենի | | | 370 |
| | | | | | | | | | 3X3մ | | Խնձորենի | | | 370 |
| | | | | | | | | | | | Ընկուզենի | | | 370 |
| | 9 | 36 | 5,0 | Հվ-Ամ 25 | 1450 | 4 | Տարախոտային C2 | Պարապուտ, առ. ծառ ,կ,բ,ակ | խրամատներով | Անտառմշակույթի հիմնում | Սոճի | | 5500 | |
| | | | | | | | | | 2500գծմ/հա | | Հացենի,Թխկի | | | 11000 |
| | 9 | 39 | 3,1 | Հվ 30 | 1480 | 4 | Տարախոտային C2 | Պարապուտ, առ. ծառ 10Կ | խրամատներով | Անտառմշակույթի հիմնում | Սոճի | | 3400 | |
| | | | | | | | | | 2500գծմ/հա | | Հացենի,Թխկի | | | 6800 |
| | 9 | 54 | 8,5 | Ալ 15 | 1510 | 3 | Տարախոտային C2 | Պարապուտ | փոսերով | Անտառմշակույթի հիմնում | Տանձենի | | | 2860 |
| | | | | | | | | | 3X3մ | | Խնձորենի | | | 2860 |
| | | | | | | | | | | | Ընկուզենի | | | 2860 |
| | 10 | 24 | 1,7 | Ալ 30 | 1270 | 4 | Տարախոտային C2 | Ցածր լրիվության 0,3 | հարթակներով | Բնական վերականգնման օժանդակում | Կաղնի | 73 | | |
| | | | | | | | | | 700հատ/հա | | | | | |
| | 10 | 27 | 1,2 | Հվ-Ամ 25 | 1240 | 4 | Տարախոտային C2 | Ցածր լրիվության 0,3 | հարթակներով | Բնական վերականգնման օժանդակում | Կաղնի | 52 | | |
| | | | | | | | | | 700հատ/հա | | | | | |
| | 11 | 19 | 2,6 | Ալ 20 | 1560 | 3 | Տարախոտային C2 | Ցածր լրիվության 0,3 | հարթակներով | Բնական վերականգնման օժանդակում | Կաղնի | 112 | | |
| | | | | | | | | | 700հատ/հա | | | | | |
| | 11 | 31 | 1,8 | Ալ 25 | 1355 | 4 | Տարախոտային C2 | Բացատ, առ. ծառ կ,բ | խրամատներով | Անտառմշակույթի հիմնում | կաղնի | 65 | | |
| | | | | | | | | | 3000գծմ/հա | | Հացենի,Թխկի | | | 1800 |
| | 11 | 48 | 10,2 | Հվ-25 | 1520 | 4 | Բոշխային B2 | Նոսրուտ, ԲԿԹխ+Հց | խրամատներով | Անտառմշակույթի հիմնում | Սոճի | | 12240 | |
| | | | | | | | | | 2500գծմ/հա | | Հացենի,Թխկի | | | 24480 |
| | 11 | 55 | 0,6 | Ալ 10 | 1620 | 3 | Տարախոտային C2 | Բացատ, առ. ծառ կ,բ | փոսերով | Անտառմշակույթի հիմնում | Տանձենի | | | 200 |
| | | | | | | | | | 3X3մ | | Խնձորենի | | | 200 |
| | | | | | | | | | | | Ընկուզենի | | | 200 |
| | 11 | 105 | 1,6 | Հս-Ալ 10 | 1510 | 4 | Տարախոտային C2 | Պարապուտ, առ. ծառկ,բ,հց | փոսերով | Անտառմշակույթի հիմնում | Տանձենի | | | 530 |
| | | | | | | | | | 3X3մ | | Խնձորենի | | | 530 |
| | | | | | | | | | | | Ընկուզենի | | | 530 |
| | 11 | 108 | 4,7 | Հս-Ալ 30 | 1380 | 4 | Տարախոտային | Ցածր | հարթակներով | Բնական վերականգնման | Կաղնի | 150 | | |

| Անտառտնտեսության անվանումը | Թաղամասի N | Հատված N | Մակերեսը, հա | Դիրքադրություն | ԾՄԲ, մ | Բոնիտետ | Անտառի տիպ | Հողատեսք | Հողի նախապատրաստման եղանակ | Անտառվերականգնման եղանակ | Վերականգնվող տեսակը | Սերմերի քանակը, կգ | Սերմնաբուսակների քանակը, հատ | Տնկիների քանակը, հատ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | C2 | լրիվության 0,4 | 500հատ/հա | օժանդակում | | | | |
| | 12 | 2 | 14,8 | Ալ 25 | 1930 | 4 | Տարախոտային C2 | Պարապուտ | խրամատներով | Անտառամշակույթի հիմնում | Սոճի | | 37000 | |
| | | | | | | | | | 2500գծմ/հա | | Հացենի,Թխկի | | | 74000 |
| | 12 | 6 | 1,0 | Հս-Ալ 20 | 1800 | 4 | Տարախոտային C2 | Ցածր լրիվության 0,3 | հարթակներով | Անտառամշակույթի լրացում | Կաղնի | 43 | | |
| | | | | | | | | | 700հատ/հա | | | | | |
| | 12 | 16 | 1,0 | Հվ-Ալ 15 | 1850 | 4 | Տարախոտային C2 | Բացատ, Առ ծառ ՀցՄ | խրամատներով | Անտառամշակույթի հիմնում | Սոճի | | 1330 | |
| | | | | | | | | | 3000գծմ/հա | | Հացենի,Թխկի | | 2660 | |
| | 17 | 2 | 0,7 | Հս 5 | 1180 | 3 | Տարախոտային B1 | Բացատ | փոսերով | Անտառամշակույթի հիմնում | Տանձենի | | | 230 |
| | | | | | | | | | 3X3մ | | Խնձորենի | | | 230 |
| | | | | | | | | | | | Ընկուզենի | | | 230 |
| | 18 | 10 | 1,5 | Հս-Ալ 25 | 1230 | 3 | Տարախոտային C2 | Բացատ | խրամատներով | Անտառամշակույթի հիմնում | կաղնի | 54 | | |
| | | | | | | | | | 3000գծմ/հա | | Հացենի,Թխկի | | | 1500 |
| | 23 | 26 | 1,3 | Հս 25 | 2080 | 4 | Մերձալպյան B2 | Բացատ, Առ ծառ ԹխԲ | խրամատներով | Անտառամշակույթի հիմնում | Կաղնի | 47 | | |
| | | | | | | | | | 2500գծմ/հա | | Կեչի | | | 1100 |
| | 23 | 31 | 1,4 | Հս 25 | 2110 | 4 | Մերձալպյան B1 | Բացատ | խրամատներով | Անտառամշակույթի հիմնում | Կաղնի | 42 | | |
| | | | | | | | | | 2500գծմ/հա | | Կեչի | | | 1200 |
| | 24 | 8 | 9,9 | Ամ 30 | 2110 | 4 | Մերձալպյան B1 | Բացատ, Առ ծառ, Կ,Թխ | խրամատներով | Անտառամշակույթի հիմնում | Սոճի | | 13200 | |
| | | | | | | | | | 3000գծմ/հա | | Կեչի | | 26400 | |
| | 28 | 40 | 17,5 | Հվ-ալ 25 | 1810 | 4 | Բոշխ B2 | Պարապուտ Առ ծառ ԿցԲց | խրամատներով | Անտառամշակույթի հիմնում | Սոճի | | 23400 | |
| | | | | | | | | | 3000գծմ/հա | | Հացենի,Թխկի | | 46800 | |
| | 28 | 54 | 13,4 | Հվ 15 | 1750 | 4 | Բոշխ B2 | Պարապուտ | խրամատներով | Անտառամշակույթի հիմնում | Սոճի | | 17800 | |
| | | | | | | | | | 3000գծմ/հա | | Հացենի,թխկի | | 35600 | |
| | 28 | 93 | 6,0 | Ալ 20 | 1690 | 4 | Հացախոտային B2 | Պարապուտ | խրամատներով | Անտառամշակույթի հիմնում | Սոճի | | 10000 | |
| | | | | | | | | | 3000գծմ/հա | | Հացենի,Թխկի | | | 20000 |
| | 29 | 22 | 1,8 | Հս-ամ 10 | 1590 | 4 | Տարախոտային B2 | Բացատ | փոսերով | Անտառամշակույթի հիմնում | Տանձենի | | | 600 |
| | | | | | | | | | 3X3մ | | Խնձորենի | | | 600 |
| | | | | | | | | | | | Ընկուզենի | | | 600 |
| | 44 | 43 | 1,7 | Ամ 20 | 1440 | 4 | Տարախոտային B2 | Բացատ, Առ. ծառ ԿԲ | փոսերով | Անտառամշակույթի հիմնում | Տանձենի | | | 560 |
| | | | | | | | | | 3X3մ | | Խնձորենի | | | 560 |
| | | | | | | | | | | | Ընկուզենի | | | 560 |
| | 47 | 24 | 0,8 | Հս 10 | 1750 | 4 | Շյուղախոտայի ն B2 | Բացատ, Առ. ծառ ԲՀցԿ+Թխ | փոսերով | Անտառամշակույթի հիմնում | Տանձենի | | | 250 |
| | | | | | | | | | 3X3մ | | Խնձորենի | | | 250 |
| | | | | | | | | | | | Ընկուզենի | | | 250 |
| | 49 | 14 | 1,1 | Հս 20 | 1990 | 4 | Տարախոտային B1 | Բացատ | խրամատներով | Անտառամշակույթի հիմնում | Կաղնի | 40 | | |
| | | | | | | | | | 3000գծմ/հա | | Հացենի,Թխկի | | | 1100 |

| Անտառպետության անվանումը | Քառակուսի N | Հատված N | Մակերեսը, հա | Դիրքադրություն | ԾՄԲ, մ | Բոնիտետ | Անտառի տիպ | Հողատեսք | Հողի նախապատրաստման եղանակ | Անտառվերականգնման եղանակ | Վերականգնվող տեսակը | Սերմերի քանակը, կգ | Սերմնաբուսակների քանակը, հատ | Տնկանյութի քանակը, հատ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 49 | 36 | 34,4 | Հս-ալ 30 | 2200 | 4 | Մերձալպյան B2 | Պարապուտ | խրամատներով | Անտառմշակույթի հիմնում | Սոճի | | 45800 | |
| | | | | | | | | | 3000գծմ/հա | | Հացենի,Թխկի | | 91600 | |
| | 50 | 32 | 4,9 | Հս-Ալ 30 | 1810 | 5 | Տարախոտային B1 | Նոսրուտ 0,2 Կց | հարթակներով | Բնական վերականգնման օժանդակում | Կաղնի | 205 | | |
| | | | | | | | | | 700հատ/հա | | | | | |
| | 50 | 37 | 80,4 | Հվ-Ամ 25 | 2070 | 4 | Շյուղախոտայի ն B2 | Նոսրուտ 0,1 Կ,Թխ,Բ | հարթակներով | Բնական վերականգնման օժանդակում | Կաղնի | 3375 | | |
| | | | | | | | | | 700հատ/հա | | | | | |
| | 53 | 2 | 4,2 | Հս 25 | 1740 | 4 | Տարախոտային B2 | Բացատ, Առ ծառ ԿցԲց | խրամատներով | Անտառմշակույթի հիմնում | Կաղնի | 140 | | |
| | | | | | | | | | 3000գծմ/հա | | Հացենի,Թխկի | | | 4000 |
| | 53 | 12 | 0,6 | Հս-Ամ 25 | 1850 | 5 | Տարախոտային B1 | Բացատ, Առ ծառ ԿցԲց | խրամատներով | Անտառմշակույթի հիմնում | կաղնի | 20 | | |
| | | | | | | | | | 3000գծմ/հա | | Հացենի,Թխկի | | | 600 |
| | 53 | 31 | 8,3 | Հս-Ալ 30 | 1980 | 5 | Մերձալպյան B3 | Ցածր լրիվության 0,4 | հարթակներով | Բնական վերականգնման օժանդակում | Կաղնի | 250 | | |
| | | | | | | | | | 500հատ/հա | | | | | |
| | 57 | 7 | 0,6 | Հս-Ամ 15 | 1740 | 4 | Տարախոտային B2 | Բացատ | փոսերով | Անտառմշակույթի հիմնում | Տանձենի | | | 200 |
| | | | | | | | | | 3X3 | | Խնձորենի | | | 200 |
| | | | | | | | | | | | Ընկուզենի | | | 200 |
| | 57 | 8 | 1,5 | Հս 10 | 1750 | 4 | Տարախոտային B2 | Բացատ, Առ. ծառ ԿԲ | փոսերով | Անտառմշակույթի հիմնում | Տանձենի | | | 500 |
| | | | | | | | | | 3X3մ | | Խնձորենի | | | 500 |
| | | | | | | | | | | | Ընկուզենի | | | 500 |
| | 57 | 23 | 2,4 | Ամ 25 | 1900 | 5 | Տարախոտային B2 | Նոսրուտ 0,2 ԿցԲց+Թխ+Տձ | հարթակներով | Բնական վերականգնման օժանդակում | Կաղնի | 86 | | |
| | | | | | | | | | 1000հատ/հա | | | | | |
| | 59 | 18 | 5,4 | Ամ 25 | 1420 | 4 | Տարախոտային B2 | Բացատ | խրամատներով | Անտառմշակույթի հիմնում | Կաղնի | 195 | | |
| | | | | | | | | | 3000գծմ/հա | | Հացենի,Թխկի | | | 5400 |
| | 59 | 21 | 48,3 | Հվ 25 | 1340 | 4 | Տարախոտային B2 | Բացատ | խրամատներով | Անտառմշակույթի հիմնում | Կաղնի | 1734 | | |
| | | | | | | | | | 3000գծմ/հա | | Հացենի,Թխկի | | | 48300 |
| | 59 | 24 | 61,8 | Ամ 20 | 1370 | 4 | Տարախոտային C3 | Պարապուտ | խրամատներով | Անտառմշակույթի հիմնում | Սոճի | | 68500 | |
| | | | | | | | | | 3000գծմ/հա | | Հացենի,Թխկի | | | 135000 |
| **Անտառպետությունում** | | | **503,7** | **Բացատ և պարապուտ – 355,4հա<br>Նոսրուտ – 112,1հա<br>Ցածր լրիվության անտառ -36,2հա** | | | | **Անտառմշակույթի հիմնում - 365,6հա<br>Բնական վերականգնման օժանդակում – 137,1հա<br>Անտառմշակույթի լրացում - 1,0հա** | | | **Կաղնի** | **10139** | | |
| | | | | | | | | | | | **Սոճի** | | **256980** | |
| | | | | | | | | | | | **Թխկի, Հացենի** | | **217980** | **430420** |
| | | | | | | | | | | | **Տանձենի Խնձորենի** | | | **18960** |
| | | | | | | | | | | | **Ընկուզենի** | | | **9480** |
| | | | | | | | | | | | **Ընդամենը** | **10139** | **474960** | **458860** |
| | 17 | 1 | 0,7 | Հս 20 | 1900 | 5 | Շյուղախոտայի | Նոսրուտ 0,1 | հարթակներով | Բնական վերականգնման | Կաղնի | 42 | | |

| Անտառպետության անվանումը | Քառակուսի N | Հատված N | Մակերեսը, հա | Դիրքադրություն | ԾՄԲ, մ | Բոնիտետ | Անտառի տիպ | Հողատեսք | Հողի նախապատրաստման եղանակ | Անտառվերականգնման եղանակ | Վերականգնվող տեսակը | Սերմերի քանակը, կգ | Սերմնաբուսակների քանակը, հատ | Տնկանյութի քանակը, հատ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | ն C2 | ԿԲ+Հց | 1000հատ/հա | օժանդակում | | | | |
| | 17 | 33 | 0,4 | Հս-Ալ 15 | 1920 | 5 | Բոշխային C1 | Բացատ, Առ ծառ Կ+Բ | փոսերով | Անտառմշակույթի հիմնում | Տանձենի | | | 130 |
| | | | | | | | | | 3X3մ | | Խնձորենի | | | 130 |
| | | | | | | | | | | | Ընկուզենի | | | 140 |
| | 17 | 40 | 0,6 | Հս 15 | 1840 | 4 | Տարախոտային C2 | Նոսրուտ 0,1 ԿԲ+Հց | հարթակներով<br>1000հատ/հա | Բնական վերականգնման օժանդակում | Կաղնի | 25 | | |
| | 17 | 41 | 0,4 | Հվ-Ալ 20 | 1780 | 4 | Բոշխային C1 | Բացատ, Առ. ծառ ԿԲ | խրամատներով | Անտառմշակույթի հիմնում | Սոճի | | 550 | |
| | | | | | | | | | 3000գծմ/հա | | Հացենի,Թխկի | | 1100 | |
| | 19 | 49 | 0,9 | Հվ 15 | 1660 | 4 | Տարախոտային C1 | Բացատ | խրամատներով | Անտառմշակույթի հիմնում | Սոճի | | 1200 | |
| | | | | | | | | | 3000գծմ/հա | | Հացենի,Թխկի | | 2400 | |
| **Անտառպետությունում** | | | **3,0** | **Բացատ և պարապուտ - 1,7հա<br>Նոսրուտ - 1,3հա** | | | | **Անտառմշակույթի հիմնում -1,7հա<br>Բնական վերականգնման օժանդակում - 1,3հա** | | | **Կաղնի** | **67** | | |
| | | | | | | | | | | | **Սոճի** | | **1750** | |
| | | | | | | | | | | | **Թխկի, Հացենի** | | **3500** | |
| | | | | | | | | | | | **Տանձենի Խնձորենի** | | | **260** |
| | | | | | | | | | | | **Ընկուզենի** | | | **140** |
| | | | | | | | | | | | **Ընդամենը** | **67** | **5250** | **400** |
| **Անտառտնտեսությունում** | | | **506,7** | **Բացատ և պարապուտ – 357,1հա<br>Նոսրուտ – 113,4հա<br>Ցածր լրիվության անտառ – 36,2հա** | | | | **Անտառմշակույթի հիմնում -367,3հա<br>Բնական վերականգնման օժանդակում – 138,4հա<br>Անտառմշակույթի լրացում - 1,0հա** | | | ***Կաղնի*** | ***10206*** | | |
| | | | | | | | | | | | ***Սոճի*** | | ***258730*** | |
| | | | | | | | | | | | ***Թխկի, Հացենի,Կեչի*** | | ***221480*** | ***430420*** |
| | | | | | | | | | | | ***Տանձենի Խնձորենի*** | | | ***19220*** |
| | | | | | | | | | | | ***Ընկուզենի*** | | | ***9620*** |
| | | | | | | | | | | | ***Ընդամենը*** | ***10206*** | ***480210*** | ***459260*** |

Աղյուսակ 50. Անտառվերականգնման նախատեսվող տարածքների սերմերի և սերմնաբուսակ-տնկիների պահանջն ըստ անտառպետությունների

| № | Անտառպետություն | Վերականգնման նախատեսվող մակերեսը, հա | Սերմերի և տնկիների պահանջը | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Տեսակը | Սերմ, կգ | Սերմնաբուսակ, տնկի, հատ |
| 1 | Գորիսի | 503,7 | Սոճի | | 256980 |
| | | | Կաղնի | 10139 | |
| | | | Հացենի, թխկի, թեղի, կեչի | | 648400 |
| | | | Տանձենի,խնձորենի | | 18960 |
| | | | Ընկուզենի | | 9480 |
| | | | *Ընդամենը* | ***10139*** | ***933820*** |
| 2 | Շուռնուխի | 3,0 | Սոճի | | 1750 |
| | | | Կաղնի | 67 | |
| | | | Հացենի, թխկի, թեղի, կեչի | | 3500 |
| | | | Խնձորենի, տանձենի | | 260 |
| | | | *Ընկուզենի* | | *140* |
| | | | *Ընդամենը* | ***67*** | ***5650*** |
| **Ընդամենը** | | **506,7** | **Սոճի** | | **258730** |
| | | | **Կաղնի** | **10206** | |
| | | | **Հացենի, թխկի, թեղի, կեչի, լորենի** | | **651900** |
| | | | **Տանձենի, Խնձորենի** | | **19220** |
| | | | **Ընկուզենի** | | **9620** |
| | | | **Ընդամենը** | **10206** | **939470** |

## 10.5 Տնկանյութի աճեցում

2024-33թթ. ժամանակաշրջանում նախատեսվում է անտառի հիմնում 367,3 հեկտարի վրա՝ տարեկան մոտ 37 հեկտար: Տնկանյութի տեսականու ընտրությունը կատարվել է ելնելով կոնկրետ անտառաճման պայմաններից, հարմարվածության և արժեքավոր տեսակների վերականգնման և կենսաբազմազանության պահպանման հանգամանքներից:

2024-33թթ. համար տնկանյութը, ներառյալ նաև բուսակները և լրացման անհրաժեշտ 20%-ը կազմում է 11273364, իսկ միայն վերականգնման համար սերմերի պահանջը գնահատվել է 10206կգ:

Անտառային բացատներում և բուսականությունից ազատ (պարապուտ) տարածքներում անտառվերականգնման միջոցառումներ նախատեսվում է հիմնականում արևելյան կաղնու սերմերի ցանքով՝ սոճի, հացենի, թխկի, թեղի, լորենի և կեչի ծառատեսակների բուսակների հետ խառը անտառմշակույթների հիմնում, ինչպես նաև սոճու (գլխավոր տեսակ) և հացենի, թխկի, կեչի ծառատեսակների բուսակների խառը անտառմշակույթների հիմնում:

Ցածր լրիվության 36,2 հեկտար ծառուտներում լրիվության բարձրացման նպատակով նախատեսվում են բնական վերականգնման օժանդակման միջոցառումներ՝ հանքայնացման և հարթակներում սերմերի ցանքով, ինչպես նաև բուսակներով:

Միայն անտառտնտեսության անտառպատման և վերականգնման նախատեսվող ծավալների տնկանյութի տարեկան պահանջարկը բաց արմատային համակարգով բավարարելու համար կպահանջվի ընդհանուր շուրջ 0,974 հեկտար մակերեսով տնկարան (Աղյուսակ 51):

**Աղյուսակ 51. Անհրաժեշտ տնկանյութի աճեցման հաշվարկ**

| Աճեցվող տեսակը | Տարեկան պահանջվող տնկանյութը, հատ | 1 հա-ից բուսակների ստացման նորման, հազ. հատ | Տարեկան ցանքսի մակերեսը, հա | Ցանքաշրջանառության դաշտերի թիվը | Տնկարանի ընդհանուր մակերեսը, հա | Սերմերի ցանքսի նորման կգ/հա | Ցանքսի համար տարեկան անհրաժեշտ սերմերի քանակը, կգ |
|---|---|---|---|---|---|---|---|
| Սոճի | 31000 | 800 | 0,0388 | | | 60 | 2,33 |
| Հացենի | 31800 | 400 | 0,0795 | | | 230 | 18,29 |
| Թխկի | 31800 | 400 | 0,0795 | | | 230 | 18,29 |
| Կեչի | 8800 | 400 | 0,0220 | | | 50 | 1,10 |
| Լորենի | 6600 | 400 | 0,0165 | | | 170 | 2,81 |
| Տանձենի, խնձորենի | 2000 | 600 | 0,0033 | | | 60 | 0,20 |
| Ընկուզենի | 1000 | 250 | 0,0040 | | | 4860 | 19,44 |
| **Ընդամենը** | **113000** | | 0,2436 | **4** | **0.974** | | **62,44** |

## 10.6 Նախատեսվող միջոցառումների արդյունքում անտառային տարածքների արդյունավետության բարձրացում

Ստուգիչ ժամանակաշրջանում անտառային հողերի արտադրողականության բարձրացման նպատակով անտառշինությամբ նախատեսվում են հետևյալ միջոցառումները:

- Անտառսերմնային բազաների հիմնում սելեկցիոն հիմքի վրա,
- Անտառայինմշակույթների հիմնում,
- Ցածր լրիվության ծառուտների արտադրողականության բարձրացում,
- Բնական վերաճին օժանդակող համալիր միջոցառումներ,
- Խնամքի հատումների իրականացում,
- Անտառպահպանական և անտառպաշտպանական աշխատանքների բարելավում,
- Ընտրովի սանիտարական հատումներ:

Սելեկցիոն հիմքի վրա անտառսերմնային բազաների հիմնումը նախատեսվում է բարձր ցանքսային հատկություններով և արժեքավոր ժառանգական հատկանիշներով օժտված սերմերի ստացման համար:

Բարձրարժեք և բարձր արտադրողական անտառային տեսակներով հիմնման միջոցով ընդլայնվում է անտառածածկ մակերեսը, վերականգնվում են հատված և քայքայված անտառները, ծառուտները ձևավորվում են ցանկալի ուղղությամբ, նպաստվում է կենսաբազմազանության հաստատմանը:

Խնամքի հատումները օժանդակում են ծառուտների նպատակային ձևավորմանը, մասնավորապես տեսակային կազմի բարելավմանը, որակական և տարածքային տեղաբաշխմանը, անտառի հողապաշտպան, ջրապաշտպան, սանիտարա-հիգիենիկ, էսթետիկական հատկությունների բարելավմանը և անտառների արդյունավետության բարձրացմանը:

Ընտրողական սանիտարական հատումները հնարավորություն են ընձեռում բարելավելու անտառի սանիտարական վիճակը, պահպանելու անտառածածկ մակերեսը ստուգիչ շրջանում, բարելավելու տեսակային կազմը և ստանալու ծառուտների լրացուցիչ աճ: Նոր հիմնադրվող մշակույթների և բնական վերականգնման փուլում գտնվող ծառուտների պահպանության ու բնական վերականգնմանը օճանդակման նպատակով նախատեսվում է տարածքների ցանկապատում ընդհանուր 25կմ երկարությամբ, ինչը կապահովի շուրջ 3000հա վերը նշված տարածքների պահպանությունը:

Համաձայն կառավարման պլանի նախագծի, նախատեսվում է 2024-33թթ շրջանում միջոցառումներ իրականացնել հետևյալ ծավալներով (Աղյուսակ 52):

**Աղյուսակ 52. 2024-33թթ շրջանում նախատեսված միջոցառումներ**

| № | Միջոցառման անվանումը | Մակերեսը, հա |
|---|---|---|
| 1 | Անտառային մշակույթների հիմնում ոչ անտառածածկ տարածքներում | 368,3 |
| 1.1 | Բացատներում և պարապուտ տարածքներում | 357,1 |
| 1.2 | Հատված տարածքներում և անթրոպոգեն նոսրուտներում | 11,2 |
| 2 | Բնական վերականգնման օժանդակում | 138,4 |
| 2.1 | Նոսրուտներում | 103,2 |
| 2.2 | Ցածր լրիվության անտառներում | 35,2 |
| 3 | Ցանկապատման միջոցով 25000 գծմ | 3000 |
| **Ընդամենը** | | 3506,7 |

2024-33թթ. ժամանակաշրջանի անտառային մշակույթների արտադրողականության որոշման համար մշակույթները պայմանականորեն հավասարեցված են ծառուտների I հասակային դասին, ընդ որում ասեղնատերևավոր ծառատեսակների միջին աճը հաշվարկված է II հասակային դասի ծառուտների միջին աճի 40%-ի չափով, իսկ տերևավոր ծառատեսակներինը՝ II հասակային աճի 60%-ի չափով:

Անտառի գույքագրման և գնահատման արդյունքներով I հասակային դասի 1հա-ի միջին աճը ասեղնատերևավոր ծառատեսակների համար 1,2մ$^3$ է, իսկ տերևավոր տեսակների մոտ 0,9մ$^3$ (Աղյուսակ 53):

**Աղյուսակ 53. 2024-33թթ. ժամանակաշրջանում հիմնման նախատեսած անտառմշակույթների աճի ցուցանիշները**

| № | Միջոցառման անվանումը | Մակերեսը, հա | 1հա-ի լրացուցիչ միջին աճը, մ³ | Սպասվելիք լրացուցիչ աճը նախագծվող տարածքում, մ³ |
|---|---|---|---|---|
| 1 | 2024-33թթ. հիմնման նախատեսած մշակույթներ | 367,3 | | |
| 1.1 | Ասեղնատերևավոր | 65,9 | 1,2 | 79,08 |
| 1.2 | Տերևավոր | 301,4 | 0,9 | 271,26 |
| **Ընդամենը** | | | | **350,34** |

Բնական վերաճին օժանդակող միջոցառումների արդյունքում լրացուցիչ աճը կկազմի 3468,0x0,2մ³/հա (պայմանականորեն) = 693,6մ³:

Այսպիսով, նախատեսվող միջոցառումների արդյունքում սպասվելիք լրացուցիչ տարեկան աճը կկազմի 1043,94մ³:

Անտառակառավարման պլանով նախատեսված համալիր միջոցառումների արդյունքում, անտառտնտեսության անտառային հողերում տեղի կունենա անտառածածկ տարածքի տեսակարար կշռի ավելացում և ծառուտի կազմի բարելավում:

Անտառածածկ մակերեսի ավելացումը նախատեսվում է անտառային բացատներում և անթրոպոգեն նսրուտներում անտառմշակույթների հիմնման, ինչպես նաև բնական վերաճին օժանդակող միջոցառումների հաշվին (Աղյուսակ 54):

**Աղյուսակ 54. Տեղեկագիր անտառտնտեսության հողատեսքերում նախատեսվող փոփոխությունների**

| № | Հողատեսքի անվանումը | Չափմիավորը, հա | 01,01,2024թ. | 01,01,2033թ. | Փոփոխությունը | 01,01,2038թ. | Փոփոխությունը, 01,01,2024թ., համեմատությամբ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Անտառային հողեր, ընդամենը | հա | 11321,6 | 11321,6 | | 11321,6 | |
| 1.1. | Անտառածածկ, ընդամենը | հա | 9696,4 | 9832,9 | +136,5 | 10096,7 | +400,3 |
| 1.1.1. | Բնական ծագման անտառներ | հա | 9383,1 | 9392,1 | +9,0 | 9398,1 | +15,0 |
| 1.1.2. | Անտառմշակույթներ | հա | 313,3 | 440,8 | +127,5 | 708,6 | +385,3 |
| 1.2. | Չմիակցված սաղարթով անտառմշակույթներ | հա | 17,0 | 257,8 | +240,8 | - | -17 |
| 1.3. | Ոչ անտառածածկ, ընդամենը | հա | 1608,2 | 1230,9 | -377,3 | 1224,9 | -383,3 |
| 1.3.1. | Հատված և չվերականգնված տարածքներ, նոսրուտներ | հա | 772,1 | 752,9 | -19,2 | 630,7 | -23,2 |
| 1.3.2 | Բացատ և պարապուտ | հա | 836,1 | 478,0 | -358,1 | 476,0 | -360,1 |
| 2. | Ոչ անտառային հողեր, ընդամենը | հա | 2192,4 | 2192,4 | | 2192,4 | |
| 3. | Անտառտնտեսության Ընդհանուր մակերեսը | հա | 13514,0 | 13514,0 | | 13514,0 | |

Ինչպես երևում է աղյուսակից, 2024թ. համեմատությամբ անտառածածկ մակերեսը ստուգիչ ժամանակաշրջանի վերջում (2033թ.) կանխատեսվում է ավելացում 136,5հա-ով, իսկ 2038թ. ևս 263,8հա-ով, ընդ որում հիմնականում ոչ անտառածածկ տարածքներում հիմնադրվող անտառմշակույթների իրականացման հաշվին, իսկ բնական վերկանգնմամբ 2033թ. 9հա, 2038թ. ևս 6հա հեկտարով՝ անթրոպոգեն նոսրուտներում և մասամբ փոքր մակերեսով բացատներում, ինչպես նաև պարապուտ տարածքներում՝ հիմնականում բոխու բնական վերականգնմամբ:

Հաշվարկը կատարվել է ընդունելով, որ անտառվերականգնման ծավալներն իրականացվելու են 10 տարվա մոտավոր հավասար բաշխվածությամբ, որի դեպքում առաջին երեք տարիների հիմնված չմիակցված սաղարթով անտառմշակույթները՝ շուրջ 30%, բավարար խնամքի և պահպանության պայմաններում կփոխադրվեն անտառածածկ մակերես, իսկ մնացածը՝ հաջորդող 5 տարիներին:

Ոչ անտառածածկ մակերեսի նվազումը 2033թ. 377,3հա-ով, իսկ 2038թ. ևս 6հա-ով բացատրվում է բացատներում և պարապուտ տարածքներում անտառապատման, նոսրուտներում վերականգնման միջոցառումներով, ինչպես նաև վերը նշված բնական վերականգնմամբ:

Նախատեսվող միջոցառումների արդյունքում էական փոփոխություն է ակնկալվում նաև ծառուտների տեսակային կազմում: Հիմնական անտառկազմող ծառատեսակների որակական կազմը զգալիորեն փոխվել է ի հաշիվ ոչ անտառածածկ տարածքների և ցածր արտադրողականության ու լրիվության (0,3-0,4) ծառուտների անտառապատման և անտառվերականգնման միջոցառումների:

Կաղնու գերակշռությամբ ծառուտների մակերեսների ավելացումը 2024թ. համեմատությամբ 2033թ. 91,1հա, իսկ 2038թ. ևս 193,8 հեկտարով, բացատրվում է անտառային բացատներում, հատված տարածքներում և նոսրուտներում կաղնու սերմերով այլ տեսակների հետ խառը անտառմշակույթների հիմնման և բնական վերականգնման օժանդակման միջոցառումների իրականացմամբ:

Նույն հիմնավորմամբ բացատրվում է սոճուտների տարածքների ավելացումը 2033թ. 15,8 հեկտարով, իսկ 2038 թ. ևս 36,8 հեկտարով:

Անտառի կայուն կառավարման իրականացման դեպքում, ի հաշիվ բնական վերականգնված խառը կազմով բոխու գերակշռությամբ երիտասարդ տարիքային խմբի ծառուտներում իրականացվող մատղաշի խնամքի միջոցառումների, տեղի է ունենում ծառուտի կազմի բարելավում, ինչն էլ բնականաբար հանգեցնում է Կովկասյան բոխու գերակշռությամբ ծառուտների մակերեսի նվազեցմանը: Մյուս կողմից հատված տարածքների և անթրոպոգեն նոսրուտների, միջոցառումներ չնախատեսած՝ հատկապես բարձր թեքությունների տարածքներում կանխատեսվում է բնական վերականգնմամբ բոխու գերակշռությամբ ծառուտների մակերեսի ավելացում համապատասխանաբար 2,7 և 2038թ. ևս 3,2 հեկտարով:

Հացենի, թխկի, թեղի, կեչի և լորենու գերակշռությամբ ծառուտների մակերեսների ավելացումները հիմնականում բացատրվում է անտառային

բացատներում գլխավոր տեսակներ՝ կաղնու և սոճու հետ որպես ուղեկցող տեսակներ նշված ծառատեսակների հիմնման և առանձին տարածքներում կազմավորվող երիտասարդ ծառուտների կազմերի հնարավոր փոփոխություններով՝ 2033թ. ընդհանուր 10 հեկտար, իսկ 2038թ. ևս 16 հեկտար:

Ոչ անտառածածկ տարածքներում, համապատասխան տնկիների տնկմամբ, կանխատեսվում է անտառային տանձենու, խնձորենու և ընկուզենու ծառուտների մակերեսների ավելացումը 2033թ ընդհանուր 15հա, իսկ 2038թ. ևս 13 հեկտարով (Աղյուսակ 55):

**Աղյուսակ 55. Անտառածածկ մակերեսի տեսակային կազմի փոփոխությունն ըստ գերակշռող ծառատեսակների**

| № | Գերակշռող ծառատեսակը | Չափման միավորը | 2024թ. փաստացի | Կանխատեսվում է | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 2033թ. | Փոփոխությունը 2024թ. նկատմամբ | 2038թ. | Փոփոխությունը 2024թ. նկատմամբ |
| 1 | Սոճի | հա | 183,6 | 199,4 | +15,8 | 236,2 | +52,6 |
| 2 | Կաղնի սերմնային | հա | 5586,1 | 5677,2 | +91,1 | 5871,0 | +284,9 |
| 3 | Կաղնի կոճղաշիվային | հա | 952,3 | 952,3 | | 952,3 | |
| 4 | Բոխի | հա | 1832,1 | 1834,8 | +2,7 | 1838,0 | +5,9 |
| 5 | Բոխի կոճղաշիվային | հա | 772,1 | 774,0 | +1,9 | 775,0 | +2,9 |
| 6 | Հացենի | հա | 32,1 | 36,1 | +4,0 | 42,1 | +10,0 |
| 7 | Թխկի | հա | 5,1 | 9,1 | +4,0 | 15,1 | +10,0 |
| 8 | Լորենի | հա | - | 1,0 | +1,0 | 3,0 | +3,0 |
| 9 | Կեչի | հա | - | 1,0 | +1,0 | 3,0 | +3,0 |
| 10 | Թեղի | հա | 31,3 | 31,3 | | 31,3 | |
| 11 | Ակացիա սպիտակ | հա | 12,3 | 12,3 | | 12,3 | |
| 12 | Տանձենի | հա | 14,7 | 20,7 | +6,0 | 25,7 | +11,0 |
| 13 | Հունական ընկուզենի | հա | 28,0 | 31,0 | +3,0 | 34,0 | +6,0 |
| 14 | Խնձորենի | հա | 13,9 | 19,9 | +6,0 | 24,9 | +11,0 |
| 15 | Ուռենի ծառանման | հա | 24,2 | 24,2 | | 24,2 | |
| 16 | Կեռասենի | հա | 1,4 | 1,4 | | 1,4 | |
| 17 | Թփեր | հա | 207,2 | 207,2 | | 207,2 | |
| **Ամբողջը** | | հա | **9696,4** | 9832,9 | **+136,5** | 10096,7 | +400,3 |

## Բաժին 11. ԱՆՏԱՌԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

### 11.1 Անտառպահպանության խնդիրներն ու պահաբաժինների առանձնացումը

Պահպանության հիմնական խնդիրն է նվազագույնի հասցնել անտառային և այլ էկոհամակարգերի ու պաշարների չհամակարգված օգտագործումը, նվազեցնել հրդեհների ռիսկերը, ինչպես նաև բնական վերականգնման օժանդակման միջոցառումներով վերականգնել դեգրադացված անտառային տարածքները: Պահպանության գործողություններում ներառվում են՝

- Ինքնակամ հատումների ծավալների կրճատման նպատակով համալիր ծրագրի մշակում և իրականացում:
- Համայնքների կողմից օգտագործվող արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարման սխեմաների մշակում՝ բացառելով անտառվերականգնման ենթակա անտառներում անասունների մուտքը, ընդ որում պետք է գտնվեն այդ անտառներից դուրս, իսկ խոտհարքերում (որոնք շատ դեպքերում անտառային բացատներն են) կատարվող գործողությունները չպետք է բացասաբար անդրադառնան սերմնային ինքնավերականգնման վրա, իսկ համեմատաբար բարձր թեքությունների վրա գտնվող արոտավայրերի օգտագործումը չհանգեցնի էրոզիոն պրոցեսների ակտիվացմանը: Բնակավայրերից շատ մոտ գտնվող վերականգնման ենթակա տարածքների ցանկապատում՝ ընտանի կենդանիների մուտքն արգելելու նպատակով:

Անտառների պահպանության ուժեղացման, բնականոն վիճակի պահպանման, վիճակի բարելավման և կայուն կառավարման իրականացման նպատակով ամբողջ տարածքը բաժանվել է 21 պահաբաժինների (Աղյուսակ 56, քարտեզ 21):

**Աղյուսակ 56. Սյունիքի անտառտնտեսության պահաբաժինները**

| № | Անտառպետության անվանումը | Պահաբաժնի համարը | Քառակուսու համարը | Մակերեսը, հա |
|---|---|---|---|---|
| 1 | Գորիսի | 1 | 1,2,3,60 | 722 |
| | | 2 | 6,7 | 231 |
| | | 3 | 10,59 | 752 |
| | | 4 | 4 | 225 |
| | | 5 | 11 | 261 |
| | | 6 | 13,21,22,29,30,31,32,33,34,37,39,52 | 1136 |
| | | 7 | 18,19,20,27,28,51 | 877 |
| | | 8 | 38,43,44,45,46,47,48, | 857 |
| | | 9 | 35,36,40,41,42 | 551 |
| | | 10 | 14,15,16,17,23,24,25,26,49 | 769 |
| | | 11 | 12 | 171 |
| | | 12 | 5 | 122 |
| | | 13 | 8,9 | 274 |
| | | 14 | 50,53,54,55,56,57,58 | 1239 |
| | **Ընդամենը** | **14** | | **8187** |
| 2 | Շուռնուխի | 1 | 1,2,3,4,5,8,39 | 949 |
| | | 2 | 10,11,12,13,14 | 699 |
| | | 3 | 17,20,21,22,23 | 631 |

| № | Անտառպետության անվանումը | Պահաբաժնի համարը | Քառակուսու համարը | Մակերեսը, հա |
|---|---|---|---|---|
| | | 4 | 29,30,31,32,41,42 | 760 |
| | | 5 | 18,19,24,25,43 | 741 |
| | | 6 | 26,27,28,40 | 640 |
| | | 7 | 6,7,9,15,16 | 781 |
| | | *չի վերահսկվում* | *33,34,35,36,37,38* | *126* |
| | **Ընդամենը** | **7** | | ***5327*** |
| **Ամբողջը** | | | | **13514** |

Ամենամեծ պահաբաժնի մակերեսը 1239հա է (Գորիսի անտառպետություն, 14-րդ պահաբաժին), ամենափոքրինը՝ 122հա (Գորիսի անտառպետություն, 12-րդ պահաբաժին), պահաբաժինների միջին մակերեսը՝ 614,3հա: Պահաբաժինների չափերը սահմանվել են հաշվի առնելով բնական պայմանները, բնակավայրերից հեռավորությունը և նորմալ հսկողության իրականացման հնարավորությունները: Հսկողության տեսանկյունից առավել վտանգավոր՝ բանուկ ճանապարհներին նախատեսվում է տեղադրել մշտական և շարժական ուղեփակոցներ:

Անտառի պահպանության և հսկողության արդյունավետության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով առաջարկվում է Գորիսի անտառպետության պահաբաժինները վերաբաշխել 15 պահաբաժինների:

## 11.2Պահպանություն անտառային հրդեհներից

Անտառային հրդեհները լինում են գետնատարած, երբ այրվում է թափուկը, խաշամը, մամռային և խոտային ծածկույթը, շատ հաճախ նաև ենթանտառը, մատղաշը, իսկ սովորաբար ծառերը քիչ են վնասվում:

Շատ վտանգավոր է սաղարթային հրդեհը, երբ խաշամի, թափուկի հետ միասին այրվում է ծառերի սաղարթը, որի դեպքում այն ընթանում է թռիչքաձև:

Ելնելով եղանակային պայմաններից տարբերակվում են.

- Արտակարգ հրդեհավտանգ - երբ դիտվում է երկարատև տաք, չոր եղանակ և օդի միջին ջերմաստիճանը 20°-ից բարձր է, իսկ հարաբերական խոնավությունը 40%-ից ցածր:
- Ուժեղ հրդեհավտանգ - այն վայրերը, որտեղ երկար ժամանակ դիտվում է չոր եղանակ, երբեմն թույլ տեղումներով, իսկ հարաբերական խոնավությունը 40-60% է:
- Թույլ հրդեհավտանգ - երբ հաճախակի անձրևներ են տեղում և անտառային թաղիքը խոնավ է:
- Ոչ հրդեհավտանգ, երբ երկարատև անձրևներ են և հարաբերական խոնավությունը 80%-ից բարձր:

Անտառների հրդեհավտանգությունը բնորոշվում է անտառի տիպով, ծառատեսակների կենսաբանական առանձնահատկություններով:

Անտառի գույքագրման ընթացքում յուրաքանչյուր քառակուսու համար որոշվել է հրդեհավտանգության դասը և տվյալները մշակվել են համակարգչային ծրագրով, նույնիսկ ըստ հատվածների և քարտեզագրվել:

Անտառտնտեսության տարածքներում հրդեհավտանգության միջին դասը 2,7 է: (Աղյուսակ 57, քարտեզ 22):

Անտառտնտեսության 6,8%-ը հրդեհավտանգության 1-ին դասի տարածքներ են, 25,7%-ը 2-րդ դասի, 55,8%-ը՝ 3-րդ, 4-րդ և 5-րդ դասերի տարածքները միասին՝ 11,7%:

**Աղյուսակ 57. Տեղեկագիր անտառային հողերի տեղաբաշխման ըստ հրդեհավտանգության դասերի**

| Անտառպետություն | Հրդեհավտանգության դասը, հա | | | | | Ընդամենը | Միջին դասը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | | |
| Գորիսի | 605 | 1774 | 4808 | 909 | 91 | 8187 | 2,8 |
| Շուռնուխի | 315 | 1695 | 2734 | 496 | 87 | 5327 | 2,7 |
| **Ընդամենը** | **920** | **3469** | **7542** | **1405** | **178** | **13514** | **2,7** |
| % % | 6,8 | 25,7 | 55,8 | 10,4 | 1,3 | 100,0 | |

Անտառտնտեսության կառավարման պլանի տասնամյա գործողությունների պլանում նախատեսվում են նախազգուշացնող ցուցատախտակների տեղադրում, հանգստի և ծխելու տեղերի առանձնացում, կրակմարիչների ձեռք բերում, հակահրդեհային ճանապարհների վերանորոգում, հանդիպումներ հարակից համայնքներում՝ հակահրդեհային իրազեկության բարձրացման և հակահրդեհային միջոցառումների իրականացման թեմաներով և այլն: Առաջարկվում է սեզոնային հոսք ունեցող, առավել չորային հատվածներում 2 ջրամբարտակների կառուցում: Անհրաժեշտ է զարգացնել անտառային հրդեհներին արագ արձագանքման կարողությունները:

**Աղյուսակ 58. Տեղեկագիր հակահրդեհային միջոցառումների**

| № | Միջոցառումներ | Չափի միավորը | Նախատեսվում է |
|---|---|---|---|
| 1. | Նախազգուշական միջոցառումներ | | |
| 1.1. | Խորհրդակցություններ բնակավայրերում | հանդիպում | 14 |
| 1.2. | Մշտական ցուցատախտակներ | հատ | 20 |
| 1.3. | Հանգստի և ծխելու տեղերի առանձնացում | հատ | 30 |
| 2. | Հակահրդեհային կառուցումներ | | |
| 2.1. | Հակահրդեհային ճեղքվածքների կառուցում | կմ | 3 |
| 2.2. | Հանքայնացված շերտերի կաառուցում | կմ | 3 |
| 2.3. | Ջրավամբարտակների կառուցում | հատ | 2 |
| 2.4. | Հակահրդեհային նշանակության ճանապարհների վերանորոգում | կմ | 5 |
| 3. | Հակահրդեհային սարքավորումների ձեռքբերում | | |
| 3.1. | Ավտոմեքենա | հատ | 1 |
| 3.2. | Մոտոցիկլետ | հատ | 2 |
| 3.3. | Կրակմարիչներ | հատ | 21 |
| 3.4. | Օժանդակ սարքավորումներ | կոմպլեկտ | 5 |
| 4. | Կրակմարող կամավոր խմբերի կազմավորում | խումբ | 2 |

### 11.3 Ճանապարհային ցանց

Անտառտնտեսական ճանապարհները բնութագրող հիմնական տարրերն են.

- Օգտագործման գոտի - հողաշերտի այն հատվածը, որի վրա կառուցված է ճանապարհը: Հողային շերտի լայնությունը կախված է ճանապարհի կարգից.

1-ին կարգ - 6,5մ և ավելի

2-րդ կարգ - 4,5-6,4 մ

3-րդ կարգ - 4,4մ և պակաս:

- Անցումային գոտի, որտեղով կատարվում է երթևեկությունը,

1-ին կարգ - 5,5մ և ավելի լայնություն

2-րդ կարգ - 3,5-5,4մ լայնություն

3-րդ կարգ - անցումային մասի լայնությունը հաշվի չի առնվում:

- Ջրատար առվակներ (կյուվետներ) - ջրհեռացման խողովակներ կառուցվում և տեղադրվում են ճանապարհի երկու կողմից և լայնությամբ մակերեսային և գրունտային ջրերի հեռացման համար, որոնց բացակայությունը ճանապարհների փչացման հիմնական պատճառն է:
- Հողային պաստառ – կողային առուների միջև ընկած հողաշերտն է, որի վրա կառուցվում է ճանապարհի երթևեկելի մասը: Խճով, բետոնով, ասֆալտ-բետոնով կամ որևէ այլ ամուր շինությունով կառուցվածներն ամուր պատվածքով ճանապարհ են: Շատ հաճախ անտառմիջյան ճանապարհները լինում են բնահողային:

Անտառտնտեսությունում անտառային ճանապարհները ծառայում են ինչպես անտառտնտեսական, այնպես էլ հակահրդեհային նպատակների համար և դժվար է դրանք տարանջատել: Ճանապարհները հիմնականում փափուկ (բնահողային) գրունտով են, սեզոնային օգտագործման, թեև մի մասում պարբերաբար կատարվում է մասնակի վերանորոգում ամբողջ տարի օգտագործման նպատակով, սակայն ջրհեռացման կյուվետների, խողովակների և խճածածկի բացակայության հետևանքով ճանապարհների վիճակն անմխիթար է:

Ճանապարհային ցանցի ընդհանուր երկարությունը, որը կարելի է օգտագործել անտառտնտեսության տարբեր կարիքների համար, գնահատվել է 625կմ է, որից հանրապետական նշանակության 71կմ, համայնքային նշանակության 152կմ և գրունտային անտառային ճանապարհներ՝ 320կմ (Աղյուսակ 59, Քարտեզ 23): Անտառակառավարման 10 տարիների համար նախատեսվում է անտառտնտեսական և հակահրդեհային նշանակության ճանապարհների վերանորոգում ընդհանուր 20կմ և կառուցում՝ 5կմ:

**Աղյուսակ 59. Ճանապարհային ուղիների բնութագիրը**

| № | Ճանապարհների տեսակները | Ճանապարհների երկարությունը, կմ |
|---|---|---|
| 1 | Հանրապետական նշանակության | 71 |
| 2 | Միջպետական նշանակության | 82 |
| 3 | Համայնքային նշանակության | 152 |
| 4 | Անտառտնտեսական և հակահրդեհային նշանակության | 320 |
| 5 | Անտառտնտեսությունում | 625 |

## Բաժին 12. ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Անտառտնտեսության կառավարման նպատակն է անտառաշինական նախագծերով նախատեսված համալիր միջոցառումների իրականացման միջոցով անտառների կայուն կառավարման ապահովումը, անտառների արտադրողականության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացման ապահովումը, կենսաբանական բազմազանության պահպանությունը, բնական և պատմական հուշարձանների պահպանությունը:

«Սյունիքի անտառտնտեսություն» մասնաճյուղի տնօրենի ենթակայությամբ առաջարկվում է ստեղծել մոնիթորինգի և գիտության միավոր (1 աշխատակից) և էկոզբոսաշրջության միավոր (1 աշխատակից): Նրանք պետք է անցնեն հատուկ մասնագիտական վերապատրաստում և իրականացնեն արգելավայրի և ընդհանուր անտառտնտեսության համապատասխան գործառույթները:

Տնօրենի ենթակայությամբ հասարակայնության հետ կապերի պատասխանատուն պետք է համակարգի արգելավայրի և անտառտնտեսության իրազեկության և էկոկրթության աշխատանքները:

Տնօրենի ենթակայությամբ միջոցների համալրման պատասխանատուն պետք է իրականացնի ֆինանսավորման նոր աղբյուրների հայթայթման գործառույթը:

Անտառտնտեսության տնօրենը և հիմնական գործառույթներն իրականացնող պատասխանատուները պետք է սերտորեն համագործակցեն էկոպարեկային ծառայության և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժինների հետ և ստանան անհրաժեշտ աջակցությունը:

Անտառտնտեսության գործառույթների կազմակերպման և պատշաճ իրականացման համար անհրաժեշտ են համապատասխան մարդկային և տեխնիկական հզորություններ: Մասնավորապես անհրաժեշտ է անձնակազմի կարճաժամկետ և երկարաժամկետ վերապատրաստման ծրագրերի մշակում և իրականացում՝ անտառների և կենսաբազմազանության պահպանության և մոնիթորինգի, անտառի պաշտպանության, էկոզբոսաշրջության զարգացման, ֆինանսական միջոցների համալրման և այլ ուղղություններով:

### 12.1 Անտառի և կենսաբազմազանության պահպանություն

Անտառների և կենսաբազմազանության պահպանությունն ուղղված է լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության բնականոն զարգացման ապահովմանը, լեռնային անտառային էկոհամակարգերի և դրանց բնորոշ հազվագյուտ և արժեքավոր բույսերի ու կենդանիների պահպանությանն ու վերարտադրությանը:

## 12.2 Մոնիթորինգ և գիտական ուսումնասիրություններ

Անտառտնտեսության տարածքում մոնիթորինգը և գիտական ուսումնասիրությունները կիրականացվեն «Սյունիքի անտառտնտեսություն» մասնաճյուղի տնօրենի ենթակայությամբ ստեղծված մոնիթորինգի և գիտության միավորը էկոպարեկային ծառայության և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի գլխամասի համապատասխան պատասխանատուների հետ համատեղ և պետք է սերտորեն համագործակցի գիտական և ուսումնական հաստատությունների (ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, համալսարաններ) և ՀԿ-ների հետ: Անրհաժեշտ է գտնել և ներգրավել այն հաստատությունները և հետազոտողներին, որոնք հետաքրքրված են հատկապես արգելավայրի տարածքում որոշակի տեսակների/էկոհամակարգերի վերաբերյալ թիրախային ուսումնասիրություններ իրականացնելու հարցում: Մոնիթորինգի դաշտային աշխատանքների իրականացմանն անհրաժեշտ է ներգրավել կամավորների՝ ՀԿ-ներ, դպրոցներ, համալսարանների ուսանողներ և այլն:

Անտառտնտեսության անձնակազմը պետք է աջակցի գիտնականներին, հետազոտողներին, կամավորներին՝ մոնիթորինգի և գիտական ուսումնասիրությունների դաշտային աշխատանքների իրականացման ընթացքում:

### 12.2.1 Մոնիթորինգի ծրագիր

Կենսաբազմազանության մոնիթորինգի համակարգի ներդրման հիմնական նպակակն է կանխատեսել բնական և մարդածին ազդեցությունների հետևանքով առաջ եկած գործընթացների զարգացմումը և կատարել կանխատեսումներ դրանց հետագա ընթացքի վերաբերյալ: Ստացված մոնիթորինգային տվյալները պետք է օգտագործվեն անտառտնտեսության տարածքում իրականացվող կառավարման գործողություններում համապատասխան փոփոխություններ և շտկումներ կատարելու համար՝ ուղղված էկոհամակարգերի, բնական միջավայրերի և տեսակների պահպանությանը և բնականոն զարգացմանը:

Կենսաբազմազանության մոնիթորինգի խնդիրներն են.

- Բացահայտել կենսաբանական բազմազանության տեսակային կազմի, տարածվածության, քանակական ցուցանիշների, բնակության վայրերի, կենդանիների միգրացիոն ուղիների առկա վիճակը և միտումները:
- Բացահայտել յուրաքանչյուր էկոհամակարգի և դրա բաղադրիչների վրա մարդածին գործոնների ազդեցությունը:
- Գնահատել և կանխատեսել էկոհամակարգերի բաղադրիչների՝ կենսաբազմազանության և բնական ռեսուրսների քանակական և որակական փոփոխությունների ընթացքը:

Անհրաժեշտ է մշակել մշտական մոնիթորինգի ծրագիր, հաշվի առնելով, որ Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության՝ «Հայաստանում անտառների դիմակայունության բարձրացում՝ մեղման միջոցառումների շնորհիվ հարմարեցման և գյուղական վայրերում կանաչ տարածությունների ընդլայնման միջոցով» ծրագրի

շրջանակներում նախատեսվում է իրականացնել Հայաստանի անտառների ազգային գույքագրում: Այն կներառի ինդիկատորային տեսակների ընտրություն՝ էկոհամակարգերի վիճակի միտումները բացահայտելու համար, մոնիթորինգային արձանագրությունների մշակում, դիտակետերի և փորձահրապարակների որոշում և այլն: Անհրաժեշտ է ներդնել և վարել մոնիթորինգի տվյալների բազա և համակարգչային ծրագիր:

Զբոսաշրջության մոնիթորինգը պետք է ներառի արգելավայրի տարածքների զբոսաշրջիկների այցելության արդյունքում բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում և ճիշտ կառավարում, ինչպես նաև մատուցվող ծառայության որակի գնահատում: Մասնավորապես, մոնիթորինգը պետք է անդրադառնա զբոսաշրջության ծրագրի շրջանակներում իրականացվող գործողություններին, որոնք հնարավոր վնաս կարող են հասցնել էկոհամակարգերի ամբողջականությանը: Անհրաժեշտ է ստեղծել զբոսաշրջության տեղեկատվական բազա GIS համակարգով:

Անհրաժեշտ է ստեղծել մոնիթորինգ իրականացնող տեխնիկական հզորություններ: Անհրաժեշտ է կազմակերպել գործնական դասընթացներ անտառտնտեսության համապատասխան մասնագետների համար:

### 12.2.2Գիտական ուսումնասիրություններ

Գիտական ուսումնասիրությունները նպատակաուղղված են հիմնական գործառույթների՝ կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության ու պատմամշակութային և բնության ժառանգության պահպանության արդյունավետ իրականացմանը:

Գիտահետազոտական աշխատանքների արդյունքում ստացված տեղեկատվությունը կիրառվում է բնապահպանական միջոցառումների պլանավորման, այդ թվում էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանության ու վերականգնման, և դրանց արդյունավետության գնահատման համար, պահպանվող համակարգերի և օբյեկտների վիճակի գնահատման և կանխատեսման, մոնիթորինգի իրականացման, էկոլոգիական հարցերի լուսաբանման, տուրիզմի և ռեկրեացիայի, ինչպես նաև իրականացվող տնտեսական գործունեության ազդեցության գնահատման համար:

Գիտական ուսումնասիրությունները իրականացվելու են կազմակերպության համապատասխան մասնագետների միջոցով: Նրանք պետք է համագործակցեն գիտնականների և հետազոտողների հետ՝ աջակցելով նրանց ու տրամադրելով տեխնիկական օգնություն դաշտային աշխատանքներում: Գիտական և հետազոտական աշխատանքները պետք է իրականացվեն անտառների կառավարման համար կարևոր ոլորտների բացահայտմամբ և առաջնայնությունների սահմանմամբ՝ համագործակցելով համապատասխան մասնագետների հետ:

Ելնելով վերոհիշյալից, 2024-2033թթ-ի գիտական ուսումնասիրությունների ծրագրում առաջարկվում է ներառել.

- Հայաստանի բույսերի և կենդանիների Կարմիր գրքում ընդգրկված բուսական ու կենդանական աշխարհի ներկայացուցիչների դաշտային ուսումնասիրություններ (գույքագրման իրականացում, թվաքանակի հաշվառման և պոպուլյացիաների գնահատման աշխատանքներ)՝ հատուկ ուշադրություն դարձնելով առավել վտանգված տեսակների հայտնաբերմանը,
- կենսաբազմազանության տվյալների բազայի ստեղծում/վարում և պահպանման ու հարստացման նպատակով արժեքավոր և հազվագյուտ տեսակների հավաքածուների կազմում,
- հազվագյուտ և վտանգված տեսակներից կազմված էկոհամակարգերի (ծառուտների) և դրանց ինքնավերականգնման ու ինքնակարգավորման հնարավորությունների բարձրացման ուսումնասիրություններ և դրանց վիճակի բարելավման լրացուցիչ միջոցառումների նախատեսում,
- կլիմայի փոփոխության նկատմամբ անտառների խոցելիության և հարմարողա-կանության բարձրացման ուսումնասիրություններ և կոնկրետ միջոցառումների նախատեսում,
- ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների ուսումնասիրություններ և բնական էկոհամակարգերի վրա դրանց ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունների նախատեսում,
- անտառային էկոհամակարգերի կողմից տրամադրվող էկոհամակարգային ծառայությունների ուսումնասիրություններ, ներառյալ օգտակար բուսատեսակների պաշարների, ածխածնի կուտակման և այլ ուսումնասիրությունները:

**Աղյուսակ 60. Պահպանության և մոնիթորինգի իրականացման համար անհրաժեշտ միջոցներ**

| № | Սարքավորում, գույք | Քանակը |
|---|---|---|
| 1 | Ամենագնաց մեքենա | 1 |
| 2 | Ձիեր և հավելյալ միջոցներ (3-ական յուրաքանչյուր անտառպետության համար) | 6 |
| 3 | Մշտական ուղեփակոցներ | 2 |
| 4 | Շարժական ուղեփակոցներ | 4 |
| 5 | GPS սարքեր | 4 |
| 7 | Ֆոտո/վիդեո նկարահանման սարք | 1 |
| 8 | Հեռադիտակ | 8 |
| 9 | Գիշերային հսկման հեռադիտակ | 2 |
| 10 | Տեսահսկման համակարգեր՝ տեսախցիկներ | 2 |
| 11 | Ամառային համազգեստ | 38 |
| 12 | Ձմեռային համազգեստ | 38 |
| 13 | Գրասենյակային սարքավորումներ (համակարգիչ, տպիչ, սկաներ և այլն) | 1 |

**Բաժին 13. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ**

«Սյունիքի անտառտնտեսություն» մասնաճյուղում 2008-2022 թվականներին պաշտոնական հաշվետվությամբ բնափայտային արտադրանքի ընդհանուր ծավալը կազմել է 63060,7խտմ³, գումարային արտահայտությամբ՝ 488936 հազ. դրամ, նույն թվում հատումներից՝ վառելափայտը 60624,1խտմ³, 432846 հազ. դրամ, շինափայտը 2436,6մ³, 56089,5 հազ. դրամ, թափուկ բնափայտը ընդհանուր 3940խտմ³, 4093,5 հազ. դրամ (Աղյուսակ 62):

Կառավարման պլանի պատրաստմանը նախորդող երկու տարիներին անտառտնտեսական աշխատանքները դրամական արտահայտությամբ կազմել են համապատասխանաբար 2021թ.՝ 14678 հազ. դրամ և 2022թ.՝ 4519,6 հազ. դրամ (Աղյուսակ 61):

Ընդհանուր արտադրական ծախսերը համապատասխանաբար 25308 հազ դրամ, 14076,5հազ դրամ:

Անտառային եկամուտը՝ 2021թ. 38517,3հազ.դրամ, 2022թ. 32177,9հազ.դրամ, ընդամենը 2 տարիներին միասին՝ 70695,2 հազ. դրամ, որից անտառանյութի արտադրությունից՝ 68494հազ.դրամ, անտառի կողմնարդյունքից, ընդհամենը 2201,2 հազ.դրամ:

2007թ. կառավարման պլանով նախատեսված է եղել իրականացնել խնամքի հատումներ, ընդհանուր՝ 917 հեկտարի վրա, հատման նախատեսած ընդհանուր պաշարը 18870խտմ³, նույն թվում լուսավորման և մաքրման հատում 17,3 հեկտարի վրա, նոսրացման հատուներ՝ 86,7 հեկտարի վրա, հատման նախատեսած ընդհանուր պաշարը 1507խտմ³ և անցումային հատումներ՝ 817,3 հեկտարի վրա, հատման նախատեսած ընդհանուր պաշարը 17312խտմ³:

ՀՀ Անտառային կոմիտեի ներկայացրած տեղեկատվության համաձայն, 2008-2022 թվականների ընթացքում անտառտնտեսության ամբողջ տարածքում բոլոր տեսակի հատումներ իրականացվել են ընդհանուր 2072 հեկտարի վրա, 44272խտմ³ ընդհանուր պաշարով: Նույն թվում նոսրացման հատումներ 1852խտմ³, անցումային հատումներ 20820խտմ³:

**Աղյուսակ 61. «Սյունիքի անտառտնտեսություն» մասնաճյուղի կողմից իրականացված հիմնական աշխատանքների և ծախսերի ծավալների**

| Գործունեության և ծախսերի անվանումը | Ծախսերը, հազար դրամ | |
|---|---|---|
| | 2021 | 2022 |
| Անտառտնտեսական գործունեություն | 88318,0 | 72913,3 |
| Անտառտնտեսական աշխատանքներ | 14678,0 | 4519,6 |
| Անտառմշակութային աշխատանքներ | 960 | 2809,2 |
| Անտառպաշտպանական և անտառպահպանական աշխատանքներ | 60016,4 | 54296,2 |
| Հակահրդեհային միջոցառումներ | | |
| Ընդհանուր արտադրական ծախսեր | 25308 | 14076,5 |

| Գործունեության և ծախսերի անվանումը | Ծախսերը, հազար դրամ | |
|---|---|---|
| | 2021 | 2022 |
| Անտառտնտեսությունում գործող գներով ապրանքային արտադրանք | 25308 | 14076,5 |
| Իրացված արտադրանքի ծավալը մ$^3$ | 3336,81 | 2751,83 |
| Անտառի կողմնարդյունք, հազ. դրամ | 1100,6 | 1100,6 |
| Բնօգտագործման վճար, հազ. դրամ | 1698,5 | 1286,2 |
| Անտառային եկամուտ, ընդամենը հազ. դրամ, որից | 38517,3 | 32177,9 |
| Անտառանյութի արտադրությունից | 37416,7 | 31077,3 |
| Անտառի կողմնարդյունքից | 1100,6 | 1100,6 |

**Աղյուսակ 62. «Սյունիքի անտառտնտեսություն» մասնաճյուղի բնափայտային արտադրանքների իրացման ծավալները (2008-2022թթ)**

| № | Արտադրանքի տեսականին | Տարեթիվը | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2008 | | 2009 | | 2010 | | 2011 | | 2012 | | 2013 | | 2014 | | 2015 | |
| | | ծավալը մ$^3$ | արժեքը հազ.դր | ծավալը մ$^3$ | արժեքը հազ.դր | ծավալը մ$^3$ | արժեքը հազ.դր | ծավալը մ$^3$ | արժեքը հազ.դր | ծավալը մ$^3$ | արժեքը հազ.դր | ծավալը մ$^3$ | արժեքը հազ.դր | ծավալը մ$^3$ | արժեքը հազ.դր | ծավալը մ$^3$ | արժեքը հազ.դր |
| 1 | Վառելափայտ, նույն թվում, | 6565,6 | 24632,2 | 6619,2 | 24424,0 | 7073,6 | 23689,9 | 4230,4 | 21221,0 | 3246,5 | 19598,5 | 3298,3 | 19332,1 | 3499,5 | 26372,2 | 2514,3 | 24966,1 |
| 1.1 | Հատումներից | 5981,6 | 23902,2 | 5582,2 | 23379,5 | 5430,6 | 22046,9 | 3554,4 | 20545,0 | 3246,5 | 19598,5 | 3198,3 | 19332,1 | 3499,5 | 26372,2 | 2415,3 | 24966,1 |
| 1.2 | Թափուկից | 584,0 | 730,0 | 1037,0 | 1044,5 | 1643,0 | 1643,0 | 676,0 | 676,0 | | | | | | | | |
| 2 | Շինափայտ | 197,8 | 5782,2 | 200,7 | 6087,6 | 165,1 | 5047,8 | 147,6 | 3029,0 | 154,8 | 2731,0 | 339,6 | 6525,0 | 186,7 | 3439,1 | 104,5 | 1889,0 |
| 2.1 | Հատումներից | 197,8 | 5782,2 | 200,7 | 6087,6 | 165,1 | 5047,8 | 147,6 | 3029,0 | 154,8 | 2371,0 | 339,6 | 6525,0 | 186,7 | 3439,1 | 104,5 | 1889,0 |
| 2.2 | Թափուկից | | | | | | | | | | | | | | | | |
| 3 | Ընդամենը | 6763,4 | 30414,4 | 6819,9 | 30511,6 | 7238,7 | 28737,7 | 4378,0 | 24250,0 | 3401,3 | 22329,5 | 3537,9 | 25857,1 | 3686,2 | 29811,3 | 2618,8 | 26855,1 |

| № | Արտադրանքի տեսականին | Տարեթիվը | | | | | | | | | | | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2016 | | 2017 | | 2018 | | 2019 | | 2020 | | 2021 | | 2022 | | | |
| | | ծավալը մ$^3$ | արժեքը հազ.դր | ծավալը մ$^3$ | արժեքը հազ.դր | ծավալը մ$^3$ | արժեքը հազ.դր | ծավալը մ$^3$ | արժեքը հազ.դր | ծավալը մ$^3$ | արժեքը հազ.դր | ծավալը մ$^3$ | արժեքը հազ.դր | ծավալը մ$^3$ | արժեքը հազ.դր | ծավալը մ$^3$ | արժեքը հազ.դր |
| 1 | Վառելափայտ, նույն թվում, | 3007,3 | 26876,4 | 4868,0 | 49053,3 | 3878,3 | 42143,1 | 3565,0 | 39741,9 | 2480,8 | 26669,1 | 3222,2 | 35336,4 | 2655,3 | 28789,8 | **60624,1** | **432846,0** |
| 1.1 | Հատումներից | 3007,3 | 26876,4 | 4867,0 | 49053,3 | 3878,3 | 42143,1 | 3565,0 | 39741,9 | 2480,8 | 26669,1 | 3222,2 | 35336,4 | 2655,3 | 28789,8 | **56684,1** | **428753,0** |
| 1.2 | Թափուկից | | | | | | | | | | | | | | | **3940** | **4093,5** |
| 2 | Շինափայտ | 200,0 | 3375,0 | 246,6 | 5647,6 | 15,0 | 316,1 | 112,0 | 3165,0 | 154,9 | 4687,4 | 114,6 | 2080,3 | 96,6 | 2287,5 | **2436,6** | **56089,5** |
| 2.1 | Հատումներից | 200,0 | 3375,0 | 246,6 | 5647,6 | 15,0 | 316,1 | 112,0 | 3165,0 | 154,9 | 4687,4 | 114,6 | 2080,3 | 96,6 | 2287,5 | **2436,6** | **56089,5** |
| 2.2 | Թափուկից | | | | | | | | | | | | | | | | |
| 3 | Ամբողջը | 3207,3 | 30251,4 | 5114,6 | 54700,9 | 3893,3 | 42459,2 | 3677,0 | 42906,9 | 2635,7 | 31356,5 | 3336,81 | 37416,7 | 2751,9 | 31077,3 | **63060,7** | **488936,0** |

## Բաժին 14. ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐԴ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 14.1 Եզրակացություն նախորդ անտառտնտեսվարման վերաբերյալ

Անտառտնտեսության ընդհանուր մակերեսը 2007-ի համեմատությամբ առանց Արծվանիկի անտառպետության 2023թ. ավելացել է 1414 հեկտարով, անտառածածկի մակերեսը 977,3 հեկտարով, ինչը բացատրվում է շրջակա բնակավայրերի կադաստրային և անտառտնտեսության ընթացիկ գույքագրմամբ անտառային հողատեսքերի ու սահմանների ճշտման հանգամանքով:

Անտառգույքագրման և գնահատման արդյունքներով ծառուտների միջին տարիքը 88 է, նախորդի համեմատ ավելացել է 10 տարով, կայուն անտառակառավարման պարագայում ավելացումը կկազմեր մոտ 15 տարի: Միջին լրիվությունը 2007թ. համեմատությամբ նվազել է 0,01 միավորով, 1 հեկտարի միջին պաշարը նվազել է 4խմ$^{3}$-ով, իսկ միջին աճը՝ 0,03խմ$^{3}$-ով: Որոշակի փոփոխություններ է կատարվել ծառուտի միջին կազմում՝ 2007թ. 4,5 կաղնի 4,6 բոխու փոխարեն, 2023 թվականին 4,4 կաղնի 4,8 բոխի: Նշված ցուցանիշները վկայում են, որ անցած 16 տարիներին անտառտնտեսության առանձին տարածքներում իրականացվել են չհամակարգված հատումներ:

Անտառտնտեսության անտառածածկի 20,3%-ը և ընդհանուր պաշարի 10,1%-ը ցածր լրիվության (0,3-0,4) ծառուտներ են, համապատասխանաբար՝ 69,8% և 75,1%-ը միջին լրիվության ծառուտներ, իսկ 10,5% և 14,8%-ը բարձր լրիվության ծառուտներ:

Մտահոգիչ է անտառածածկ մակերեսի ըստ տարիքային խմբերի անհավասարաչափ բաշխվածությունը՝ երիտասարդ տարիքային խումբը ընդհամենը 5,2%, հասունացող և հասուն ու գերհասուն ծառուտները միասին 9,8%, ինչը նախկին տասնամյակներում ոչ ճիշտ անտառակառավարման արդյունք է: Խնդիրը լուծում կստանա առաջիկա տասնամյակներում իրականացվելիք հիմնավորված խնամքի և անտառվերականգնման հատումների արդյունքում:

Հիմնական անտառկազմող կաղնու և բոխու գերակշռությամբ ծառուտների մակերեսների ավելացումը բացատրվում է նախորդ անտառշինությունից դուրս մնացած, հատկապես ձորակներում և ժայռերի վրա ոչ մեծ զանգվածներով շերտերի ընդգրկման, ինչպես նաև սահմանների ճշտման հանգամանքով, իսկ սոճու գերակշությամբ ծառուտների մակերեսը 8,6 հեկտարով նվազումը գույքագրման և գնահատման արդյունք է:

Նախորդ կառավարման շրջանում լուրջ թերություններ և մասնագիտական տեսանկյունից ոչ ճիշտ կառավարում է իրականացվել անտառօգտագործման բնագավառում: Այսպես, 2007թ. կառավարման պլանով նախատեսված է եղել իրականացնել խնամքի հատումներ, ընդհանուր՝ 917 հեկտարի վրա, հատման նախատեսած ընդհանուր պաշարը 18870խմ$^{3}$, նույն թվում լուսավորման և մաքրման հատում 17,3 հեկտարի վրա, նոսրացման հատուներ՝ 86,7 հեկտարի վրա, հատման

նախատեսած ընդհանուր պաշարը 1507խտմ³ և անցումային հատումներ՝ 817,3 հեկտարի վրա, հատման նախատեսած ընդհանուր պաշարը 17312խտմ³:

Անտառի բնականոն զարգացման տեսանկյունից շատ կարևոր անտառվերականգնման հատումներ նախատեսված է եղել 73,9 հեկտարի վրա, չի իրականացվել, դրա փոխարեն իրականացվել է սանիտարական հատում: Նույնը՝ մատղաշի խնամքի պարագայում, 17,3 հեկտարի վրա նախատեսած լուսավորման և մաքրման միջոցառումը չի կատարվել:

ՀՀ Անտառային կոմիտեի ներկայացրած տեղեկատվության համաձայն, 2008-2022 թվականների ընթացքում իրականացվել է նորացման հատումներ 1852խտմ³, անցումային հատումներ 20820խտմ³:

2024-33 թվականների համար նախնական ուսումնասիրության արդյունքներով խնամքի հատումներ նախատեսվել են ընդհանուր 350,3հա անտառային հատվածներում, որոնցում ընդհանուր պաշարը 53102խտմ³, հատումների համար նախատեսած ընդհանուր պաշարը 8847խտմ³, իրացման ենթակա պաշարը՝ 7331խտմ³, որից շինափայտի պաշարը՝ 2008խտմ³, վառելափայտը՝ 5323խտմ³:

Լուսավորման և մաքրման հատումներ նախատեսվել են ընդամենը 9,0 հեկտարի վրա, հատվածներում ընդհանուր պաշարը 846խտմ³, հատման նախատեսած պաշարը 197խտմ³, շինափայտը նախատեսվել է սոճուտներում՝ 25մ³:

Նորացման հատումներ նախատեսվել են ընդհանուր 101,0 հեկտարի վրա, հատվածներում ընդհանուր պաշարը 9149խտմ³, հատման նախատեսած պաշարը 1444խտմ³: Հատման ծավալում հիմնականում բոխի, կաղնի, սոճի տեսակներ են, շինափայտի պաշարը՝ 94մ³:

Անցումային հատումներ նախատեսվել են ընդհանուր 240,3 հեկտարի վրա, հատվածներում ընդհանուր պաշարը 43107խտմ³, հատման նախատեսած պաշարը 7206խտմ³, իրացման ենթակա պաշարը՝ 6015խտմ³, որից շինափայտի պաշարը՝ 1889մ³, վառելափայտը՝ 4126խտմ³ (Աղյուսակ 30):

Խնամքի հատման ծավալում ներառված է նաև տվյալ հատվածներում առկա ցցաչոր և արդեն իսկ նկատելի հիվանդ ծառերը:

Թեև տարածաշրջանի անտառներում զգալի է անտառային պտղատու և հատապտղային տեսակների տարածվածությունը, սակայն անտառի կողմարդյունքը անտառտնտեսության կողմից չի մթերվում:

## 14.2 Առաջարկություններ

1. Քայքայված անտառների վերականգնման նպատակով նախատեսած տարածքներում անտառվերականգնման համալիր միջոցառումների իրականացում:
2. Հատված տարածքներում վերականգնված 1-2 հասակային դասերի ծառուտներում իրականացնել լուսավորման և մաքրման հատումներ (մատղաշի խնամք), հեռացնելով ոչ ցանկալի տեսակները՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով հիմնական անտառկազմող արժեքավոր ծառատեսակների համար:

3. Անտառային տարածքների գույքագրման և գնահատման արդյունքներով համայնքների կադաստրային քարտեզագրման հետ բացահայտված անհամապատասխանությունները և ճշտված քարտեզները սահմանված կարգով ներկայացնել՝ համապատասխան գերատեսչություններում ամրագրելու նպատակով:
4. Առանձնակի ուշադրություն դարձնել ճշտված սահմաններով «Գորիս» պետական արգելավայրի տարածքում արգելավայրային ռեժիմի պահպանմանը:
5. Առանձնակի ուշադրություն դարձնել հակահրդեհային միջոցառումների իրականացմանը, հատկապես նախազգուշական, հրդեհաշիջման համապատասխան գործիք-սարքավորումների ձեռք բերմանը, ջրի ամբարտակների կառուցմանը և ճանապարհների բավարար անցողունակությանը:
6. Անտառմշակույթների հիմնում իրականացնել,

- I-IV բոնիտետների 1 հա մակերեսից ավելի բացատներում, 1հա-ից պակասը հիմնականում վերագրել լանդշաֆտային փոքր բացատներին և թողնել ինքնավերականգնման,
- հատված տարածքներում և անթրոպոգեն նոսրուտներում, 1հա-ից պակասը հիմնականում թողնել ինքնավերականգնման,
- հանքայնացման եղանակով բնական վերաճին օժանդակող միջոցառումներ (հարթակների պատրաստում և սերմերի ցանք) իրականացնել նաև անթրոպոգեն ծագման բավարար չվերականգնված ոչ մեծ թեքությունների հատվածներում, ինչպես նաև ցածր լրիվության ծառուտներում:
- Անտառվերականգնման միջոցառումներ նախատեսվող հատկապես համայնքամերձ տարածքները հնարավորության դեպքում մեկուսացնել՝ անասունների արածացումը բացառելու նպատակով: Ցանկապատումը կատարել մետաղյա փշալարով, ինչպես նաև, օգտվելով տեղանքի աշխարհագրական դիրքի ընձեռնած հնարավորությունից, նաև տեխնիկական հատկությունները կորցրած բնափայտով և ջախով:

7. Առաջիկա անտառակառավարման ժամանակաշրջանում բավարար ուշադրություն դարձնել անտառի կողմնարդյունքի օգտագործմանը:

**Քարտեզ 1. «Սյունիքի անտառտնտեսություն» մասնաճյուղի տեղադիրքը**



**Քարտեզ 2. Սյունիքի անտառտնտեսության կառուցվածքն ըստ անտառպետությունների**



**Քարտեզ 3. Սյունիքի անտառտնտեսության ռելիեֆը**



**Քարտեզ 4. Սյունիքի անտառտնտեսության ջրային ցանցը**



**Քարտեզ 5. Անտառտնտեսության քառակուսային բաժանումը**



**Քարտեզ 6. Անտառտնտեսության տարածքն ըստ հողատեսքերի նպատակային նշանակության**



**Քարտեզ 7. Անտառտնտեսության տարածքն ըստ գլխավոր ծառատեսակների**



**Քարտեզ 8. Անտառտնտեսության տարածքն ըստ լանջերի թեքության**



**Քարտեզ 9. Անտառտնտեսության տարածքն ըստ լանջերի կողմնադրության**



## Քարտեզ 10. Անտառտնտեսության տարածքն ըստ տարիքային խմբերի



## Քարտեզ 11. Անտառտնտեսության տարածքն ըստ բոնիտետային դասերի



**Քարտեզ 12. Անտառտնտեսության տարածքն ըստ ծառուտի լրիվության**



## Քարտեզ 13. Անտառտնտեսության տարածքն ըստ հասակային դասերի



## Քարտեզ 14. Անտառտնտեսության տարածքում հանդիպող կարմիրգրքային բուսատեսակներ



**Քարտեզ 15. Անտառտնտեսության տարածքում հանդիպող կարմիրգրքային կենդանիների**



**Քարտեզ 16. Սյունիքի անտառտնտեսության հարակից համայնքները**



## Քարտեզ 17 Անտառտնտեսության ԲԲԱ անտառների



**Քարտեզ 18. Անտառնտեսության տարածքում հանդիպող պտուղ-հատապտուղները**



**Քարտեզ 19. Անտառտնտեսության տարածքում հանդիպող ուտելի խոտաբույսերը**



**Քարտեզ 20. Անտառտնտեսության և հարակից տարածքների պատմամշակութային հարհուշարձանների**



**Քարտեզ 21. Անտառտնտեսության պահաբաժինները**



## Քարտեզ 22. Անտառտնտեսության տարածքն ըստ հրդեհավտանգության դասերի



## Քարտեզ 23. Անտառտնտեսության և հարակից տարածքների ճանապարհների



**Քարտեզ 24. «Գորիսի արգելավայր» ԲՀՊՏ-ի տեղադրությունը**



*Հավելված 2 Սոցիալ - փնփեսական հեփազոփություններ*

Հարցումներին մասնակցել են ընդհանուր հաշվով 105 բնակիչներ՝

- 49 (46,6%) արական, 56 (53,4%) իգական,
- միջնակարգ կրթությամբ՝ 43,8%, միջնակարգ մասնագիտական 23,8%, բարձրագույն՝ 32,4%,
- մինչև 25 տարեկան՝13,3%, 25-40՝ 46,6%,
- 40-ից բարձր ՝ 40,1%,

Ինչպե՞ս եք ջեռուցում բնակարանը.

ա/ Բնական գազ՝ 5 ընտանիք(բազմաբնակարան շենք )

բ/ Վառելափայտ՝ 96 ընտանիք

գ/ Էլեկտրական ջեռուցում՝ 4 ընտանիք

Որքա՞ն վառելափայտ է օգտագործում տարեկան Ձեր ընտանիքը

ա/ մինչև 5մ$^3$՝ 23 ընտանիք(21,9%)

բ/ 5 – 10 մ$^3$՝ 44 ընտանիք(41,9%)

գ/ 10մ$^3$-ից ավելի՝ 30 ընտանիք(28,6%)

ե/ Չգիտեմ՝ 8 ընտանիք(7,6%)

Կողմնակի անտառօգտագործման ո՞ր ձևը կարող է եկամտաբեր լինել Ձեր համայնքի համար

ա) խոտհունձ՝ 6(5,7%)

բ) արածեցում՝ 5(4,8%)

գ) պտուղ- հատապտուղների և ուտելի խոտաբույսերի հավաք՝ 28(26,7%)

դ) զբոսաշրջություն, հանգստի գոտիների ստեղծում՝ 28(26,7%)

ե) մեղվաբուծություն 30(28,5%)

զ) դեղատու բույսերի հավաք

է)չենպատասխանել8(7,6%)

Վճարում ե՞ք արդյոք անտառտնտեսությանը անտառի կողմնարդյունքն իրականացնելիս

ա) այո 0

բ) ոչ 98 (93,3%)

գ)չենպատասխանել...7(6,7%)

*8.* Ձեր ընտանեկան բյուջեի ո՞ր մասն է կազմում անտառի կողմնակի օգտագործումից ստացված եկամուտը

ա) մինչև 10% 35(33,3%)

բ) 10-30% 20(19%)

գ) 30-50% 16(15,2%)

գ) 50% և ավել 7(6,7%)

ե) Չգիտեմ կամ անտառից չեն օգտվում 27(25,8%)

9. Ինչպիսի՞ խոչընդոտներ են առաջանում անտառի այլընտրանքային օգտագործման ժամանակ (նկարագրել խոչընդոտները)

ա) իրավական 0

բ) իրացման 41(39%)

գ) համապատասխան գիտելիքների և հմտությունների պակաս 5(4,8%)

դ) խոչընդոտներ չկան 33(36,4%)

գ) չեն պատասխանել կամ չգիտեն 26(19,8%)
10. Անտառի կողմնարդյունքն իրացնելիս /վաճառելիս/ ունե՞ք արդյոք համապատասխան թույլտվություն
ա) այո o
բ) ոչ 94(89,5%)
գ) չեն պատասխանել 11(10,5%)
11. Մեկ սեզոնի ընթացքում մոտավորապես քանի՞ կգ անտառի կողմնարդյունք(պտուղ,հատապտուղ, սունկ և այլն) եք հավաքում
ա) մինչև 20 կգ 14 (13,3%)
բ) 21-50 կգ 22(20,9%)
գ) 51- 100կգ 38 (36,2%)
դ) 100կգ-ից ավելի 26(24,8%)
ե) չեմ հավաքում 5 (4,8%)
12. Ինչպե՞ս եք իրացնում հավաքված կողմնարդյունքը
ա) իրացնում եք անձամբ 26(24,8%)
բ) տեղում մասնավոր ընկերությունները գնում են Ձեզնից 40(38,1%)
գ) օգտագործում եք միայն անձնական կարիքների համար 34(32,3%)
դ) չեմ հավաքում 5 (4,8%)
այ
13. Կցանկանայի՞ք համագործակցել անտառային տնտեսության հետ, եթե ներկայումս անտառից ստացվող Ձեր եմակուտը չպակասեր
ա) այո 66 (62,8%)
բ) ոչ 23 (21,9%)
5) չեն պատասխանել 16(15,2%)
Ձեր կարծիքով ո՞վ պետք է իրականացնի անտառի կողմնակի օգտագործումը համայնքներում
ա) անտառային տնտեսությունը ՝ 26(24,8%)
բ) համայնքի բնակիչները՝ 56( 53,3%)
գ) համայնքային մասնագիտացած կազմակերպությունները՝ 4( 3,8%)
դ) մասնավոր ընկերությունները՝ 8( 7,6%)
ե) չեն պատասխանել՝15(10,5%)